

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOSOPHY, PSYCHOLOGY

№ 3(48)
2025

«Բանբեր Երևանի համալսարանի, Փիլիսոփայություն, Հոգեբանություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Философия, Психология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета». Three issues of “Journal of Yerevan University. Philosophy, Psychology” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Редакционная коллегия:

Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝

Главный редактор:

Editor-in-chief:

Հարությունյան Էդվարդ (փ.գ.դ., պրոֆ.,
edvardharutyunyan@ysu.am)

Арутюнян Эдуард (д.флс.н., проф.)

Harutyunyan Eduard (Sc. D. in Philosophy,
Professor)

Ավանեսյան Հրանտ (հ.գ.դ., պրոֆ.,
avanesyanh@ysu.am)

Аванесян Грант (д.псих.н., проф.)

Avanesyan Hrant (Sc. D. in Psychology,
Professor)

Բաղրամյան Մարիա (փ.գ.դ., պրոֆ.,
maria.baghramian@ucd.ie)

Баграмян Мария (д.флс.н., проф., Ирландия)

Baghramyan Maria (Sc. D. in Philosophy,
Professor, Ireland)

Բարսեղյան Հակոբ (փ.գ.դ., Դանիաշի,
hakob.barseghyan@utoronto.ca)

Барсегян Акоп (д.флс.н., Канада)

Barseghyan Hakob (Sc. D. in Philosophy,
Canada)

Գոսսերիես Աքսել (փ.գ.դ., պրոֆ., Բելգիա,
axel.gosseries@uclouvain.be)

Госсериес Аксель (д.флс.н., проф., Бельгия)

Gosseries Axel (Sc. D. in Philosophy, Professor, Belgium)

Տափարյան Սեդրակ (փ.գ.դ., պրոֆ., *szakaryan@ysu.am*)

Закарян Сейран (д.флс.н., проф.)

Zakaryan Seyran (Sc. D. in Philosophy,
Professor)

Ժեմոյտել-Պյոտրովսկա Մագդալենա

(հ.գ.դ., պրոֆ., *L.khachaturian, m.zemojtel-piotrowska@uksw.edu.pl*)

Жемойтель-Петровска Магдалена

(д.псих.н., проф., Польша)

Zemojtel-Piotrowska Magdalena (Sc. D. in Psychology, Professor, Poland)

Լուբովսկի Դմիտրի (հ.գ.դ., պրոֆ.,

Л.л.убовский, lubovsky@yandex.ru)

Лубовский Дмитрий (д.псих.н., проф., Россия)

Lubovski Dmitri (Sc. D. in Psychology, Professor, Russia)

Խաչատրյան Նարինե (հ.գ.թ., դոց.,
n_khachatryan@ysu.am)

Хачатрян Нарине (к.псих.н., доц.)

Khachatryan Narine (PhD in Psychology, Associate Professor)

Մոշկովսկայա Մարիաննա (փ.գ.դ., պրոֆ.,
U.S., markosh@uga.edu)

Копкарян Марианна (д.флс.н., проф., США)

Koshkaryan Marianna (Sc. D. in Philosophy, Professor, USA)

Շավերդյան Գայանե (հ.գ.դ., պրոֆ.,
gayaneshahverdyan@ysu.am)

Шавердян Гаяне (д.псих.н., проф.)

Shaverdyan Gayane (Sc. D. in Psychology, Professor)

Պետրոսյան Սիլվա (պատ. քաղաքագիտ.,
փ.գ.թ., դոցենտ, *silva.petrosyan@ysu.am*)

Петросян Сильва (отв. секретарь,

к.флс.н., доц.)

Petrosyan Silva (Executive Secretary, PhD, Associate Professor)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ФИЛОСОФИЯ PHILOSOPHY

- Էդվարդ Հարությունյան** – Ընկալման էկզիստենցիալ համատեքստի ապականումը. մարդը «վիրտուալ տափաստաններում»..... 5
Эдвард Арутюнян – Профанация экзистенциального контекста восприятия: Человек в «виртуальных степях»
Edvard Harutyunyan – Profanation of the Existential Context of Perception: Man in the “Virtual Steppes”
- Գագիկ Սողոմոնյան** – Սպառողական հոգեկերտվածք. էկզիստենցիալ նկատառումներ 18
Гагик Согомонян – Потребительский менталитет: Экзистенциальные соображения
Gagik Soghomonyan – Consumer Mentality: Existential Considerations
- Լևոն Բաբաջանյան** – Էակի բարոյական կարգավիճակի խնդիրը բիո-էթիկայի համատեքստում..... 32
Левон Бабаджанян – Моральный статус существа в контексте биоэтики
Levon Babajanyan – The Moral Status of an Entity in the Context of Bioethics
- Ռուբեն Ապրեսյան** – Պատասխանատվության հասկացությունը Մ. Մ. Բախտինի բարոյական փիլիսոփայության մեջ (ռուս.)..... 47
Рубен Апресян – Понятие ответственности в нравственной философии М. М. Бахтина
Ruben Apressyan – The Concept of Answerability in Mikhail Bakhtin’s Moral Philosophy (in Rus.)
- Վալերիա Սոկոլչիկ** – Գիտական գիտելիքի մարդկայնացման և դրա վերափոխման ավանդական կենսաէթիկական մեխանիզմները բաց գիտության դարաշրջանում (ռուս.)..... 58
Валерия Сокольчик – Классические биоэтические механизмы гуманизации научного знания и их трансформация в эпоху открытой науки
Valerya Sokolchik – Traditional Bioethical Mechanisms for the Humanization of Scientific Knowledge and Their Transformation in the Era of Open Science (in Rus.)

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ПСИХОЛОГИЯ
PSYCHOLOGY

- Գոհար Խաչատրյան, Նարինե Խաչատրյան*** – Հոգեկան առողջության և հոգեառողջական աջակցության (МНРSS) կիրառման փորձը և մարտահրավերները **71**
- Гоар Хачатрян, Нарине Хачатрян*** – Опыт и вызовы применения подхода психического здоровья и психосоциальной поддержки (МНРSS)
- Gohar Khachatryan, Narine Khachatryan*** – The Experience and Challenges of Applying Mental Health and Psychosocial Support (МНРSS)
-
- Հայկ Հարոյան, Նելլի Հարոյան*** – Միստիկ է արդյոք Գրիգոր Նարեկացին..... **81**
- Айк Ароян, Нелли Ароян*** – Мистик ли Григор Нарекаци?
- Hayk Haroyan, Nelli Haroyan*** – Is Grigor Narekatsi a Mystic?
-
- Լուսինե Ղազարյան*** – Ինտերնետային կախվածության ձևավորման մասնագիտական նախադրյալների համեմատական վերլուծություն..... **91**
- Лусине Казарян*** – Сравнительный анализ профессиональных предпосылок формирования интернет-зависимости
- Lusine Ghazaryan*** – Comparative Analysis of Professional Characteristics of Internet Addiction Formation

ԸՆԿԱԼՄԱՆ ԷԿՁԻՍՏԵՆՑԻԱԼ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ԱՊԱԿԱՆՈՒՄԸ. ՄԱՐԴԸ «ՎԻՐՏՈՒԱԼ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ»

ԷԴՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Կյանքի կազմակերպման մշակույթը ընկալման համատեքստ է, ինչը մարդուն հնարավորություն է տալիս աշխարհը տեսնելու և քննելու իր ամբողջականության մեջ և նրա մի անկյունում կառուցելու գոյաբանական անվտանգության իր «ապաստարանը»: Բայց կյանքը հնարավորությունների փնտրտուքի մի անավարտ դրամա է, որի ինչ-որ հանգույցում արմատական փոխակերպումներն ու հնարավոր ապականոնները համակեցության մշակութային համատեքստում կարող են մարդուն զրկել իր էմպիրիկ որպիսությունը բնութագրող այն գործոններից, որոնք նախկինում քիչ թե շատ ճշգրտությամբ ուրվագծում էին նրա կյանքի ներկան ու հեռանկարը, ինքնավարության չափն ու սահմանը: Խնդիրն այն է, որ ընկալման յուրաքանչյուր համատեքստ ունի նաև իրեն բնորոշ մի շարք մշակութային «հիվանդություններ», որոնք ոչ միայն կարող են ներսից կազմաքանդել տվյալ դարաշրջանի գոյաբանական «ապաստարանի» սոցիալական ու մարդաբանական հիմունքները, այլև մարդուն զրկել բնագանցական ու անդրանցական էությունից:

Այս իրողությունից ելնելով՝ հողվածում արդի անհատապաշտական (ինքն իրեն կողմնորոշված) հասարակության գոյաբանական կարգը դիտարկվում է իբրև «միասին ծերանալու» ընդհանրական մշակութային համատեքստ չունեցող մի համակեցություն, որտեղ մարդու ինքնավար կեցության կորստի միտումներն այլևս մարդաբանական մասշտաբի մարտահրավերներ են և ակնհայտորեն խաբխրում են կյանքը տեսանելի հորիզոնում ապրելու՝ մարդու գոյության երբեմնի հիմունքները:

Բանալի բառեր – *կյանքի մշակույթ, գոյաբանական կարգ, մշակութային համատեքստ, ինքնավարություն, հնարավորությունների հասարակություն, վիրտուալ աշխարհ, քոչվորական իրականություն, էկզիստենցիալ բեռնաթափում*

* **Էդվարդ Հարությունյան** – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի վարիչ
Эдвард Арутюнян – доктор философских наук, профессор, зав. кафедрой социальной философии, этики и эстетики ЕГУ

Edvard Harutyunyan – Sc. D. in Philosophy, Professor, Head of the Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics YSU

Էլ. հասցե՝ edvardharutyunyan@ysu.am <https://orcid.org/0000-0003-2957-7017>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 01.09.2025

Գրախոսվել է՝ 05.09.2025

Հաստատվել է՝ 24.10.2025

© The Author(s) 2025

Մշակույթի մեջ ամփոփված փորձառություններ կան, որոնք արգելափակում են մարդու ներքին կերպարանափոխության հնարավորություններն ու ստիպում նրան, հակառակ իր բնությանը, համակերպվել ու հնազանդ սպառվել նախնիներից ժառանգած սոցիալական ճակատագրի միօրինակության մեջ: Սա նշանակում է, որ կյանքը կանոնակարգող ցանկացած գոյաբանություն մարդկանց հավաքագրող ու համախմբող, նրանց կյանքի անձնական տարածք ներխուժելու իրավասություններ ունեցող սոցիոմշակութային մի համակարգ է, որի մեջ իսպառ տարրալուծված ու ապաանձնավորված մարդու միջին վիճակագրական տեսակը հարկադրված է ենթարկվել ու համակերպվել ուրիշների կյանքի մանրամասներին խառնվելու և միջամտելու միջոցով համակեցություն բեմականացնող մշակույթի սահմանած կարգին: Մի իրողություն, ինչը վկայում է, որ մարդը տվյալ սոցիոմշակութային համատեքստում ձևավորված մի կազմավորում է, որի բաղադրիչ տարրերը ներծծված են տվյալ գոյաբանական կարգի ներքին իմաստների միասնությամբ: Բնքնին հասկանալի է, որ այս պարագայում գոյաբանական կարգի մարդակենտրոն լինել-չլինելու, այլընտրանքներ ընդունել-չընդունելու հանգամանքներն ածանցյալ են տվյալ պատմական դարաշրջանի ընդհանրական հոգեկրտվածքը ձևավորող մշակութային համատեքստի հուզական ու կամային խորությունից:

Այս առումով, օրինակ, նախորդ սերունդների ամբարած հիշողություններին ու ապրումներին, մոգական հավատալիքներին ու սովորույթներին, անցյալը, ներկան ու ապագան ամբողջացնող պատումներին, մի խոսքով՝ **Հավատի ու Բարոյականության** մշակութային համատեքստում ձևավորված և **«նախնիներին կողմնորոշված»** կոլեկտիվապաշտ հասարակություններում պատմական տարբեր ժամանակներում ու տարածություններում ապրած, բայց նույն գոյաբանական կարգին ենթակա նախնիներն ու նրանց հետնորդները այնքան խիտ են «ներառված միմյանց կենսագրության մեջ», որ ասես այստեղ ու հիմա «միասին ծերացող» ժամանակակիցներ լինեն¹: Բնքնին հասկանալի է, որ «միասին ծերացողների» համար հուսալի ու ապահով «ապաստարան» հիշեցնող այդ համակեցության մեջ մարդու սոցիոմշակութային տեսակը ձևավորվում է իր տոհմիկ նախնիների մշակութային խորքերից սնվող և արքետիպերից բխող կենսափորձի հոգեբանական նստվածքից: Մի ժառանգություն, ինչից էլ հենց հունցվում է ավանդապաշտ հասարակություններին բնորոշ՝ ապրելու և մահվանը դիմակայելու կոլեկտիվ ունակությամբ օժտված, ժամանակի մեջ մյուսներից առանձնապես չտարբերվող և միշտ ինքնանույնական (**նույն ինքն է**) մարդու անհատական կերպարը: Այլ կերպ ասած՝ դա մի համակեցություն է, որտեղ նախնիները «սովորույթի ուժով» կարող են ոչ միայն խառնվել ու միջամտել այստեղ ու հիմա ապրող այլոց կյանքի մանրամասներին, այլև նրանց գրկել «ուրիշությունից» և կյանքն այլ կերպ դասավորելու հեռանկարից: Ընդ որում, ժամանակի

¹ Sté' u Гирц К. Интерпретация культур. М., 2004, էջ 419- 420:

ընթացքում սովորույթի ուժով կյանքը կանոնակարգող «խաղի կանոնները» որքան ձևայնացվում են, որքան խստանում են ողջախոհության տրամաբանությունից դուրս անհարկի միջամտությունները, այնքան համակեցությունը ցեմենտող, կեցության ենթակայությունից մարդուն ազատագրած, նրան բնագանգական ու անդրանցական էություն ներարկած **Հավատի ու Բարոյականության** համատեքստը ծանրաբեռնվում է կյանքը մակերեսում կանոնակարգող միապաղաղ արարողակարգերով, որոնց անտրտունջ ենթարկվելու գինը բնավ էլ համարժեք չէ այդ «գործարքի» արդյունքում մարդու կրած էկզիստենցիալ կորուստներին: Առավել ևս, որ կյանքի կազմակերպման ու կանոնակարգման այդ մշակույթում գոյաբանական անճարակությունից ախտահարված մարդը վերջնարդյունքում կարող է վերածվել նաև եսությունից ու ինքնավարությունից զրկված, պատկերավոր ասած՝ հնազանդ ու կամակատար «իդեալական» մի բանտարկյալի², որի իրական ու դժվարությամբ նույնականացվող վիրտուալ կյանքում շրջանառվող «կշռադատված ու ողջախոհ» պահանջմունքների ու ցանկությունների, առօրյա կարիքների ու հոգսերի հետևում գոյության էկզիստենցիալ նկատառումներ գրեթե չկան կամ ստվերված են և չեն արտացոլում մարդու ակնկալիքների (**ուզում եմ**) ու դժգոհությունների (**չեմ ուզում**) իրական շարժառիթները: Ինքնին բնական մի կացություն, որովհետև կյանքի խորին խորքերում ձևավորված արքետիպերից ու անցյալի այլևայլ հուզական փորձից սնվող, մի խոսքով՝ անցյալի ավանդույթներին ու խստակյաց կենցաղին ենթակա մարդու այդ տեսակին պարտադրված է արդեն իսկ բարեբախտություն համարել իր գոյությունը և գոյել իբրև տվյալ համակեցությունը կանոնակարգող մշակույթին հավատարիմ, նախնիների ապրած պատմությունը կրկնող և մշտապես ինքն իրեն նույնական կրավորական կեցություն:

Բայց կյանքի կազմակերպման մշակույթների հերթափոխման պատմությունը փաստում է, որ կեցության տաճարը գաղափարախոսական նախագծերին (տեսություններին) ենթարկելու համար չափազանց բարդ ու «քմահաճ» կառույց է, որովհետև այն նաև ու առաջին հերթին ամենօրյա գոյության հյուսվածքի մեջ ներծծված և առավելապես ողջախոհության տրամաբանությանը ենթակա էմպիրիկ (օնտիկ) կամ գործունեական կեցություն է, որտեղ իրականի և հնարավորի, «այստեղի» ու «երբեքի» միջակայքում կյանքը մշտապես լարված բնույթ ունի, և որտեղ առօրյա մարտահրավերներին ու անհետաձգելի պահանջմունքներին առերեսվող, գոյատևման կենսական խնդիրներ լուծող և, վերջապես, խոսքին ու գործին հարկադրաբար չափ դրած «իդեալական բանտարկյալն» անգամ սոցիալական հանգամանքների իմաստավորման և անգիտակցականը գիտակցական դարձնելու ճանապարհին կարող է չանձնավորված կեցությունն անձնավորել, չեղարկել նախնիների «բարոյական աքսորի» դատավճիռն ու հիմնադրել մի աշխարհ, որտեղ հնարավորություն կունենա տվյալ գոյաբանական

² См. у Тульчинский Г. Д. Потсчеловеческая персонология. СПб., 2002, էջ 450:

կարգի գաղափարախոսության հարկադրանքներին իսպառ ենթակա իր **կրավորական ինքնությունը** փոխակերպելու էկզիստենցիալ անդրադարձումների ունակ **նախահարձակ ինքնություն**:

Բանն այն է, որ հոգեկերտվածքի անիմանալի խորքերում նախնիների կոլեկտիվ փորձը մարմնավորող արքետիպերին կամ, ինչպես Յունգը կասեր, դիցաբանական պատկերներին ու կերպարներին հավատարիմ մարդը, որին նախնիները պատգամել են հավատարիմ ծառայել իրենց հիմնադրած գոյակարգի հնամենի տաճարին, միաժամանակ նաև ինքն իրեն և այլոց ի բնուստ «անհավատարիմ», այլակերպումներում իր արարչական իսկությունը փնտրող և մշտապես անավարտ՝ հենց միայն մարդուն ներքնորեն բնորոշ **Վիճարկող** է, ով նաև ինքնահաղթահարման կամք ու կորով ունի (Նիցշե) և կարող է թոթափել կենդանականին բնորոշ ու միտքը կարկամող անմեղսունակության բեռն ու դառնալ Հողին կառչած, բայց և առ Աստված հայող **բնագանցական մեծություն** միաժամանակ:

Այդ «ինքնաբացարկումը» տեղի է ունենում այն ժամանակ, երբ «այնտեղ ու հետո» երկրային կամ երկնային ենթադրյալ «դրախտում» հայտնվելու համար սոցիալական ճակատագրին համակերպված և խստաշունչ ներկայի գոհասեղանին կյանքը հարկադրաբար դրած մարդը գիտակցում է, որ իր համար իմաստ ու նշանակություն ունեցող աշխարհում ապրելու և էկզիստենցիալ անկախություն ունենալու համար ոչ միայն պետք է ընդվզել իր անձնական կեցության և մասնավոր կյանքի տարածքը զավթած և «գորանոցային» կարգ հաստատած գոյաբանության դեմ, այլև ուրախությամբ կամ դժկամությամբ, հեշտությամբ կամ դժվարությամբ, բայց «այստեղ ու հիմա» ակնթաթթում ապրել ինքնաբուխ ընթացող իրադարձությունների հորձանուտում և դեռ ինքնիշխան ապրելու իր կենսափիլիսոփայությունը տարածել նաև Ուրիշների վրա՝ չենթարկվելը դարձնելով սեփական գոյության գոյաբանական փաստարկ³: Ընդ որում, մարդու էկզիստենցիալ այդ տեսակը ոչ թե պարզապես ինքնապարծ վիճարկող է, այլ սեփական կեցության կազմակերպման մեջ լիովին ինքնորոշված, իր եզակիությունը գիտակցած, իրեն անհարմարություններ պատճառող ուրիշների խորթությունը շփման ու երկխոսության միջոցով հաղթահարող և մարդաբանական ու սոցիոմշակութային մակարդակներում նրանց իր գոյության երաշխիք գործածող «Ես» է: Այս առումով կարելի է ասել, որ սոցիոմշակութային մակարդակում իրականության հետ անհաշտ էկզիստենցիալ Ես-ը անհնարինը հնարավոր դարձնելու ճանապարհին կեցության հնարավորությունների գանձարանից օգտվող, նրա հետ հարաբերակցման եղանակն ու ձևն անձամբ որոշող, այս ու այնտեղ ընդվզող և կյանքի նոր հեռանկարներ ուրվագծելու երազանքներ ունեցող մարդու այն տեսակն է, ով ներքնորեն օժտված է սոցիալական կեցություն ու կացություն ձևավորելու, դրանց

³ St' u Батай Ж. Проклятая часть: Сакральная социология. М., 2006, էջ 354:

մեջ ու միջոցով նաև սոցիալական ինքնավարություն ձեռք բերելու գոյաբանական անբացատրելի հատկությամբ և կարող է հնարավորությունների ու հավակնությունների իր զորագնդով քարուքանդ անել բախտի բարիկադներն ու իրեն հռչակել սոցիալական անհատականություն:

Հանգամանք, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ մարդու երկրային ներկայությունը, այնուամենայնիվ, առանց բավարար հիմունքի գոյության և ուրիշը դառնալու եզակի մի հայտնություն է այս աշխարհում, քանի որ միակ բնականացական մեծությունն է, ով, ի տարբերություն այլ կենսաբանական էակների, կարող է գերազանցել իրեն փակագծերի մեջ առած ու իր նվիրական ձգտումներին չարձագանքող աշխարհին և դեռ իրեն բաժին հասած դժվարությունների ու դժբախտությունների շաղախից երջանկության նման մի բան հունցել: Այլ կերպ ասած՝ կեցության համատեքստում բնական հնարավորություններով օժտված մարդու «բնագիրը» կամ անհատական ինքնությունը (**ես այսպիսին եմ**) «խմբագրվում» ու բնականացական մեծություն է դառնում այն ժամանակ, երբ սոցիալական գոյաբանության համատեքստում «**ընդհանրական ուրիշին**» ինքնավերագրվելու և նրան նույնականանալու արդյունքում ձևավորվում է ժամանակի ու տարածության մեջ էապես այլակերպված իրադրային ու խոտվահոյզ մի եսություն, ով թեև առերևույթ նույնական է նախնիներից ժառանգած իր բնագիր անհատականությանը (նույն ինքն է), բայց իրականում նրանից էապես տարբերվող մի նոր եսություն է, ով տվյալ համակեցությունը ներկայացնող սոցիալական «խոսնակի» իրավասություններ է նվաճել (**ես այսպիսին դարձել եմ**) և այսուհետ կարող է ինքնակամ «խմբագրել» նաև կյանքի դրվածքն ու այն դարձնել այլընտրանքային:

Մարդուն ներքնապես բնորոշ այդ երկվությունից բխում է, որ իրար չհամընկնող, բայց հիմքի ու վերնաշենքի ամբողջականությունը խորհրդանշող անհատական (բնագիր) ու սոցիալական (խմբագրված) ինքնությունները մարդու «կյանքի պատմության» մեջ դրսևորվում են իբրև պատմողական (նաբատիվ) հորինվածքի փոխլրացնող բաղադրիչների մի համաձուլվածք (Ռիկյոր), որում վերնաշենքը ներկայացնող բաղադրիչը (խմբագրվածը) բացառապես մշակութակերտ, պատմական կոնկրետ դարաշրջանի կյանքի կազմակերպման ու կանոնակարգման մշակույթի համատեքստում կայուն միջուկ և դերային դինամիկ համալիր ունեցող եսություն է, ով սոցիալական ինչ-ինչ դերերի մեջ մարմնավորման շնորհիվ կարող է օգտվել կեցության ընձեռած հնարավորություններից և սոցիալական համատեքստի պարտադրանքներին իր ինքնաբերական ու տարբերային հակադարձումները փոխակերպել սոցիալական շահերը գիտակցող մարդու ինքնավարության՝ հիմնովին փոխելով նաև համակեցության մշակութային համատեքստը:

Բանն այն է, որ ինքնավարությունը ոչ միայն նվաճված, այլև ուրիշների համաձայնությամբ արտոնված կարգավիճակ է, և մարդն այդպիսին կարող է լինել միայն այն պարագայում, եթե ուրիշներին (սոցիալականին) վերաբերվի

նույնքան ընդգծված հոգածությամբ ու անվերապահ հարգանքով, որքան ակնկալում է, որ այդ ուրիշները (սոցիալականը) ընդգծված հոգածությամբ ու անվերապահ հարգանքով ընդունեն ու ճանաչեն իր գոյության անձնական տարածք ունենալու և սեփական կյանքը նախագծողի ու որոշումներ կայացնողի հեղինակային իրավունքները: Սա նշանակում է, որ բնագանգական մարդը սոցիալական այլընտրանքների աշխարհում ինքնաանդրադարձող, սեփական հնարավորությունները իմացող, **իրեն հավատացող և ուրիշներին վստահող** մի սուբյեկտ է, ով նաև չունի ներքին ինքնիշխան տարածք և ուրիշների առջև բացվելով միայն կարող է գիտակցել ու ճանաչել իրեն: Հավելենք նաև, որ մարդու սոցիալական կեցությունը հաղորդակցական է, և նրա լրիվությունն ու ամբողջականությունը ձևավորվում ու բացահայտվում են միայն ուրիշների հետ հաղորդակցվող սոցիալական դեր ստանձնած մեկ այլ «Ես»-ի մեջ մարմնավորման ընթացքում: Գոյել, կասեր Մ. Բախտինը, նշանակում է հաղորդակցվել, լինել ուրիշների համար և նրանց միջոցով նաև իր համար⁴:

Ինքնին բնական մի բան, որովհետև, եթե մարդը չունենա գործող գոյաբանական կարգի կողմից համբաված սոցիալական ինքնության իրավասություններով օժտվածի դեր ու կարգավիճակ, չհաղորդակցվի այլոց հետ և չապրի տվյալ համակեցության «խաղի կանոններով», ապա նրան ներսից բզկտող անձնական ու սոցիալական կենսադիրքորոշումների ու գաղափարահակումների, կեցության ու գոյության, իդեալական ու իրական արարքների հնարավոր տարբերությունների պատճառով կարող է օտարվել թե՛ իրենից, թե՛ ուրիշներից և թե՛ սոցիալական կյանքից ընդհանրապես: Առավել ևս, որ մարդու ներաշխարհը չտարբորշված իրավասություններ ունեցող, հետևաբար՝ պարբերաբար ներանձնային ճգնաժամեր հարուցող անհատական ու սոցիալական ինքնությունների մի համաձուլվածք է, որի բաղադրամասերից յուրաքանչյուրը ոչ միայն տարբեր պատմական ժամանակների մշակութային շաղախից հունցված և ինքնավարության տարբեր համատեքստերում կերպարանավորված ինքնություններ են, ոչ միայն տարբեր են կեցության հետ ունեցած նրանց առնչություններն ու խնդիրները, այլև կարող են նույն դիպվածից այլ ընկալումներ ունենալ և այլ քայլեր ձեռնարկել:

Բավական է նկատել, որ, օրինակ, մշտապես ինքն իրեն անհավասար և անդրադարձումներ անելու էկզիստենցիալ կարողություններով օժտված մարդու եսությունը օժտված է ինքնավար գործունեության այնպիսի ունակություններով, որ իր հավակնությունները սոցիալական դերի հետ լծորդելու արդյունքում կարող է լինել ու գոյել ոչ միայն «այստեղ ու հիմա», այլև «այնտեղ ու հետո» նախատեսվող գալիք մի ապագայում⁵: Բայց գալիք մի ապագայում գոյելու այդ նախատրամադրվածությունը, ինչը, բարեբախտաբար, մարդուն թույլ չի տալիս

⁴ Տե՛ս **Бахтин М. М.** Эстетика словесного творчества. М., 1979, էջ 312- 313:

⁵ Տե՛ս **Сартр Ж.-П.** Бытие и ничто: Опыт феноменологической онтологии. М., 2000, էջ 156:

հիմնովին ու վերջնականապես ամրագրվել ներկայի հոդում, կարող է նաև ինքնության ճգնաժամեր հարուցող դրդառիթ դառնալ, քանի որ անդրադարձումների ընդունակ, իրեն «նախագծող» և իր «ով» և «ինչ» լինելու համար պատասխանատու սոցիալական ինքնության՝ կյանքի սոցիալական ու բնութենական հանգամանքները փոխելու նախաձեռնությունները մարդու «բնագիրը» ներկայացնող կրավորական ինքնությունը կարող է ընկալել ու մեկնաբանել որպես իր իսկությունն աղարտող սպառնալիք ու գոյաբանական աղետ⁶:

Խնդիրն այն է, որ կյանքը հնարավորությունների փնտրտուքի մեջ ծավալվող շարունակական դրամա է, որի ինչ-որ հանգույցում գործող կացութաձևն ու նրանում մարդու ինքնաընկալման ու ինքնաճանաչման սոցիալական պայմանները երբեմն կարող են այնքան հիմնովին փոխվել կամ ձևախեղվել, որ նա ակամա գրկվի իր էմպիրիկ որպիսությունը բնութագրող գործոնների՝ սոցիալական տարածության ու ժամանակի, ծագման ու կարգավիճակի, մի խոսքով՝ այն ամենի տնօրինումից, որոնք նախկինում քիչ թե շատ ճշգրտությամբ ուրվագծում էին նրա կյանքի ներկան ու հեռանկարը, ինքնավարության չափն ու սահմանը: Հանգամանք, ինչն առավել ցայտուն դրսևորումներ ունեցավ ավանդականից հետավանդականին անցած ազատական մշակույթի համատեքստում ընթացող մարդաբանական ու սոցիոմշակութային ժամանակակից այլակերպումներում:

Քաղաքակրթական առումով նմանը չունեցող այդ նոր գոյաբանությունը ոչ միայն հիմնովին փոխեց նախորդ համակեցության էկզիստենցիալ հիմունքները, ոչ միայն մարդկային հարաբերությունները ցեմենտող բարոյականության հնամենի մակարդը փոխարինեց բանականության մակարդով, այլև հենց այդ պատճառով «նախնիների կողմնորոշված», գտածից ու կորցրածից միաժամանակ և՛ հրճվող, և՛ սոսկող մարդու փոխարեն ասպարեզ հանեց **ինքն իրեն կողմնորոշված** ու ինքնապարծ մի էություն, որի վարքն ու արարքն այսուհետ գնահատելու է ոչ թե իր նախնիներին ներկայացնող հավատավոր ու բարոյական ընդհանրական Ուրիշը, այլ հենց իրեն պատկանող և իր ներսից բխող **բանականության** կամ **համոզմունքի «ձայնը»**:

Ավելին, այլընտրանքների ու հնարավորությունների մի ամբողջ խճանկար ասպարեզ հանած կյանքի անհատապաշտական մշակույթը, այլևայլ արտոնված շուկաներից գատ, ձևավորեց նաև «հնարավորությունների արտադրության մի շուկա», որտեղ սպառողը կարող է իրագործելի նորանոր ցանկություններ «գնել» և դրանք դարձնել «այստեղ ու հիմա» ընթացող կյանքի ծրագիր: Այլ կերպ ասած՝ համակեցության այդ նոր մշակույթը ձևավորեց պահանջմունքների ու սպառման տրամաբանությանը ենթակա կամ, ինչպես ընդունված է ասել, «հնարավորությունների արտադրության» մի աշխարհ, որտեղ կյանքի պայմաններից ու կարգավիճակից դժգոհ ու դիմադրող մարդը հավանական ու

⁶ Ст' у Хёсле В. Кризис индивидуальной и коллективной идентичности // Вопросы философии. 1994, № 10, էջ 15:

իրագործելի գոյության մեկ այլ տարբերակ փորձարկելու հնարավորություն ստացավ: Ընդ որում, եթե «նախնիներին կողմնորոշված» և նրանց բարոյական ավանդները ժառանգած մարդը պարտավոր էր իր ցանկությունները ենթարկել դավանվող արժեհամակարգի պահանջներին, ապա ինքն իրեն կողմնորոշված և ինքն իրեն նախագծող ժամանակակից մարդը հաշտեցման ինչ-ինչ ընթացակարգերի միջոցով ձևավորել է խաղաղ գոյակցության ժամանակակից մի համակեցություն, որտեղ քմահաճույքներ ու բազմազանություն խաղաղ կող տարածության ընդլայնմանը գուգահեռ՝ նվազում է համասեռություն ենթադրող երբեմնի «խաղի կանոնների» բարոյական ենթատեքստը, և որտեղ Ուրիշները կարևոր ու անհրաժեշտ են սոսկ այն պատճառով, որ կատարում են մետաֆիզիկական ու էկզիստենցիալ բեռնաթափման գործառույթ⁷:

Արդյունքում՝ հավատի ու բարոյականության պարտավորություններով ծանրաբեռնված, միասեռության մեջ տարրալուծված ու նաև «կշռադատված ու ողջախոս» պահանջմունքներին ենթակա՝ երկու ծայրահեղ պարզունակ կամընտրանքների միջակայքում ապրող մարդը, նա, ով կա՛մ պետք է համակերպվեր «այստեղ ու հիմա» ապրելու կյանքի սոցիոմշակույթի դրվածքին և մնար կյանքի սանդղակի ստորին աստիճանում, կա՛մ տրվեր իր կենսահակումները շահարկող՝ «այնտեղ ու հետո» անհավանական երկնային ու անիրագործելի երկրային «Դրախտ» կառուցելու գաղափարաբանությունների սադրանքներին, հայտնվեց առերևույթ իրագործելի ցանկություններ ու այլևայլ քմահաճույքներ արտադրող ու խաղարկող, դրանց բավարարման հնարավորությունների տարատեսակ միջոցներ (ապահովագրություն, ապառիկ գնումներ, վարկեր և այլն) առաջարկող, ըստ էության՝ ապրելակերպի որակի համար ծախսերի հատուցումը վաղվանը թողած մի աշխարհում, որտեղ «ցանկություններ ցանկանալը» ներծծված է ամենօրյա գոյության հյուսվածքի մեջ և իր հերթին խթանում է այլ ենթադրելի ցանկություններ՝ կյանքը վերածելով իրականությունից ամեն կարգի պայմանական ու ենթադրելի հնարավորություններ «քամելու» արվեստի⁸:

Իրականության հարուցած դժվարությունների ու հոգսի մեջ ապրած, անգամ ուրախության ու վշտի մեջ խնայող ու չափավոր «միջին վիճակագրական մարդը» իրագործելի ցանկությունների այդ սարդոստայնում ապրելու «հրավերքից» հազիվ թե հրաժարվեր, որովհետև նրան հնարավորություն էր տրվել օբյեկտիվ հիմքերից զուրկ՝ պատահականությունների սահմանի վրա օգտվելու առօրյա կյանքին ենթադրական երանգներ հաղորդող ծառայություններից (ապահովագրություն, ապառիկ գնումներ, վարկեր և այլն) և ապրելու իր

⁷ Ст'ю Хюбнер Б. Произвольный этос и принудительность эстетики. Мн., 2000, էջ 116, 148:

⁸ Ст'ю Эпштейн М. Философия возможного. Модальности в мышлении и культуре. СПб., 2001, էջ 191-193:

սոցիալական դերին, դիրքին ու վաստակին անհամապատասխան «բարեկեցիկ» կյանքով և, վերջապես, հափրանքով վայելելու այն ամենը, ինչը դեռ իրենք չէ և միայն հետո կարող է սեփականացնել⁹:

Դժվար չէ տեսնել, որ կեցության էկզիստենցիալ հիմունքները ցանկությունների մեքենայի (Ժ. Դեյդո) ախորժակին հանձնած, իրականի ու անիրականի միահյուսումից ձևավորված սոցիոմշակութային կեղծանմանակումների այդ հարթակում երբեմնի իրատես ու ինքնարար սուբյեկտի կարգավիճակ ունեցող մարդն աստիճանաբար վերածվում է իրեն պարտադրված կեցության եղանակին նույնականացված կերպար հիշեցնող միաչափության, ով նաև մարդաբանական հիմունքներով կառուցարկված և իրեն երբեմնի ենթակա աշխարհի փոխարեն ստիպված է ապրել իրենից օտարված մի աշխարհում, որին խոնհարվելով ու հնազանդվելով միայն կարող է գոյատևելու ակնկալիքներ ունենալ¹⁰: Ավելին, առերևույթ ազատ, բայց խորքում մարդու ցավերին ու հոգսերին անհաղորդ, պարտադրված ցանկություններ ու պահանջումներ արտադրող առարկայական ու գործնական այդ աշխարհում ինքնահղման անդրադարձական փորձերի ճնշումների ու անձնական կյանքի տարածք բողբոջված ներխուժումների արդյունքում ի վերջո ձևավորվում է ընդամենը մեկ անգամ օգտագործվելու համար նախատեսված, «կարճաժամկետ» հոգեկերտվածք ունեցող, լուսանցքային ու **«հավատարաց»** մարդկանց մի բազմություն, ովքեր աշխարհը ընկալում են որպես օգտակար առարկաներով լցված խորդանոց կամ «հանրախանութ», որտեղից այստեղ ու հիմա պետք է վերցնել ու սպառել ամեն հնարավորը, նախասիրությունները բավարարելու մեկ հնարավորությունից անցնել մյուսին, քանի որ «հետոն» կարող է չգալ, կամ էլ եղածը կարող է լիովին արժեզրկվել¹¹: Էլ չասած, որ շատ դեպքերում ներկայացվածը ոչ թե սպառողի ճաշակին ու նիստուկացին համապատասխան ու խիստ անհրաժեշտ ապրանք-տեսականի է, այլ ընդամենը հանրաճանաչ ապրանքանիշ է (բրենդ), ինչի գովազդումը ապրանքի է վերածում նաև մարդկանց զգացմունքներն ու ճաշակը՝ առաջարկն ու պահանջարկը վերածելով նշանների միջոցով պարբերաբար մանիպուլյացիաներ անելու գործունեության:

Ավելին, այն պատճառով, որ սոցիոմշակութային արժեքներն ու կենսափորձը կեղծանմանակներով (սիմուլյակրներով) փոխարինած և «օտարված նշանների» աշխարհ (Բոդրիյար) ձևավորած վիրտուալ իրականությունը լիովին չի կարգավորվում սոցիալականի կանոններով ու մեխանիզմներով, այդ պատճառով էլ այն գոյաբանական պատասխանատվության ոլորտից դուրս մի համակեցություն է, որի մեջ ներառվելու համար մարդը հարկադրված է ժամանակավորապես հրաժարվել իր հիմնական կարգավիճակից և չլինել այնպիսին, ինչպիսին լինում է սովորական կյանքում: Մի համակեցություն, երբ

⁹ Տե՛ս Բոդրիյար Ժ. Система вещей. М., 2001, էջ 170 -172:

¹⁰ Տե՛ս Թարկուզ Գ. Эрос и цивилизация. Одномерный человек. М., 2003, էջ 275:

¹¹ Տե՛ս Բաумան Զ. Индивидуализированное общество. М., 2002, էջ 148:

«ես»-ի ու «դու»-ի մարդկային դիմանկարը շնչավորող հույսի և հուսահատության, սիրո և ատելության և նմանատիպ այլևայլ երանգներով նրբորեն ասեղնագործված էկզիստենցիալ գոյաբանության աշխարհին աստիճանաբար ու աննկատ արտամղվում է մարդկային կեցության արվարձաններ՝ ասպարեզը թողնելով անորոշ ու անդեմ «Այլի» առարկայական աշխարհին¹²:

Ինչ խոսք, մարդը երկու աշխարհների բնակիչ է միաժամանակ և ապրում է ինչպես «ես»-ի ու «դու»-ի անձնավորված հարաբերությունների աշխարհում, այնպես էլ անըմբռնելի, անդեմ ու պատճառական կապերի տրամաբանությանը ենթակա մի աշխարհում (փորձի աշխարհ), որը նաև անհաղորդ է մարդու ցավերին ու տագնապներին և չի կարող նրա փոխարեն ապրել նրան բաժին հասած ճակատագիրը¹³: Գոյաբանական մի համակարգ, որտեղ «ես»-ը ոչ թե իր նման աշխարհ նետված և ճակատագրով իրեն համարժեք դիմավորների հետ գործ ունի, որոնց միջոցով ավանդապաշտ հասարակության մարդը բացահայտում ու ճանաչում էր իր անհատական ու սոցիալական ինքնությունը, այլ ինչ-որ անորոշ ու անդեմ սոցիալական **«այլոց»** հետ, ովքեր ոչ թե մարդկային բովանդակություն ունեցող սուբյեկտներ են, այլ ընդամենը ընկալման դաշտի կառուցվածքը ներկայացնող և այլությունն ընդգծող անանձնական դերեր են¹⁴:

Ի հավելումն ասվածի՝ ժամանակակից տեխնոլոգիական քաղաքակրթությունը ձևավորել է նաև վիրտուալ հնարավորությունների մի նոր «հանրախանութ», որտեղ բացվում է նյութական բարիքների համար պայքարում մրցակցությունից դուրս մնացած, բարդությունից տառապող, երկչոտ ու անվճռական մարդկանց «երկրորդ շնչառությունը», և նրանք հնարավորություն են ստանում զանազան հատորագրությունների միջոցով ինչ-որ չափով ինքնաիրացվել և առերևույթ ընդլայնել իրենց կյանքի սոցիոմշակութային սահմանները: Ճիշտ է, նրանք ընդամենը սոցիումի տեղեկատվական տարածության մեջ դեգերող մասնավոր շահառուներ են, բայց նաև ընդօրինակելի միակերպություններ են, և հանրային կյանքում նրանց դերն ու ազդեցությունը գնալով մեծանում են: Այս առումով կարելի է ասել, որ արդեն իսկ ձևավորվել է **«ցանցային քոչվորությունը»** խրախուսող վիրտուալ մի իրականություն, որի մեջ սոցիալականի հարկադրանքներից ու վերահսկողությունից դուրս մնացած և նստակյաց կյանքի հիմունքներից ինքնակամ կամ ճարահատյալ հրաժարված մարդն ասես տեքստի կամ մշակույթի մակերևույթի երկայնքով՝ պատկերների տարածության մեջ սահող կերպար լինի¹⁵, ում նաև զրկել են գոյաբանական անվտանգությունից ու անձնական կյանքի իրավունքից: Բանն այն է, որ ֆիզիկական գոյատևման անհ-

¹² Տե՛ս Բյոբեր Մ. Два образа веры. М., 1999, էջ 26:

¹³ Տե՛ս Օրтега-и-Гассет Х. Дегуманизация искусства. М., 1991, էջ 262:

¹⁴ Տե՛ս Делез Ж. Логика смысла. СПб., 1999, էջ 282:

¹⁵ Տե՛ս Делёз Ж., Гваттари Ф. Тысяча плато: Капитализм и шизофрения. Екатеринбург, М., 2010, էջ 12, 30:

րաժեշտությունից ծնված երբեմնի թափառաշրջիկ ու քոչվորական կյանքի մշակույթը ժամանակակից աշխարհում վերածվել է միասնական ժամանակատարածական մշակույթին խիստ բնորոշ մի կենսափիլիսոփայության, ըստ որի՝ այստեղ և ամենուր «բոլորն իրենց տանն են», և հետևաբար՝ ճանապարհորդությունն այլևս ո՛չ մեկնակետ ունի, ո՛չ էլ՝ վերջնակետ¹⁶։ Ավելին, վիրտուալ այդ աշխարհում կարելի է քոչվոր դառնալ առանց տնից դուրս գալու, քանի որ աշխարհը կորցրել է իր տարածական սահմանները և վերածվել է քոչվորներով բնակեցված «վիրտուալ տափաստանի»։ «Տափաստանների մարդը» վիրտուալ տափաստանի վերածված քաղաք է տեղափոխվել։

Իրական «էս»-ից տարբերվող վիրտուալ «էս» ու վիրտուալ ինքնություն ձևավորող ցանցային այդ աշխարհն այսօր արդեն ինքնիշխանությունից զրկված մարդկանց զանգվածային արտադրության մի ասպարեզ է, որտեղ ինքնության հետ «խաղացող» և այն հեշտությամբ փոխող մարդը կանգնած է գոյության սեփական սահմանների, հետևաբար նաև՝ ինքնանույնականացման կոորդինատների կորստի վտանգի առաջ։ Այս առումով հավանական է նաև, որ գոյության պայմանների վիրտուալացումը կամ, այլ կերպ ասած, ապագոյաբանականացումը ի վերջո այնպես կփոխի կարգի հարկադրական կոլեկտիվ ձևերի սոցիալական բովանդակությունը, որ ոչ հեռու մի անցյալում կյանքի մշակութային, նպատակաուղղված ու կանոնակարգված ենթարկումից մարդը գրեթե անգիտակցորեն ու ինքնակամ կսկսի ենթարկվել թվային սարքերի ներքին ալգորիթմներին¹⁷։

Խնդիրն այն է, որ սարդոստայն հիշեցնող վիրտուալ այդ իրականության մեջ կոդմտորոշման կայուն կոորդինատներ չունեցող սոցիալական կեցությունը նման է մի լաբիրինթոսի, որի անդուռ ու անպատուհան հարկաբաժիններում հիմնովին խճճված մարդու կյանքի ինքնաներկայացումը աստիճանաբար վերածվում է ինքնակեղծումների մի անվերջանալի շարքի, որի ամեն մի դրվագում տեղեկատվության ու հաղորդակցության դաժան ու անողորմ լույսի ներքո հրապարակավ բեմականացվում են նրա անձնական կյանքի մանրամասները՝ անպարկեշտության աստիճանի թափանցիկ ու տեսանելի։ Մասնավոր ու հանրային կյանքը տարանջատող սահմանների անհետացման արդյունքում ի վերջո ձևավորվում է մեռնող քաղաքակրթություններին խիստ բնորոշ «անպարկեշտ» մի իրականություն, որտեղ ավանդական մշակույթում լիովին քողարկված մարդու դեմքը ևս անպարկեշտության աստճանի քողագերծվում է, և, ինչպես Բոդրիյարն է ասում, ոչնչանում է անգամ սոցիալական կյանքին բեմականացման տեսք հաղորդող և հաղորդակցության պատրանք ստեղծող մարդու խաղացող կերպարը։ Առավել ևս, որ քաղաքակրթական, էթնիկ և

¹⁶ St' u **Брайдогги Р.** Путем номадизма // Введение в гендерные исследования. В 2 ч., Ч. II. Хрестоматия. СПб., 2001, էջ 138:

¹⁷ St' u **Кнорр-Цетина К., Брюггер У.** Рынок как объект привязанности: исследование постсоциальных отношений на финансовых рынках // Социология вещей. Сборник статей. М., 2006, էջ 308-309:

այլևայլ անհամատեղելի մշակույթների խառնուրդից ստացված խճանկարային այդ աշխարհում ձևավորվող **«արտմշակութային»** մարդու **«խառնածին»** տարատեսակը նաև հավատի ու բարոյական ռեսուրսներից և ինքնանախագծման շարժառիթներից զրկված պայմանական նույնականություն է¹⁸: Ինչպես ասում են յուրաքանչյուր մշակույթ իրեն բնորոշ «հիվանդություններից» ձևավորում է մի կերպար, ում հոգեկերտվածքն ու խառնվածքն արտացոլում են տվյալ ժամանակների մարդաբանական հնարավորությունները¹⁹:

Մնում է հուսալ, որ անհայտ կեցության նոր աշխարհներ, կյանքի նոր հորիզոններ ու անհայտության նոր նավահանգիստներ բացահայտելու հնարավորություններ ստացած ժամանակակից մարդու մեջ դեռևս ապրում է հողին նայելու խոնարհությունը պահած կոպտատաշ նախնին, ով մի վերջին անգամ կվերապրի Ադամի մեղսագործության դրդառիթների ողջ խորությունը և **ռեալության անտանելի քաղցից** դրդված, ինչպես որ նախաբնիկ Դրախտում պատահեց, կրկին պարտազանց կլինի, կմեղանչի և ինքն իրեն կվտարի իր իսկ ստեղծած անմեղսունակ ու անպարկեշտ իրականությունից՝ փաստելու համար, որ նախախնամության ուժերն այնուամենայնիվ միջամուխ են մարդու ճակատագրին, և նրա կյանքի ուղին աղետից աղետ ընթացող ուխտագնացություն է: Նաև փաստելու, որ Միտքը կարող է մոռանալ դյուրաբեկ ու վաղանցուկ ապրումներից ծնված կյանքի տխուր վեպի ցավալի մանրամասները, բայց արյունաքամվող Սրտի վրա սպիները մնում են:

Մթնշաղի մեջ պարտազանց Ադամի հոգին է ճախրում: Աշխարհն էկզիստենցիալ է:

ЭДВАРД АРУТЮНЯН – Профанация экзистенциального контекста восприятия:

Человек в «виртуальных стенах». – Культура организации жизни - это контекст восприятия, позволяющий человеку увидеть, осмыслить мир во всей его целостности и построить собственное «убежище» онтологической безопасности. Однако жизнь - это незавершенная драма поиска возможностей, на одном из этапов которой радикальные трансформации в культурном контексте сосуществования могут лишить человека тех характеризующих его эмпирическую природу факторов, которые ранее более или менее точно очерчивали настоящее и будущее его жизни, меру и пределы его автономии. Проблема в том, что каждому контексту восприятия свойствен свой набор культурных «болезней», которые способны не только внутренне разрушить социальные и антропологические основания онтологического «убежища» данной эпохи, но и лишить человека его метафизической и трансцендентной сущности.

Исходя из этой реальности, в статье онтологический порядок современного индивидуалистического (ориентированного на себя) общества рассматривается как форма сосуществования, лишённая общего культурного контекста «старения вместе», где тенденции утраты автономного бытия человека становятся антропологическим вызовом и явно подрывают прежние основания существования человека в обозримом горизонте жизни.

¹⁸ Տե՛ս Գիրս Կ. նշվ. աշխ., էջ 421:

¹⁹ Տե՛ս Գյոկո Մ. Психическая болезнь и личность. СПб., 2009, էջ 166:

Ключевые слова: *культура жизни, онтологический порядок, культурный контекст, автономия, общество возможностей, виртуальный мир, кочевая реальность, экзистенциальная разгрузка*

EDVARD HARUTYUNYAN – *Profanation of the Existential Context of Perception: Man in the “Virtual Steppes”*.— The culture of life organization is a context of perception that enables a person to see and comprehend the world in its entirety and to construct his own “shelter” of ontological security. Yet life itself remains an unfinished drama of searching for possibilities, during which, at certain stages, radical transformations in the cultural context of coexistence may deprive a person of those factors constitutive of his empirical nature—factors that once, more or less accurately, outlined both the present and the prospects of his life, as well as the measure and limits of his autonomy. The problem lies in the fact that each context of perception carries its own set of cultural elements, capable not only of internally undermining the social and anthropological foundations of the ontological “shelter” of a given era, but also of depriving man of his metaphysical and transcendental essence.

From this perspective, the ontological order of modern individualistic (self-oriented) society appears as a form of coexistence that lacks a shared cultural context for “growing old together.” In such a society, the tendencies toward the loss of autonomous existence have emerged as challenges of anthropological magnitude, which directly erode the foundational principles of living life within a visible horizon.

Key words: *culture of life, ontological order, cultural context, autonomy, society of possibilities, virtual world, nomadic reality, existential fate, existential unloading*

References

- Bakhtin M.M. *Estetika slovesnogo tvorchestva*, Moscow, 1979, s. 312-313 (in Russian).
 Batay ZH. *Proklyataya chast': Sakral'naya sotsiologiya*, Moscow, 2006, s. 354 (in Russian).
 Bauman Z. *Individualizirovannoye obshchestvo*. M., 2002, s. 148 (in Russian).
 Bodriyyar J. *Sistema veshey*. M., 2001, s. 170, 172 (in Russian).
 Braydotti R. *Putem nomadizma // Vvedeniye v gendernyye issledovaniya*. V 2 ch., CH. II. Khrestomatiya. SPb., 2001, s. 138 (in Russian).
 Buber M. *Dva obraza very*. M., 1999, s. 26 (in Russian).
 Delez ZH. *Logika smysla*. SPb., 1999, s. 282 (in Russian).
 Deloz ZH. *Gvattari F. Tsyacha plato: Kapitalizm i shizofreniya*. Yekaterinburg, M., 2010, s. 12, 30 (in Russian).
 Epshteyn M. *Filosofiya vozmozhnogo. Modal'nosti v myshlenii i kul'ture*. SPb., 2001, s.191-193 (in Russian).
 Fuko M. *Psikhicheskaya bolezni i lichnost'*. SPb., 2009, s.166 (in Russian).
 Girts K. *Interpretatsiya kul'tur*. M., 2004, s. 421 (in Russian).
 Khosle V. *Krizis individual'noy i kollektivnoy identichnosti // Voprosy filosofii*. 1994. № 10, s. 15 (in Russian).
 Khyubner B. *Proizvol'nyy etos n prinuditel'nost' estetiki*. Mn., 2000, s. 116,148 (in Russian).
 Knorr-Tsetina K., Bryugger U. *Rynok kak ob'yekt privyazannosti: issledovaniye postsotsial'nykh otnosheniy na finansovykh rynkakh // Sotsiologiya veshchey. Sbornik statey*. M., 2006, s. 308-309 (in Russian).
 Markuze G. *Eros i tsivilizatsiya. Odnomernyy chelovek*. M., 2003, s. 275 (in Russian).
 Ortega y Gasset, J. *Degumanizatsiya iskusstva*. Moscow, 1991, s. 262 (in Russian).
 Sartr ZH.-P. *Bytiye i nichto: Opyt fenomenologicheskoy ontologii*, Moscow, 2000, s. 156 (in Russian).
 Tul'chinskiy, G.D. *Postchelovecheskaya personologiya*. St. Petersburg, 2002, s. 450 (in Russian).

ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ՀՈԳԵԿԵՐՏՎԱԾՔ. ԷԿԶԻՍԵՆՑԻԱԼ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

ԳԱԳԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ՝ 
Երևանի պետական համալսարան

Քաղաքակրթությունն աստիճանաբար մոտենում է գայթակղություններով լեցուն, վտանգավոր մի եզրագծի, որից անդին չվերահսկվող ուժերի ազդեցությունը մարդու համար կարող է ճակատագրական լինել: Կեցության մեջ մշակութամարդաբանական իմաստով արմատավորված չլինելու հանգամանքը ծնում է անհետացող իրականության սոցիալ-հոգեբանական պարադոքսալ զգացողություն: Իրականության փոխարեն ձևավորվում է գերիրականություն (հիպերռեալություն) կամ վիրտուալ իրականություն, որտեղ էական չէ, թե ինչն է իրական, ինչը՝ ոչ: Կյանքը մշտապես ծավալվում է որպես իրականության բնագրի բացակայությունը թաքցնող կեղծանմանակումների ու պատրանքների արարման սահմանազանցական շարժ: Հոգևոր արժեքներն աստիճանաբար կերպարանափոխվում են և դառնում ապրանքների խորհրդանիշային պատկեր: Ձևավորվում է նեղ, սահմանափակ հայացքների ու ձգտումների տեր մարդկանց նոր խավ, որոնց համար նույնականացման հիմնական չափանիշ է դառնում բրենդը: Մարդը հրաժարվում է հեռահար նպատակներից, ինչը, պարզունակացնելով գոյությունը, հանգեցնում է կյանքի էկզիստենցիալ արժեզրկմանը: «Գործարքն» ավելի է կարևորվում, քան դրա համար վճարվելիք էկզիստենցիալ գինը: Հոգվածում արվում է եզրահանգում, որ քաղաքակրթական արդի փոխակերպումների պայմաններում էկզիստենցիալ ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ է հրաժարվել բացարձակ էվոյուցիոնիզմի մտասնեռումից ու սահմանափակելով լինելությունը հանուն բնականի (մարդու հոգևոր, մարմնական ամբողջականություն) ու արհեստականի (վիրտուալ իրականություն, արհեստական ինտելեկտ) համազարգացման (կո-էվոյուցիայի) գիտակցական ջանքեր գործադրել՝ հոգուտ էկզիստենցիալ կեցության ամբողջականության պահպանման:

Բանալի բառեր – սպառողական հոգեկերտվածք, մարմին, կեղծանմանակ, վիրտուալ իրականություն, սիմուլյացիա, գերիրականություն, զանգվածային մշակույթ, էկզիստենցիալ գին

Գագիկ Սողոմոնյան – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ

Гегик Согомонян – кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики ЕГУ

Gagik Soghomonyan – Candidate of Philosophical Sciences, Associate Professor at the Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics YSU

Էլ. հասցե՝ gagiksoghomonyan@ysu.am <https://orcid.org/0000-0002-1408-6082>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտագվել է՝ 26.06.2025

Գրախոսվել է՝ 07.07.2025

Հաստատվել է՝ 24.10.2025

© The Author(s) 2025

Մեր ապագան մի մրցավազք է մեր հարաճուն տեխնոլոգիական հզորության և մեր իմաստության միջև: Եկեք այնպես անենք, որ հաղթանակի իմաստությունը:

Մթիվեն Հոփինգ

Աշխարհն այլևս նախկինը չէ: Ներկայում ընթացող քաղաքակրթական փոխակերպումները որակապես այլափոխում են մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները՝ ստեղծելով նոր իրողություններ, անհատական և հանրային կյանքի կազմակերպման նոր սկզբունքներ, արժեքային այլ գերակայություններ, որոնք էապես ազդում են մարդու էկզիստենցիալ ինքնագացողության և սոցիոմշակութային կյանքի կանոնակարգման ընթացքի վրա: Տեխնոլոգիաների սրընթաց զարգացման, ինտելեկտուալ բարդ աշխատանքի աննախադեպ ծավալի աճի և անհատական ազատության շրջանակների շարունակական ընդլայնման հետևանքով աստիճանաբար փոխակերպվելով՝ մարդը թևակոխում է գոյության ու գործառության նոր՝ ավանդականից զգալիորեն տարբեր՝ հետմարդու ժամանակաշրջան: Ըստ էության, համաքաղաքակրթական իմաստով անցումային մի ժամանակաշրջան, որին բնորոշ է անցումը բնականից արհեստականին, արդիականից՝ հետարդիականին: Տեղի են ունենում սոցիումի քաղաքակրթական հիմունքների արմատական փոփոխություններ: Քաղաքակրթությունն աստիճանաբար մոտենում է գայթակղություններով լեցուն, սակայն խիստ վտանգավոր մի եզրագծի, որից անդին չվերահսկվող ուժերի ազդեցությունը մարդու համար կարող է ճակատագրական լինել: Մարդկությունն իր գիտատեխնիկական մտքի հաղթանակի, բնության ուժերի վրա իր օրավոր աճող իշխանության հետևանքով կանգնել է ինքնառաջանալի իրական սպառնալիքի առջև: Նոր աշխարհակարգն իր բազմաշերտ տեղեկահաղորդակցական խաղային տեխնոլոգիաներով պարբերաբար ծնում է անորոշության, անտարբերության, ագրեսիվության, անպատասխանատու վարքի, թատերականացված գործողությունների օջախներ: Գլոբալ մարտահրավերները, բնական, մարդածին ու տեխնածին և տարաբնույթ այլ աղետները սպառնում են մարդու՝ որպես ցեղային տեսակի գոյությանը: Հոգևոր ճգնաժամի, սոցիալական կյանքի անկանխատեսելի փոխակերպումների, ավանդական արժեհամակարգի վիճարկման և մշակույթի զանգվածայնացման հարուցած տագնապներն աստիճանաբար ներթափանցում են կյանքի այլ ոլորտներ և կարող են դառնալ հավանական համամոլորակային աղետի պատճառ: Մեր ամբոխայնացած պատկերացումները մարդկությանը մոտեցրել են հոգևոր և համահանրային (սոցիետալ) արժեքների կորստյան անդունդի եզրին: Առաջընթացի ամեն քայլ մի այլ տեղ հետընթաց է նշանակում, և ներկա քաղաքակրթության բավականին կասկածելի պարտադրանքները

(ազգերի ինքնորոշման իրավունքի ստորադասումը տարածքային ամբողջականության սկզբունքին, ժողովրդավարության արտահանումը, համասեռամոլ գույգի կողմից երեխաների որդեգրումները, պարտադրյալ պատվաստումները և այլն) դրա լավագույն ապացույցն են: Որոշումները, որոնք սովորական ժամանակներում կարող են տարիների քննարկում պահանջել, ընդունվում են հաշված ժամերում: Ոչ հասուն և անգամ վտանգավոր տեխնոլոգիաներն արագորեն գործարկվում են, քանի որ ոչինչ չձեռնարկելու ռիսկերն ավելի մեծ են: Սոցիալական ու առողջապահական մեծածավալ փորձարկումների համար ժողովուրդները ծառայում են որպես փորձակենդանիներ: Սոցիալական փոխակերպումների և համաշխարհայնացման բացասական հետևանքների ծավալմանը զուգընթաց՝ ժամանակակից քաղաքակրթության համապարփակ ճգնաժամը ձեռք է բերում մարդաբանական նոր բնույթ, ուստի մարդու՝ որպես անկրկնելի կենսասոցիալական տեսակի գոյության ու շարունակականության, մարդու մարդ մնալու, նրա պատմական հեռանկարի ապահովման խնդիրները մշակութամարդաբանական իմաստով դառնում են առանցքային նշանակություն ունեցող կարևոր աշխարհայացքային հարցեր: Թվում է, թե արդի աշխարհում բոլոր արժեքների համեմատ գերակշռում են ապաստարանացված, օգտապաշտական անհոգի հարաբերություններն ու նորմերը, գերիշխում են բնութենականից ու հոգեկանից կտրված, ոգեղեն լիցքավորումը կորցրած բանականությունը, գերվերացական-մեռյալ դատողականությունը:

Էկզիստենցիալ անորոշության իրավիճակում ընթացող հակասական, բազմաթիվ անհայտներով լեցուն և մարդու նախկին որակական որոշակիությունը կազմալուծող այս ցավոտ գործընթացը ժամանակակից ինտելեկտուալ ընտրանու շատ ներկայացուցիչներ բնութագրում են որպես մարդաբանական աղետ, մի իրավիճակ, երբ սոցիալական քառսի պայմաններում մեկեն անհետանում են կեցության ավանդական վիճակները, փլուզվում է կայունության՝ սովորական դարձած համակարգը, կորսվում են կենսիմաստային ավանդական կողմնորոշիչները, «ոգու ոլորտում հայտարարվում է գործադուլ» (Թեյար դը Շարդեն), լայնորեն տարածվում է «ճգնաժամային գիտակցությունը» (Օսվալդ Շպենգլեր), մարդկությունը թևակոխում է գոյության ու գործառության ռիսկային գոտի (Ուլրիխ Բեկ):

Եվ այսու, տեխնոլոգիական աննախադեպ աճ արձանագրած արդի քաղաքակրթությունը էկզիստենցիալ ի՞նչ գին պետք է վճարի դրա դիմաց, ինչո՞վ և ինչպե՞ս է մարդը հատուցելու գայթակղություններով լեցուն ժամանակակից հաճոյաշատ, երբեմն ինքնահնար կենսակերպը վայելելու համար:

Մշակութամարդաբանական արդի խնդրակարգը համակողմանիորեն քննարկելու և վերլուծելու համար պետք է նկատի ունենալ ժամանակակից քաղաքակրթական կյանքն ու կենսակերպը բնութագրող հետևյալ հանգամանքները.

– պատմության զարգացման հետարդյունաբերական փուլում նախընտրելի է դառնում անցումը հասարակության ազատական-ժողովրդավարական տիպին համապատասխանող արժեքներին և արժեքային կողմնորոշումներին,

– շուկայական հարաբերությունների (որոնց գոյությունը բնական է տնտեսության մեջ և սոսկալիորեն անբնական՝ մարդկային կապերի մեջ) և սպառողական արժեքների ու հոգեբանության անարգել տարածման հետևանքով էապես փոխվում են մարդու ներաշխարհը, արժեքային և կենսիմաստային կողմնորոշիչները, հանուն օգուտի՝ «մեր օրերի այդ տխրահոշակ, լկտի ու դաժան կուռքի» (Պավել Ֆլորենսկի), փողի և հաջողության հասնելու անգիջում մրցավազքում զոհաբերելի են դառնում բարոյական արժեքները, ցանկացած ռեֆլեքսիա և անդրանցական (տրանսցենդենտալ) արժեք համարվում է ժամանակավրեպ և խորթ,

– հասարակության մեջ տեխնածին միջավայրի բուռն զարգացման հետևանքով փոխակերպվում են մարդու բնությունը, ֆիզիկական և հոգեկան հատկանիշների ողջ համակարգը, մարդու մեջ եղած բնական աստիճանաբար արտամղվում է արհեստականի կողմից (անտրոպոգենեզը՝ որպես պատմական գործընթաց, չի ավարտվել, այն շարունակում է իր «ստեղծագործական» տրամաբանությունը),

– կեցության որոշարկված սոցիալական կապերի թուլացման, աստիճանական տրոհման, երբեմն էլ դրանց անհետացման հետևանքով խաթարվում է «ավանդական» հասարակության՝ մարդու կենսաշխարհին բնորոշ կոլեկտիվ կապերի և մտերմիկ ու ջերմ հարաբերությունների հարուստ համակարգը, «հասարակությունն անհատացվում է» (Զիգմունդ Բաուման), «անհատը լուծվում է անգիտակցականի, հասարակությունը՝ ամբոխի մեջ»¹: Ժամանակակից մարդը հայտնվում է ինչպես հին (պատերազմներ, էկոլոգիական խնդիրներ), այնպես էլ նոր (անդրազգային ահաբեկչություն, կրոնական արմատականություն, կիբերհանցագործություն, համավարակ և այլն) գլոբալ մարտահրավերների առջև: «Առողջ ու պարզ բանականությունն ամենուրեք արտամղվում է դյուրագրգիռ, անհստակ, հիստերիկ, անգիտակից, ինտելեկտից և վերլուծության ունակությունից զուրկ վիճակով: Ամբողջ մարդկությունն ասես պատրաստվում է միաձուլվել մեկ դյուրահավատ, պարզունակ և իշխանատենչ հոգում, որն ունակ չէ ո՛չ մտածելու, ո՛չ սիրելու՝ պատրաստ լինելով միայն թայրտալու ու վայրագանալու, բայց առաջին հերթին քանդելու: Չէ՞ որ ամբոխի նպատակը մեկն է՝ ոչնչացնել մշակույթը»²:

Այսօր մարդկությունն առերեսվում է բազմաթիվ հիմնախնդիրների հետ, որոնց բովանդակությունն ըստ էության գուտ մարդաբանական է. հասարակության հյուլեացում, հումանիտար աղետներ, անբուժելի ուռուցքաբանական

¹ **Համվաշ Բ.**, Զրիոսը / **Աթայան Էդ.**, Հոգի և ազատություն, Երևան, Սարգիս Խաչենց, 2005, էջ 565:

² Նույն տեղում, էջ 568:

և հոգեկան հիվանդություններ, մշակույթի զանգվածայնացում, տեղեկատվական բռնություն, սպառողական արժեքների գերիշխանություն, աղետային գիտակցության (վախի, տագնապի, ընկճախտի) տարածում, համահարթեցնող գլոբալ արժեքների գերակայության պայմաններում ազգային, կրոնական ինքնության անտեսում և այլն: Գաղափարի բռնությանը (ամբողջատիրությանը) հաջորդում է հետարդիական (պոստմոդեռնիստական) հասարակության ծնած դատարկության բռնությունը: Գերիշխող է դառնում սպառողական հոգեկերտվածքը: Սպառողական հոգեկերտվածքի տեր մարդիկ ընտրություն են կատարում ոչ թե առարկաների միջև, այլ պարզապես ներառվում են նշանների աստիճանակարգերում և սպառման ծածկագրերում: Սպառումն այլևս կապված չէ պահանջմունքների բավարարման հետ: Մարդը մշակույթային իմաստի մատրիցում սպառում է ոչ թե ապրանք, այլ տարբերակիչ նշան, սոցիալական կարգավիճակ: Սպառումը դառնում է լեզու, բայց լեզու՝ առանց ռեֆերենտի: Սպառողը ընտրության ինքնավար կերպարից վերածվում է տարբերության և բացառման կառուցվածքը վերարտադրող նշանների համակարգի սոսկական օպերատորի³: Հետդասական մշակույթն ինքնատիպություն չի ստեղծում, այն գործում է որպես նախապատրաստված ոճերի, հղումների և գեղագիտական «փաթեթների» կոլաժ⁴: Սպառողական մտածելակերպը վերարտադրում է ազատության պատրանքը՝ պահպանելով խորհրդանիշային կարգի կառուցվածքային բռնությունը, որի դեպքում սուբյեկտը՝ որպես իրական ներկայություն, անհետանում է՝ իր տեղը զիջելով վերահսկվող և վերակարգավորվող սիմուլյատիվ դիմակին⁵:

Քաղաքակրթական գործառության ներկա փուլը բնութագրվում է այն բանով, որ անձի ազատության և պատասխանատվության սահմաններն ամփոփվում են անհատի հոգեսոմատիկ ամբողջականության մարմնական շրջանակներում: Սակայն, ի տարբերություն նախկին ժամանակների, մարմինն այլևս անձի նույնականացման միակ և ամենահաջող երաշխավորը չէ (գենային ինժեներիա, պլաստիկ վիրաբուժություն, օրգանների փոխպատվաստում և այլն): Մարմինը գոյաբանական էությունից աստիճանաբար վերածվում է մանիպուլյացիայի օբյեկտի, ճանաչողական կարողություններից և աշխարհի վերափոխման սուբստրատից փոխակերպվում է հոգատարության, սիրո և սիմվոլիկ պրակտիկաների առարկայի, սոցիալական սիմվոլիզմի քմահաճույքներին զոհաբերելի փորձադաշտի կամ գովազդային վահանակի (բողիբիլդինգ, դոպինգ, պիրսինգ, սիլիկոնոպլաստիկա, դաջվածք, սեռափոխություն և այլն): Այն, վերածվելով տարատեսակ «հիգիենիկ ռեպլիկների» միջոցով իրականաց-

³ Տե՛ս **Бодрийяр Ж.**, Общество потребления. М., Издательство АСТ, 2021, էջ 138-143:

⁴ Տե՛ս **Jameson**, Postmodernism, 1991, Duke University Press, էջ 17-25:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 361-366:

վող բեմագրության (սցենարի), դառնում է «բթացնող հոգատարության օբյեկտ»⁶, ավելի ճիշտ՝ պաշտամունքի առարկա: Մարդակենտրոն մշակույթը վերածվում է մարմնակենտրոն մշակույթի, հաղթանակում է «կռապաշտությունն իր առավել արատավոր ձևով՝ մարդու ինքնաերկրպագությամբ» (Թոյնբի): Քաղաքակրթական «արագացման» մրցավազքին մասնակցելու համար մարդը հատուցում է իր սեփական մարմնականությամբ, ինքնավարությամբ և սուբյեկտիվությամբ: Դա հանգեցնում է իրականի լիակատար անհետացմանը: Կեցության մեջ մշակութամարդաբանական իմաստով արմատավորված չլինելու հանգամանքը ծնում է անհետացող իրականության սոցիալ-հոգեբանական պարադոքսալ զգացողություն: Ըստ Բոդրիարի՝ մի փոխաբերության ժամանակակից քաղաքակրթությունը ոչ այլ ինչ է, քան նշաններ ու իմաստներ կրկնօրինակող վիրուս: Այն իրականություն չի ստեղծում, այն, ինչպես օրգանիզմում առկա վիրուսը, սոսկ ինքն իրեն վերարտադրում է: Փաստորեն, մարդաբանական հատուցումն այն գինն է, որը մարդը վճարում է քաղաքակրթական արմատական փոխակերպումներին (տեխնոլոգիականացում, թվայնացում, գլոբալացում և այլն) մասնակցելու համար: Մա ըստ ճաշակի և նախասիրությունների՝ մարմնի ֆիզիկական և գեղագիտական «կատարելագործման» նպատակով քաղաքակրթական արտադրության և մոդելավորման գլոբալ աշխատակարգերում ներառվելու, իր ինքնությունից, ընդոծին հատկանիշներից հրաժարվելու համար վճարված էկզիստենցիալ գինն է⁷: Միակ մտահոգությունն այլևս առողջությունը, սեքսուալությունը և բարետեսությունը ամեն գնով ապահովելն է: Ավանդական հասարակությունում մարմինը հոգու փոխաբերությունն էր, արդյունաբերականում՝ սեռի, հետարդիական հասարակությունում այն որևէ փոխաբերություն չի ներկայացնում, ուստի անիմաստ և անպարկեշտ է հոգու և հոգևորի մասին խոսելը: Մենք մտահոգության առարկա է դառնում հետևյալ խնդիրը. եթե մարդու բնությունը և օրգանական մարմինը փրկելն անհնար է, ապա անհրաժեշտ է ստեղծել գիտակցության արհեստական կրիչ: Հասարակության դրոները համառորեն թակում են նախկինում գոյություն չունեցած այնպիսի «անբնական» սուբյեկտներ, որոնց բարոյական կարգավիճակը անորոշ է, և, մեղմ ասած, չունեն սովորական մարդուն բնորոշ հատկանիշներով օժտված սոցիալականություն: Դրանք սոցիոտեխնիկական համակարգեր են, որոնք թեն մարդու ստեղծած ու նրան պատկանող կեցություններ են, բայց որոնց հանդեպ մարդը ոչ միայն գերազանցություն ու գերիշխանություն չունի, այլև ինչ՝ որ ժամանակ անց կարող է անգամ ինքնակամ հայտնվել այդ ոչ մարդկային սուբյեկտների ենթակայության տակ՝ հուսալով, որ սոցիալական գործողությունների այդ նոր գործակալ-

⁶ Նույն տեղում, էջ 243-246:

⁷ Տե՛ս **Бодрийяр Ж.**, Прозрачность зла. М.: Добросвет, 2001, էջ 87:

ների օգնությամբ երբևէ կարող է հասնել սուբյեկտիվությունից զուրկ «կիրենոնետիկական անմահության»⁸: Գիտության և կենսատեխնոլոգիաների բուռն զարգացման արդյունքում առաջանում է կլոնավորման, այսինքն՝ նախապես առաջադրված ծրագրով արհեստական պայմաններում մարդու բեղմնավորման ու աճեցման, մարդաբանական առնչությամբ սկզբունքորեն նոր ու աննախադեպ հիմնախնդիրը: Ինքնին հասկանալի է, որ վաղօրոք առաջադրված հատկություններով, «պատվերով» կառուցարկված մարդը սոցիոմշակութային և հոգևոր իմաստով որք կլինի: Գենային ինժեներիայի տարատեսակ աշխատակարգերի աննախադեպ ու արագ զարգացման շնորհիվ սեփական մարմինն անընդհատ կատարելագործելու ոչ միշտ կշռադատված ցանկությունների բավարարման արդյունքում ժամանակակից մարդը կարող է հայտնվել իր նախաստեղծ բնության կորստյան իրական սպառնալիքի առջև, քանի որ այդ դեպքում կարող է վտանգվել մարդու՝ որպես անկրկնելի ցեղային տեսակի գոյությունն ու էկզիստենցիալ ամբողջականությունը: Դրա մարդաբանական հատուցումը արհեստականը բնականից, պարտադրվածը սեփականից, օտարը սեփականից տարբերելու անկարողությունն է:

Կեցության մեջ մշակութամարդաբանական իմաստով արմատավորված չլինելու հանգամանքը ծնում է անհետացող իրականության սոցիալ-հոգեբանական պարադոքսալ զգացողություն: Իրականության փոխարեն ձևավորվում է գերիրականություն (հիպերռեալություն) կամ վիրտուալ իրականություն, որտեղ արդեն այլևս էական չէ, թե ինչն է իսկապես իրական, ինչը՝ ոչ, որտեղ էական է միայն անվերջ հոսող լուրերի ու իրադարձությունների անընդհատությունը⁹: Գերիրականության մեջ դասական իմաստով փոխակերպումներ (ձևավորում, զարգացում, անկում) տեղի չեն ունենում: Բոլոր փոփոխությունները փոփոխությունների սիմուլյացիաներ են՝ միջերեսի (ինտերֆեյսի) թարմացումներ, գաղափարական փոխատեղումներ, տեսողական կոդերի փոփոխություններ: Մարդիկ այդ ամենը որպես էկզիստենցիալ աղետ չեն ընկալում, նրանց ինքնությունը, ցանկությունները, վախերը լուռ լուծարվում են թվային տեխնոլոգիաների սիմուլյացիոն համակարգերում: Մարդկությունը թևակոխում է զարգացման մի շրջան, երբ տեղեկատվական հոսքն անընդհատ մեծանում է, իսկ իմաստը՝ նվազում, տեղեկատվությունն իմաստ արտադրելու փոխարեն խաղարկում է այն, սկսում է «խժռել իր իսկ բովանդակությունը», հաղորդակցությունն ու իրական սոցիալականը¹⁰: Ժամանակի հետարդիա-

⁸ **Հարությունյան Էդ.**, Սոցիալական կյանքի բեմականացման էկզիստենցիալ գինը. Մարդը գոյաբանական ծուղակում // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2024, Vol. 15, No. 3, (45), էջ 13:

⁹ Տե՛ս **Бодрия Ж.**, В тени молчаливого большинства, или конец социального. Екатеринбург, 2000, էջ 19:

¹⁰ Տե՛ս **Бодрия Ж.**, Прозрачность зла. М., Добросвет, 2001, էջ 87:

կան ընթացքը մեկնաբանելու համար ստեղծվում է իրականի նենգապատկերը՝ պատրանք արտահայտող «կեղծանմանակ» (սիմուլյակր - Ժ. Բատայ) հասկացությունը, որն արտահայտում է օբյեկտի հանդեպ նշանի, բնօրինակի հանդեպ պատճենի գերիշխող արժեքն ու նշանակությունը: Ըստ Ժ. Բոդրիյարի՝ ժամանակակից աշխարհում մարդն ապրում է ոչ թե իրականության, այլ սիմուլյացիաների մեջ: Ըստ էության, քաղաքակրթության առաջընթացն ընկալվում է որպես սիմուլյացիաների առաջընթաց, իսկ փոխակերպումը՝ սիմուլյակրների մակարդակների փոփոխություն: Դրանք չորսն են.

1. պատկերը արտացոլում է իրականությունը (ավանդական հասարակություններ),

2. պատկերը աղավաղում է իրականությունը (արդիական (մոդեռն) հասարակություն),

3. պատկերը ձևացնում է, թե ինքն է իրականությունը ((պոստմոդեռն) հետարդիական հասարակություն),

4. պատկերը մոդելավորում է այլևս գոյություն չունեցող իրականությունը (գերիրականություն)¹¹:

Վիրտուալ իրականությունում կյանքը մշտապես ծավալվում է որպես իրականության բնագրի բացակայությունը թաքցնող կեղծանմանակումների ու պատրանքների արարման սահմանազանցական շարժ: Ավելին, այդ նոր սոցիալականում կյանքի մտերմիկ ու ծանոթ համայնապատկերը ներկայացնող մարդիկ, կենցաղը, ճաշակը, նախապատվություններն ու այլնայլ մշակութային կարևոր մանրամասները կոնցեպտուալ իմաստով այնքան արագ ու հիմնովին են այլակերպվում, որ ուղղակի և փոխաբերական իմաստով մարդը վերածվում է տուն տանող ճանապարհին մոլորված ուղևորի¹²: Սոցիալական կեցության մեջ ամեն ինչ դառնում է սիմուլյատիվ: Մշակութային ավանդական իմաստների նկատմամբ քամահրական վերաբերմունքը, բառի հետ կամայական խաղը (Ժ. Դերիդա), «թարգմանության գոյաբանական հարաբերականությունը» (Ու. Կուայն) և «արմատական մեկնելիությունը» (Դ. Դևիդսոն) «ինտելեկտուալ ատլետների» ջանքերով (այսպես էին իրենց բնութագրում Ժ. Դերիդան և Ժ. Դըյոզը) դառնում են հետարդիական փիլիսոփայության առաջատար թեմաները:

Ժամանակակից քաղաքակրթության գլխավոր գոյաձև է դառնում զանգվածային մշակույթը, որտեղ կարևորվում են մշակույթի այն հատկանիշներն ու որակները, որոնք համաշխարհայնացման արգասիք են: Մարդու բնութագրման գլխավոր ցուցանիշ է հռչակվում սպառումը, որը, աստիճանաբար ձեռք բերելով արժեքաբանական ենթատեքստ, դառնում է սոցիալական համակեցության կազմակերպման յուրահատուկ սոցիոմշակութային ծածկագիր:

¹¹ Տե՛ս **Бодрийяр Ж.**, Симулякры и симуляция. М., Добросвет, 2000, էջ 5–9:

¹² Տե՛ս **Հարությունյան Էդ.**, նշվ. աշխ., էջ 14:

Մարդը դառնում է ոչ թե սոցիալական պատկանելության, այլ կենսառճի ցուցանիշ: Զանգվածային մշակույթը ձևավորում է սպառողական արդի հասարակությանը բնորոշ հաղորդակցման, ինքնադրսևորման, կենսակերպի արտահայտման նշանային նոր համակարգ (պահվածք, հանդերձանք, սանրվածք, ճաշակ և այլն), որն ամբողջությամբ ծառայում է շուկայական քաղաքակրթության «գայթակղությունների գործարանի» գաղափարախոսությանը: Ցուցադրական սպառումն աստիճանաբար դառնում է մշակութային ընդհանուր նորմ, որին չենթարկվողը կանգնում է շրջապատից վտարվելու, մեկուսացվելու առջև: Ցուցադրական սպառման պարագայում ապրանքի փոխարեն նախևառաջ հանդես է գալիս ապրանքանիշը (արհեստականորեն ստեղծված կերպար), որի սոցիալական կարգավիճակն էլ որոշում է ապրանքի գինը՝ անկախ նրա արտադրության վրա ծախսված ջանքերից և նրա իրական սպառողական հատկություններից: Ըստ էության, բրենդը զանգվածային մշակույթի հասարակության պահանջներին հասցեագրված պատասխան ուղերձ է: Այս հասարակության մեջ ապրանքի արժեքը որոշվում է արտադրողի սոցիալական կարգավիճակով, այլ ոչ թե կարգավիճակը՝ արժեքով, ինչը բնորոշ էր դասական կապիտալիզմին: Ապրանքանիշի գնի բարձրացմանը ծառայում է գովազդը, որը ապրանքի կամ որևէ ընկերության համար համապատասխան կերպար է ստեղծում, և ավելի շատ շուկայում շրջանառում են հենց այդ ստեղծված կերպարները, քան իրական ապրանքները: Սա է պատճառը, որ գովազդային հոլովակներում իրերն առավել կատարյալ են երևում, քան դրանք իրականում կան: Որևէ ապրանքի գինը ձևավորվում է ոչ թե իրական տնտեսական օրենքների հիման վրա, այլ շուկայագետների և գովազդային գործակալների կողմից: Նրանք են ստեղծում ապրանքի կամ որևէ ընկերության «ապրանքանիշը» և հենց դրանից ելնելով էլ՝ սահմանում ապրանքի գինը: Սպառողական քաղաքակրթության պայմաններում հոգևոր արժեքներն աստիճանաբար կերպարանափոխվում են և դառնում ապրանքների խորհրդանիշային պատկեր, այսպես կոչված՝ «իմիջ»: Մարդիկ հրաժարվում են «մեծ ինքնություններից», այսինքն՝ դադարում են իրենց նույնացնել որոշակի պետության, ազգի կամ էթնոսի, կրոնադավանաբանական խմբի հետ: Ձևավորվում է նեղ, սահմանափակ հայացքների ու ձգտումների տեր մարդկանց նոր խավ, որոնց համար նույնականացման հիմնական չափանիշ է դառնում հենց բրենդը: Ձգտելով արագորեն հարմարվել փոխակերպվող պայմաններին՝ մարդիկ սկսում են մերժել կայունությունն ու տնականությունը որպես բնականոն գոյության կարևորագույն պայմաններ: Ժամանակների միջև կարծես խզում է առաջանում, ուստի վարքի ավանդական մշտակաղապարներով անհնարին է «ապահովագրել սեփական ապագան»: Եվ քանի որ հեռահար նպատակներն այլևս պահանջարկ չեն վայելում, ապա հանուն արդյունքների անմիջական ստացման, հանուն «այստեղ և այս պահին» սկզբունքի՝ մարդը հրաժարվում է

հեռահար նպատակներից, ինչը, պարզունակացնելով գոյությունը, հանգեցնում է ինչպես սոցիալական, այնպես էլ անհատական կյանքի տրոհմանը, էկզիստենցիալ արժեզրկմանը: Մարդկային ինքնությունը եղելությունից վերածվում է «խնդրի»: Անհատական և սոցիալական կյանքի տարածաժամանակային դետերմինանտների կրճատումը նպաստում է անկայուն, առընթեր գաղափարների և արժեքների ձևավորմանը: Այս հանգամանքներն անխուսափելի են դարձնում տարանցիկ վարքը, որն ամենից առաջ դրսևորվում է որպես կենսական կարճատև նախագծերի վրա հիմնված ինքնաճրագրավորվող, ինքնահնար գործունեություն: Փիլիսոփայական մարդաբանության դասական եզրահանգումներն այլևս չեն բավարարում կենսիմաստային դիրքորոշումներին ներկայացվող պահանջները¹³: Հընթացս ձևավորվող նոր մարդաբանության արժեհամակարգում անձը հանդես է գալիս որպես հավերժական ճամփորդ, տիեզերական թափառաշրջիկ, տիպորինական է դառնում դեռևս չիրացված, չնույնականացված «առանց հատկությունների» մարդը¹⁴: Նախկին արժեքագոյաբանական մարդուն գալիս է փոխարինելու արդիականության մանիպուլյատիվ արարողակարգային «անձ-նախագիծը», որն անընդհատ շտկում, սրբագրում է իր իսկ հեղինակած նախագիծը: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ ինքնակոչություն, և այս հանգամանքի հերքումը «կա՛մ մշակութային անմեղսունակություն է, կա՛մ կրկնակի ինքնակոչություն»¹⁵:

Բոլոր ժամանակներում միտքը ձգտել է մարդու հողաշեն բնությունն ազատագրել կայենական մեղքերից, եսամոլության, այլատյացության, գիշատչության հակումներից, սակայն այդ ջանքերը ոչ միշտ են հաջողությամբ պսակվել: Առաջադիմության պատմությունը մեծ մտածողները պատկերացրել են որպես մարդու նյութապաշտական ու վայրագ հակումների հաղթահարման, յուրատեսակ ինքնաբացասման ու ինքնառնչացման ընթացք: Սակայն մարդու և մարդկայինի աստիճանական անկումն այնքան ակնհայտ ու խորն է դարձել, որ մարդը ոչ միայն որպես անհատ, այլև որպես ցեղային տեսակ այլևս անբուժելի հիվանդ է, և այսուհետ կյանքի պատմության փոխարեն մարդիկ ստիպված են լինելու գրել հիվանդության պատմություն¹⁶: Մեր ժամանակների համար, երբ «գործարքն» ավելի կարևոր է դարձել, քան դրա համար վճարվելիք էկզիստենցիալ գինը, պայքարը մարդու և նրա մեջ նստած իր իսկ հակոտնյայի միջև մոտենում է իր սահմանային ձևերին, զլոբալ հակասություն է առաջանում մարդու արարչական էության և նրա ստեղծարար էության զարմանալի

¹³ См. у Гуревич П. С., Феномен деантропологизации человека // Вопросы философии, 2009, **июнь** / Классическая и неклассическая антропология: сравнительный анализ. Центр гуманитарных инициатив, М., СПб., 2018:

¹⁴ Бытие в свободе, или проблема культурной идентичности человека в ситуации онтологического перехода // Человек. RU. Гуманитарный альманах, Новосибирск, 2006, № 2:

¹⁵ См. у Пригов Д. А., Самоидентифицирование // Место печати. Журнал интерпретационного искусства, 2001, էջ 30:

¹⁶ См. у Кутырев В. А., Человек XXI века: уходящая натура // Человек. 2001, № 1, էջ 9:

արդյունքների ու մշակութամարդաբանական առումով դրամատիկական, երբեմն ողբերգական հետևանքների միջև: Մարդը կարող է չհասկանալ նոր ու անծանոթ ուժերի էությունը, կարող է չկանխատեսել դրանց ազդեցության քաղաքակրթական, էկոլոգիական, մարդաբանական հնարավոր հետևանքները, սակայն նա դատապարտված է վաղ թե ուշ անձամբ հատուցելու իր ընդունած կամ չընդունած յուրաքանչյուր որոշման համար: Թե այդ պայքարն ինչպես կհանգուցալուծվի, ցույց կտա ապագան: Էկզիստենցիալ հատուցումն անխուսափելի է: Դասական մոդեռնիզացման երկրներում հսկայական ջանքեր են գործադրվում, որպեսզի վերականգնվեն ավանդական հասարակության արժեքները (սոցիալական պատասխանատվություն, աջակցություն և փոխօգնություն, հոգատար վերաբերմունք միմյանց և բնության հանդեպ և այլն), որոնք ժամանակին դրվել էին առաջադիմության քաղաքակրթական գոհասեղանին: Ուստի այն ամենի նկատմամբ սրտացավ և զգուշավոր վերաբերմունքը, ինչն առաջին հայացքից չի ներառվում արդիականության նախագծի մեջ, պետք է դառնա սոցիալական էկոլոգիայի իմպերատիվ արժեք: Եթե մարդկությունը ցանկանում է Երկիր մոլորակի վրա իր գոյության ժամկետը երկարացնել, ապա պետք է հրաժարվի բացարձակ էվոլյուցիոնիզմի մտասնեռումից ու սահմանափակելով լինելությունը՝ հանուն բնականի (մարդու հոգևոր-մարմնական ամբողջականություն) ու արհեստականի (վիրտուալ իրականություն, արհեստական ինտելեկտ) համագարգացման (կոէվոլյուցիայի) ու համագործակցության, գիտակցական ջանքեր գործադրի հոգուտ էկզիստենցիալ կեցության ամբողջականության պահպանման՝ երբեք չմոռանալով, որ «առանց տրանսցենդենցիայի էկզիստենցիան դառնում է ամուլ և անսեր դիվային ինքնականություն»¹⁷: Մարդը պետք է հավատա, որ, հակառակ տեխնոկրատական ճակատագրապաշտության, հենց ինքն է ընտրում իր ապագան: Ուրեմն աշխարհի հանդեպ պետք է դրսևորել ոչ թե գիտապաշտական (սցիենտիստական), նյութապաշտական, առավել ևս զուտ օգտապաշտական, այլ մարդասիրական (հումանիստական), ֆենոմենոլոգիական, այսինքն՝ արժեքային վերաբերմունք: Որովհետև մարդկային գոյության իրական իմաստի ակունքն ու առանցքը մարդկության պատմության ընթացքում կուտակված և բազմիցս փորձարկված, մարդկային կեցության հարուստ բազմազանությունը ներկայացնող բազմադարյա մշակույթն է: Պատմության քառուղիներում մարդու մեջ մարդկայինի քայքայման, տարրալուծման դեմ պայքարի արդյունավետ և ամենահուսալի միջոցը համամարդկային հումանիստական մշակույթն է, որը սոցիալական միջավայրի անընդհատ բարենորոգման, հասարակական հարաբերությունների և սոցիալական ինստիտուտների հումանիզացման, սոցիալապես պատասխանատու պետության ընձեռած գործիքակազմով

¹⁷ Jaspers K., Vernunft und Existenz. Groningen, 1935, p. 48.

դառնում է արդար հասարակության ձևավորման միակ երաշխավորը: Արդիականության քաղաքական, սոցիալական, հոգեբանական տարատեսակ հանգամանքներից բեկված ու աղճատված, պարզունակացված ու հուսաբեկ մարդը հումանիտար վերակենդանացման կարիք ունի: Հումանիտար վերակենդանացմանը կարող է նպաստել համամարդկային բարոյական համընդգրկուն արժեքների ոգեղեն ակունքների վրա հիմնված կրթադաստիարակչական համակարգի շարունակական զարգացումը, որտեղ համապատասխան միջավայրի ստեղծմամբ առանցքային նշանակություն պետք է տրվի ստեղծագործական, ըստ էության, ինքնարարչական հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

Սոցիալական աշխարհն արհեստածին է, ստեղծվել է մարդու կողմից և մարդու համար, և եթե մարդկանց կողմից ընդունելության չարժանանա, չունենա կենսական նշանակություն և էկզիստենցիալ հագեցվածություն, կկորցնի իր իմաստն ու գոյության անհրաժեշտությունը: Մարդու ընտրությունը միշտ վախճանաբանական հեռանկար ունի, քանզի մարդկային պատմության ընթացքը և նրա վերջաբանը կախված են այն բանից, թե նա ո՞ր ճանապարհով կգնա՝ կյանքի՞, թե՞ մահվան: Եվ քանի որ «մարդկային կեցությունն առաջին հերթին համագոյակցության կամք է» (Օրտեգա-ի-Գասետ), ապա վտանգված գոյությունը փրկելու համար պահն է սթափվելու: Ազատությունն այն պայմանական տարածքն է, որը գտնվում է մարդու իրավասության ներքո. ոչ մի կողմնակի ուժ, ո՛չ չար, ո՛չ բարի, առանց մարդու թույլտվության՝ չի կարող այդ տարածքը մտնել: Միայն մարդուց է կախված, թե նա ո՞ւմ թույլ կտա մուտք գործել իր ազատության այդ գոտին, ո՞ւմ թույլ կտա գործել, իսկ ավելի ճիշտ՝ համագործակցել իր հետ, Աստծո՞ւն, թե՞ սատանային:

Համընդհանուր բարեկեցության տրանսհումանիստական հասարակարգի կառուցումը մարդկությանը երբեք երջանկություն չի բերի, եթե այդպիսի բարեկեցության որոնումներն իրականացվեն մարդու հոգևոր պահանջմունքների ու ոգեղեն ակունքների և համակարգապահական ավանդույթների ընդհանուր համատեքստից դուրս: Արտաքին աշխարհի նկատմամբ (և՛ բնական, և՛ սոցիալական) հսկայական իշխանության հասնելով՝ մարդն ինքն իր նկատմամբ նույնպիսի իշխանության դեռևս չի հասել: Ավելին, ինքն իրեն տիրապետելը դառնում է ավելի խնդրահարույց: Այսօր շատ են մարդուն դեպի անորոշ ապագա տանող, նրա կենսասոցիալական և էկզիստենցիալ ամբողջականությունը տրոհող տարատեսակ կործանարար ուժերը: Մտահոգիչ այս իրավիճակում փիլիսոփայական մարդաբանության ամենակարևոր ուղերձը պետք է լինի հետևյալը. օգնել մարդուն մարդ մնալ, հարազատ լինել թեկուզ ոչ կատարյալ, բայց սեփական բնությանն ու էությանը և ոչ թե վերածվել դրանց կենսատեխնոլոգիական նմանակը ներկայացնող խեղաթյուրված նանոմանակին: Սա է մարդու մարդկային ապագան փրկելու ուղին: Ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների անկասելի թվացող շարունակական առաջընթացն

այսուհետ պետք է իրականացվի մարդու՝ որպես անկրկնելի ցեղային տեսակի պահպանմանը նպատակամղված սոցիալական, իրավական և բարոյագիտական նոր նորմերի ստեղծմամբ, որոնց միջոցով պետք է վերահսկել, իսկ հարկ եղած դեպքում՝ սահմանափակել մարդու սրբություն սրբոց բնությունն անհարկի արհեստական ներխուժման՝ սոցիոմշակութային իմաստով վտանգավոր փորձարկումներից, ըստ էության՝ փրկել **Մարդուն՝ մարդուց**։ Հաղթահարել մարդաբանական ճգնաժամն առանց հոգևոր բարենորոգման անհնարին է։ Մարդկությունը կանգնած է աննախադեպ և որակապես նոր գիտական ու տեխնոլոգիական թռիչքի առջև։ Պետք է հուսալ, որ այդ թռիչքը կնշանավորվի ոչ թե մարդաբանական ճգնաժամի հետագա խորացմամբ, որի հետևանքով մարդը պետք է ստիպված լինի իր տեղը զիջել գուցե գործառությանն առումով ավելի կատարյալ, բայց հոգևոր առումով թերատ հետմարդուն, ինչ-որ կենսակիրեռնետիկական արարածին, այլ նոր ուղի կհարթի դեպի հոգևոր առումով անսահման ինքնակատարելագործման ընդունակ, ավանդույթի Ոգին գնահատող և պահպանող, ավելի Ոգեղեն, ամբողջական ու ինքնաբավ մարդու համար։ «Եթե մտավոր զարգացումը և գիտելիքների ավելացումը, - նկատում է Էքհարտ Թոլը, - չեն հակակշռվում գիտակցականության համապատասխան աճով, ապա դժբախտության և աղետի հնարավորությունը շատ մեծ է»¹⁸։ Մի իմաստուն ասել է, թե ամեն բարիքի մեջ կա չարիքի բաժին, և ամեն չարիքի մեջ՝ բարիքի։ Ժամանակն է իմաստուն դառնալու։ Մարդկությունը հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ ընտրությունն անհրաժեշտ է, հետևանքը՝ անխուսափելի։ Այսօրվա սխալը անուղղելի կարող է լինել, այսօրվա մեղքը՝ մահացու։

ГАГИК СОГОМОНЯН – Потребительский менталитет: Экзистенциальные соображения. – Цивилизация постепенно приближается к опасной грани, полной соблазнов, за которой влияние неконтролируемых сил может стать роковым для человека. Отсутствие культурно-антропологической укорененности в бытии порождает парадоксальное социально-психологическое ощущение исчезающей реальности. Вместо реальности формируется сверхреальность (гиперреальность) или виртуальная реальность, где не имеет значения, что реально, а что нет. Жизнь непрерывно разворачивается как трансцендентное движение по созданию симулякров и иллюзий, скрывающих отсутствие оригинала реальности. Духовные ценности постепенно трансформируются и становятся символическими образами товаров. Формируется новый слой людей с узкими и ограниченными взглядами и стремлениями, для которых основным критерием идентификации становится пренд. Человек отказывается от долгосрочных целей, что, упрощая бытие, приводит к экзистенциальной девальвации жизни. «Сделка» оказывается более значимой, чем экзистенциальная цена, которую за неё предстоит заплатить. В условиях современных цивилизационных трансформаций для сохранения экзистенциальной целостности необходимо отказаться от навязчивой идеи абсолютного эволюционизма, и, ограничив становление, приложить осознанные усилия к содействию соразвитию (коэволюции) естественного (духовно-телесной целостности человека) и искусственного (виртуальной реальности, искусственного интеллекта) – во имя сохранения целостности экзистенциального бытия.

¹⁸ Թոլ Է., Ներկայի ուժը, Փիլիսոփայական դիտարկումներ։ Թարգմանությունների ժողովածու / Թարգմ. Վ. Ա. Միրզոյան, Եր., Մեկնարկ, 2025, էջ 148։

Ключевые слова: *потребительский менталитет, тело, симулякр, виртуальная реальность, симуляция, гиперреальность, массовая культура, экзистенциальная целостность, экзистенциальная цена*

GAGIK SOGHOMONYAN – *Consumer Mentality: Existential Considerations.* – Civilization is gradually approaching a dangerous boundary, full of temptations, beyond which the influence of uncontrolled forces may prove fatal for humanity. The absence of cultural-anthropological rootedness in existence gives rise to a paradoxical socio-psychological sensation of a vanishing reality. In place of reality, a hyperreality or virtual reality takes shape, where it no longer matters what is real and what is not. Life unfolds as a transcendental movement of creating simulacrum and illusions that mask the absence of the original reality. Spiritual values gradually undergo transformation and become symbolic images of commodities. A new stratum of people with narrow and limited views and aspirations is being formed, for whom brand identity becomes the primary criterion of self-identification. Man relinquishes long-term goals, which, by simplifying existence, leads to an existential devaluation of life. The "deal" becomes more important than the existential price to be paid for it. In the context of current civilizational transformations, preserving existential integrity requires abandoning the obsession with absolute evolutionism and, by limiting being, making conscious efforts toward the co-development (coevolution) of the natural (the spiritual-bodily wholeness of the human being) and the artificial (virtual reality, artificial intelligence) - for the sake of preserving the wholeness of existential being.

Key words: *civilizational transformation, body, simulacrum, virtual reality, simulation, hyperreality, mass culture, existential integrity, existential price*

Reference

- Bodriyar Zh, Prozrachnost' zla, M., Dobrosvet, 2001 (in Russian).
 Bodriyar Zh, Simulyakry i simulyatsiya, M., Dobrosvet, 2000 (in Russian).
 Bodriyar Zh., Obshestvo potrebleniya, M., Izdatelstvo AST, 2021 (in Russian).
 Bodriyyar Zh., V teni molchalivogo bol'shinstva, ili konets sotsial'nogo, Yekaterinburg, 2000 (in Russian).
 Bytiye v svobode, ili problema kul'turnoy identichnosti cheloveka v situatsii ontologicheskogo perekhoda // Chelovek. RU. Gumanitarnyy al'manakh, Novosibirsk, 2006, № 2 (in Russian).
 Gurevich P. S., Fenomen deantropologizatsii cheloveka // Voprosy filosofii, 2009 (in Russian).
 Gurevich P. S., Klassicheskaya i neklassicheskaya antropologiya: sravnitel'nyy analiz, Tsentr humanitarnykh initsiativ, M., SPb. 2018 (in Russian).
 Hamvash B., Jrhoshy // Atayan Ed., Hogi yev azatutyun, Yerevan, Sargis Khachents, 2005 (in Armenian).
 Harut'yunyan Ed., Sotsialakan kyanki bemakanatsman ekzistentsial giny. Mardy goyabanakan tsughakum, Banber Yerevani hamalsarani. Pilisopayutyun, Hogebanutyun, 2024, Vol. 15, № 3 (45) (in Armenian).
 Jameson, Postmodernism, 1991, Duke University Press.
 Jaspers K., Vernunft und Existenz. Groningen, 1935.
 Kut'yev V. A., Chelovek XXI veka: ukhodyashchaya natura // Chelovek. 2001, № 1 (in Russian).
 Prigov D.A., Samoidentizvanzstvo // Mesto pechati. Zhurnal interpretatsionnogo isskustva, 2001 (in Russian).
 Tolle E., Nerkayi uzhy, Pilisopayakan ditarkumner. Targmanutyunneri zhoghovatsu / Targm. V.A. Mirzoyan, Yer., Meknark, 2025 (in Armenian).

ԷԱԿԻ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԽՆԴԻՐԸ ԲԻՈԷԹԻԿԱՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԼԵՎՈՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ՝ 
Երևանի պետական համալսարան

Էակի բարոյական կարգավիճակի որոշման խնդիրը բիոէթիկական ժամանակակից քննարկումներում առանցքային խնդիր է: Այդ հարցը մասնավորապես էական նշանակություն ունի բիոէթիկական այնպիսի խնդիրների բարոյական տեսանկյունից թույլատրելիության հարցի որոշման գործում, ինչպիսիք են, օրինակ՝ էվթանազիան, հղիության արհեստական ընդհատումը, կենդանիների իրավունքների վերագրումը և այլն: Հոդվածում քննարկվում են էակի բարոյական կարգավիճակի որոշման չորս առանցքային մոտեցումներ՝ **տեսակապաշտություն, զգայունություն, ինքնագիտակցություն ու ճանաչողություն** և վերջապես՝ **աստիճանականություն**: Վերլուծության արդյունքում բացառվում է տեսակապաշտության սկզբունքի կիրառման բարոյական տեսանկյունից ընդունելիությունը: Այնուհետև հիմնավորվում է, որ զգայունության և ինքնագիտակցության-ճանաչողության սկզբունքների առանձին-առանձին դիտարկման արդյունքում հանգում ենք անորոշության, հակասականության, իսկ որոշ իրավիճակների քննարկման համատեքստում այդ մոտեցումների կիրառումը երբեմն նաև ինտուիտիվ առումով համոզիչ չէ: Նշված երեք առանցքային մոտեցումների համեմատությամբ՝ աստիճանական մոտեցումն ունի որոշ առավելություններ: Աստիճանական մոտեցումը էակի բարոյական կարգավիճակի սահմանման այն մոտեցումն է, որի համաձայն՝ բարոյական կարգավիճակը չունի բաժանարար բնույթ, այլ արտահայտվում է աստիճանաբար: Այս մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ բոլոր կենդանի էակներն ունեն բարոյական կարգավիճակ, սակայն այդ կարգավիճակի ուժգնությունը կամ խտությունը կարող է տարբեր լինել՝ կախված նրանց ունեցած հատկություններից և շահերի բազմազանությունից: Աստիճանական մոտեցումն ունի համեմատական առավելություններ այլ սկզբունքների նկատմամբ, քանի որ այն տեսականորեն ավելի ճկուն է, ինտուիվ առումով՝ առավել համոզիչ, ներառական և անհակասական:

* **Լևոն Բաբաջանյան** – փիլ. գիտ. թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ

Левон Бабаджанян – кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики, ЕГУ

Levon Babajanyan – Candidate of Philosophical Sciences, Associate Professor at the Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics, YSU

Էլ. փոստ՝ levonbabajanyan@ysu.am <https://orcid.org/0009-0004-3734-0030>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 20.05.2025

Գրախոսվել է՝ 02.06.2025

Հաստատվել է՝ 24.10.2025

© The Author(s) 2025

Բանալի բառեր – բիոէթիկա, անձ, բարոյական կարգավիճակ, տեսակապաշտություն, զգայունություն, ինքնագիտակցություն, ճանաչողական կարողություններ, աստիճանական մոտեցում, հղիության արհեստական ընդհատում, կենդանիների իրավունքներ

Բիոէթիկայի համատեքստում առանցքային խնդիր է էակի (մարդ, սաղմ, պտուղ, կենդանի և այլն) բարոյական կարգավիճակի որոշման հարցը: Այսինքն՝ այն խնդիրը, թե ինչ պայմաններ պետք է բավարարի տվյալ էակը, որպեսզի նրա շահերն ու իրավունքները հաշվի առնվեն բիոէթիկական խնդիրներ լուծելիս: Օրինակ՝ ոչ կամավոր էվթանազիայի թույլատրելիության որոշման պարագայում կարևոր է հասկանալ, թե կոմայի մեջ գտնվող պացիենտը ինչ բարոյական կարգավիճակ ունի, որպեսզի ըստ այդմ որոշվի՝ նրա կյանքն ընդհատելը հակասո՞ւմ է նրա կարգավիճակից բխող իրավունքներին կամ շահերին, թե՛ ոչ: Կամ՝ հղիության արհեստական ընդհատման թույլատրելիության որոշման պարագայում կարևոր է նախ պարզել սաղմի կամ պտղի բարոյական կարգավիճակը, որպեսզի այնուհետև որոշվի՝ արդյո՞ք տվյալ պտղի կամ սաղմի հեռացումը հակասում է նրա կարգավիճակից բխող իրավունքներին և շահերին: Բիոէթիկական մյուս՝ ակտիվորեն քննարկվող խնդիրներից մեկի՝ կենդանիներին իրավունքների վերագրման պարագայում էլ կարևոր է հասկանալ, թե կենդանիների և մարդկանց բարոյական կարգավիճակները ինչ հիմքերով են տարբերվում, որպեսզի որոշվի՝ արդյո՞ք կենդանիները ունեն կամ կարող են ունենալ մարդուն համաչափ իրավունքներ և շահեր: Այս խնդրի քննարկումը զուտ տեսական հարցադրում կամ մտավարժանք չէ, այլ կարող է հանգեցնել գործնական հստակ հետևանքների, օրինակ՝ էվթանազիայի, հղիության արհեստական ընդհատման, մսակերության, կենդանիներին գիտափորձերում օգտագործելու և բիոէթիկական այլ խնդիրներ թույլատրելուն, կանոնակարգելուն կամ, միգուցե, ընդհանրապես արգելելուն: Ուստի էակի բարոյական կարգավիճակի որոշման խնդրի ուսումնասիրությունն ու բնութագրությունն ավելի քան արդիական են:

Բիոէթիկական հետազոտություններում էակի բարոյական կարգավիճակի բնութագրման և սահմանման խնդրի լուծումն ուղղակիորեն առնչվում է էակի անձնային հատկություններ ունենալու հարցին: Ուստի այս խնդրի լուծման ճանապարհին առաջին բարդությունը, որին կարելի է հանդիպել (ինչպես և գրեթե բոլոր փիլիսոփայական խնդիրների դեպքում) սահմանումների հարցն է: Պետք է նախապես առնվազն սահմանել «էակ», «անձ» և «բարոյական կարգավիճակ» հասկացությունները: Այս երեքից «էակ» հասկացության սահմանումն ամենապարզն է՝ շնչավոր գոյացություն, արարած¹: Իմաստային դժվարություններ են առաջանում, երբ փորձում ենք սահմանել «անձ» և «բարոյական կարգավիճակ» հասկացությունները: Սկսենք «անձ»-ի սահմանումից:

¹ Տե՛ս Ադայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976, <http://www.nayiri.com/imaginedictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%A7%D5%A1%D5%AF> (մուտք՝ 24. 05. 2025):

Հայերեն բացատրական բառարաններում անձ հասկացությունը սահմանվում է հիմնականում որպես «անհատ», «մարդ»², որոնցում նշվում է, որ այդ հասկացությունները կարող են կիրառվել որպես հոմանիշներ³⁴: Սակայն դրանք հոմանիտար և հասարակագիտական տարբեր գիտակարգերում՝ իրավաբանություն, հոգեբանություն, սոցիոլոգիա և այլն, հաճախ տարբեր իմաստներով են օգտագործվում: Չանդրադառնալով հասկացության լեզվաբանական և գործածական առանձնահատկությունների մանրամասնություններին՝ կարող ենք ընդունել, որ միշտ չէ, որ «մարդ», «անհատ» և «անձ» հասկացություններն իմաստային նույն բովանդակությունն ունեն: Պարզության համար ընդունենք, որ «մարդ» հասկացությունը թեև գործածական իմաստով լայն նշանակություն ունի, սակայն այն գերազանցապես օգտագործվում է զուտ կենսաբանական-մարդաբանական իմաստով, այսինքն՝ մարդ նշանակում է «Homo Sapiens» կենսաբանական տեսակին պատկանող էակ: «Անհատ» հասկացությունն առավել գոյաբանական իմաստ ունի, այն նշանակում է առանձին գոյություն ունեցող տարր, միավոր, ամբողջի մասնիկ: Խնդիրը քիչ ավելի բարդ է «անձ» հասկացության պարագայում, քանի որ այն գործնականում շատ ավելի լայն կիրառություն ունի: Հոգեբանական իմաստով՝ անձը բարդ հոգեբանական կառուցվածք է, որը ներառում է խառնվածքը, բնավորությունը, դիրքորոշումները, կարծիքները, համոզմունքները և այլն⁵: Փիլիսոփայական-բարոյագիտական իմաստով անձ ասելով հասկանում ենք այնպիսի էակ, որին բնորոշ են որոշակի անձնային հատկություններ, օրինակ՝ գիտակցություն, բանականություն, ինքնագիտակցություն, հուզականություն, զգայունություն և այլն: Այս համատեքստում նկատենք, որ անձնային որոշակի հատկություններ, մարդուց բացի, ունեն նաև այլ կենդանիներ, օրինակ՝ կաթնասունները՝ զգայունություն, հուզականություն և այլն: Ուստի այս համատեքստում մարդ լինել, այսինքն՝ Homo Sapiens տեսակին պատկանել դեռևս չի նշանակում ունենալ անձնային բոլոր հատկանիշները, և հակառակը՝ անձնային որոշակի հատկանիշներ կարող են ունենալ նաև ոչ մարդիկ:

Այժմ անդրադառնանք «բարոյական կարգավիճակ» հասկացության սահմանմանը: Նախապես նշենք, որ փիլիսոփայական և բարոյագիտական հայալե-

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., 1969
http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A1%D5%B6%D5%B1 (մուտք՝ 24. 05. 2025):

⁴ Տե՛ս **Սուքիասյան Ա. Մ.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2009

http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=47&dt=HY_HY&query=%D5%A1%D5%B6%D5%B1 (մուտք՝ 24. 05. 2025):

⁵ Տե՛ս **Նալչաջյան Ա. Ա.**, Սոցիալական հոգեբանություն, Եր., «Զանգակ-97», 2004, էջ 175:

զու հետազոտություններում, ի տարբերություն օտարալեզու հետազոտությունների, այս հասկացությունը բավարար չափով ուսումնասիրված չէ: Մասնագիտական աշխատություններում առավել ընդունված տեսակետի համաձայն՝ բարոյական կարգավիճակով օժտված են այն էակները, որոնց հանդեպ բարոյական գիտակցության տեր մարդիկ ունեն որոշակի բարոյական պարտականություններ⁶: Թեև բարոյական պարտականությունների աղբյուրը կարող է տարբեր լինել, բայց դրա առկայությունը նշանակում է, որ բարոյական կարգավիճակ ունեցող էակի նկատմամբ այլ էակներն ունեն առնվազն նրա բարոյական իրավունքները չխախտելու պարտականություն: Ինչպես իրավացիորեն նկատում է ամերիկացի փիլիսոփա Դեյվիդ Դեգրացիան, ասել, թե մեկն ունի բարոյական կարգավիճակ, նույն է թե ասել, որ ա) բարոյական ազենտները ունեն պարտականություններ տվյալ մեկի նկատմամբ, բ) տվյալ մեկն ունի շահեր, գ) պարտականությունները հիմնված են տվյալ շահերի վրա⁷: Օրինակ՝ եթե պնդում ենք, որ ինչ-որ մեկն ունի ապրելու իրավունք, ապա սրանից հետևում է, որ այդ մեկն ունի ապրելու շահ, և այլ բարոյական ազենտներն ունեն այդ շահը հարգելու և չոտնահարելու պարտականություն, այլ կերպ՝ տվյալ մեկի կյանքը չվտանգելու պարտականություն: Ընդ որում՝ ոտնահարել ինչ-որ մեկի իրավունքներն այս համատեքստում նշանակում է բարոյապես սխալ գործել տվյալ մեկի նկատմամբ: Մեկ այլ օրինակ՝ եթե Պողոսն ունի իրավունք տիրապետելու մասնավոր սեփականության, ապա ուրիշներն ունեն այդ սեփականությունը չվնասելու կամ Պողոսից չգողանալու պարտականություն: Եթե ուրիշները Պողոսի սեփականությունը վնասում կամ գողանում են, ապա նրանք վնասում են ոչ թե սեփականությունը, այլ Պողոսին, քանի որ Պողոսից և նրա սեփականությունից միայն Պողոսն է, որ օժտված է բարոյական կարգավիճակով: Այստեղից հետևություն. բարոյապես սխալ կարելի է գործել միայն նրանց նկատմամբ, ովքեր ունեն բարոյական որոշակի կարգավիճակ: Ուստի բարոյական կարգավիճակ ունենալ նշանակում է պաշտպանված լինել այլոց կողմից իր բարոյական կարգավիճակը հարգելու պարտականությամբ⁸: Անշուշտ, բարոյական կարգավիճակի այսպիսի բնութագրումը փաստական պնդում չէ, այլ սահմանում է, ուստի և սահմանման խնդիր է, թե ինչպես մենք կհասկանանք բարոյական կարգավիճակ հասկացությունը: Նշենք միայն, որ սա ամենաընդունված մոտեցումն է:

Եվ ահա հարցը. ո՞րն է բարոյական կարգավիճակի աղբյուրը, ի՞նչ հատկություններ ունենալու պարագայում է, որ տվյալ էակը կարող է ունենալ բարոյա-

⁶ Տե՛ս **Warren M. A.**, *Moral Status: Obligations to Persons and Other Living Things*, Clarendon Press, Oxford, 1997, էջ 9-10:

⁷ Տե՛ս **DeGrazia D.**, *Moral Status As a Matter of Degree?* *The Southern Journal of Philosophy*, 46(2), 2008, էջ 183:

⁸ Տե՛ս **Silvers A.**, *Moral Status: What a bad idea!*, *Journal of Intellectual Disability Research*, volume 56 part 11, 2012, էջ 1014:

կան կարգավիճակ: Այստեղ է, որ բարոյագետներն ու ընդհանրապես փիլիսոփաները ունեն խորքային անհամաձայնություններ: Օրինակ՝ բարոյագիտական էգոիստները պնդում են, որ էակի պարտականությունների աղբյուրն առաջին հերթին և երբեմն միայն իր շահերն ու իրավունքներն են. յուրաքանչյուրն առաջին հերթին և երբեմն միայն բարոյական պարտականություններ ունի միայն ինքն իր, իր Ես-ի նկատմամբ, հետևաբար բարոյական կարգավիճակով օժտված է առաջին հերթին և երբեմն միայն իր Ես-ը: Խտրական հայացքներ ունեցողները, օրինակ՝ ռասիստները, կարծում են, որ բարոյական կարգավիճակ ունեն առաջին հերթին և երբեմն միայն իրենց ռասային պատկանող էակները, սեքսիստները՝ առաջին հերթին և միայն իրենց սեռին պատկանող էակները⁹, և այսպես շարունակ: Անգամ որոշ հեղինակներ պնդում են, որ բարոյական կարգավիճակի նման բնութագրումը մարդակենտրոն կանխակալության դրսևորում է¹⁰, այսինքն՝ մարդուն այլ էակներից գերակայություն տալու ձև է:

Սակայն այս մոտեցումները մասնագիտական հետազոտություններում հիմնականում լուսանցքային մոտեցումների համբավ ունեն, քանի որ չունեն բարոյագիտական և գիտական ծանրակշիռ հիմնավորումներ:

Ուստի անդրադառնանք բիոէթիկական հետազոտություններում էակի բարոյական կարգավիճակի որոշման վերաբերյալ առավել քննարկված և ընդունված մոտեցումներին:

Տեսակապաշտություն (Speciesism)

Ըստ այս մոտեցման՝ էակի բարոյական կարգավիճակի աղբյուրը Homo Sapiens-Մարդ տեսակին պատկանելու պայմանն է: Ինչպես նկատում է բրիտանացի փիլիսոփա Թիմ Չափըլը, տեսակապաշտությունը համոզմունք է, համաձայն որի՝ տեսակների միջև տարբերությունը կարող է և պետք է լինի ինքնին բավարար հիմք նրանց բարոյական տարբեր նշանակություն տալու համար¹¹: Չափըլը կարծում է, որ տեսակապաշտությունը թեև խտրականության դրսևորում է, սակայն այն չպետք է շփոթել խտրականության այլ դրսևորումների, օրինակ՝ ռասիզմի կամ սեքսիզմի հետ, որոնք բարոյապես կամ գիտականորեն հիմնավորված չեն: Տեսակապաշտությունը տեսակների միջև խտրական վերաբերմունքը հիմնավորում է հետևյալով. բարոյական գնահատման համար անհրաժեշտ է, որ տվյալ էակն ունենա բարոյական պատասխանատվություն և իրազեկվածություն, վերացական մտածողություն և անձնային ինքնություն,

⁹ Տե՛ս **Warren M. A.**, *Moral Status: Obligations to Persons and Other Living Things*, Clarendon Press, Oxford, 1997, էջ 6-7:

¹⁰ Տե՛ս **Birch T. H.**, *Moral Considerability and Universal Consideration*, *Environmental Ethics*, 15, No. 4, 1993, էջ 313-332:

¹¹ Տե՛ս **Chappell T.**, *In Defence of Speciesism*. In D. S. Oderberg & J. A. Laing (Eds.), *Human Lives* Palgrave Macmillan, 1997, էջ 96:

ինչը բնորոշ է միայն մարդ տեսակին պատկանող կենդանիներին¹², և հետևաբար բարոյական կարգավիճակով օժտված են և պետք է օժտված լինեն միայն Homo Sapiens տեսակին պատկանող էակները:

Պետք է նշել, սակայն, որ տեսակապաշտությունը քննարկվող խնդրի համատեքստում ամենաքննադատված դիրքորոշումներից է նաև: Բանն այն է, որ, ինչպես արդեն նշվեց, տեսակապաշտությունը բարոյական կարգավիճակով և բարոյական գերակայությամբ օժտում է միայն մարդկանց, ինչից բխում է, որ այլ կենդանիները չունեն բարոյական կարգավիճակ, հետևաբար՝ նաև իրավունքներ, ուստի բարոյական ազենտները չունեն բարոյական պատասխանատվություն նրանց շահերը հաշվի առնելու կամ նրանց իրավունքները պաշտպանելու համար, ինչը բարոյագիտական տեսության ինտուիտիվ համոզության սկզբունքը չի բավարարում: Այս քննադատությանն է մասնավորապես անդրադառնում կենդանիների իրավունքների իսպանացի պաշտպան և բարոյագետ Օսկար Հորտան, ըստ որի՝ տեսակապաշտության հիմքում ընկած են միմյանց փոխապահանավորող երկու տեսակի՝ նկարագրական և նորմատիվ պնդումներ: Նկարագրական պնդումները վերաբերում են մարդկանց և կենդանիների միջև տեսակային տարբեր հատկությունների նկարագրությանը, օրինակ՝ այն, որ մարդիկ ունեն դատողունակություն, վերացական մտածողություն, բարոյական պատասխանատվություն, իսկ կենդանիները չունեն այդ ամենը: Ըստ Հորտայի՝ տեսակապաշտության նկարագրական բաղադրիչներն անհրաժեշտաբար հանգեցնում են նաև նորմատիվ եզրակացությունների: Այսինքն՝ եթե կենդանիները չունեն մարդուն բնորոշ տեսակային նշված հատկությունները, ապա չպետք է ունենան նաև մարդկանց հետ հավասար իրավունքներ և բարոյական կարգավիճակ¹³: Հետևաբար, տեսակապաշտությունն ու կենդանիներին իրավունքների վերագրումն անհամատեղելի մոտեցումներ են: Այս է պատճառը, որ տեսակապաշտությունը երբեմն դիտվում է որպես կանխակալ մտածողության տեսակ¹⁴, որն անհիմն կերպով բարոյական գերակայություն է վերագրում միայն մարդ տեսակին պատկանող էակներին:

Մակայն նորմատիվ հակասություններից զատ՝ տեսակապաշտության նկարագրական բաղադրիչները նույնպես անհակասական չեն: Եթե բանականության, բարոյական պատասխանատվության և այլ հատկություններով պայմանավորված՝ մարդ տեսակին պատկանելը բավարար հիմք է բարոյական կարգավիճակ ունենալու համար, ապա գոյություն ունեն մարդ տեսակին պատկանող էակներ, որոնք չունեն կամ դեռ չունեն այդ հատկությունները: Օրինակ՝ նորածին երեխաները, որոնց վերացական մտածողությունն ու բարոյական պա-

¹² Առավել մանրամասն տե՛ս **Chappell T.**, նշվ. աշխ., էջ 96–108:

¹³ Տե՛ս **Horta O.**, What is Speciesism? *Environmental Ethics*, 31(4), 2009, էջ 333–350:

¹⁴ Տե՛ս **Milligan T.**, Speciesism as a Variety of Anthropocentrism, in R. Boddice (Ed.), *Anthropocentrism: Humans, Animals, Environments*, Brill Academic Publishers, 2011, էջ 223–244:

տասխանատվությունը դեռևս ձևավորված չեն, ուստի, ըստ տեսակապաշտության, անորոշ է՝ արդյո՞ք նրանք պետք է ունենան բարոյական կարգավիճակ, թե՞ ոչ: Մի կողմից նրանք պատկանում են մարդ տեսակին, մյուս կողմից չունեն բարոյական կարգավիճակ ունենալու համար նշված հատկությունները:

Ինչ վերաբերում է կենդանիներին բարոյական կարգավիճակով օժտելու և տեսակապաշտության անհամատեղելիությանը, ապա այս հարցում նույնպես միանշանակ չի կարելի ընդունել, որ դրանք անհամատեղելի մոտեցումներ են¹⁵: Հորտայի դիտանկյան մի քննադատության համաձայն՝ տեսակապաշտության նկարագրական և նորմատիվ բաղադրիչների այս փոխադարձանավորումն անընդունելի է, քանի որ ամեննին էլ տեսակապաշտության նկարագրական բաղադրիչներից անհրաժեշտաբար նորմատիվ պնդումներ չեն բխում. նույն կամ նման փաստական պնդումներից կարելի է հանգել տարբեր եզրակացությունների: Այսինքն՝ եթե անգամ կենդանիներն օժտված չեն բարոյական կարգավիճակ ունենալու համար տեսակապաշտության դիրքերից անհրաժեշտ հատկություններով, ապա սա չի նշանակում, որ նրանց բարոյական կարգավիճակը չի կարող ունենալ նաև այլ աղբյուրներ¹⁶:

Տեսակապաշտության դիրքորոշումն ավելի ծանրակշիռ քննադատության է ենթարկվել ուտիլիտարիստական հայացքներ ունեցող բարոյագետների կողմից, օրինակ՝ ավստրալացի փիլիսոփա և բարոյագետ Փիթեր Սինգերի: Ըստ նրա՝ էակի գուտ տեսակային տարբերությունը չի կարող որոշել նաև նրա բարոյական կարգավիճակի տարբերությունը¹⁷: Ներկայացնենք նրա փաստարկը ստորև:

Զգայունություն (Sentience)

Սինգերը կարծում է, որ տեսակապաշտությունը ռասիզմի և սեքսիզմի նման խտրական վերաբերմունքի ձև է, որը չունի բարոյական որևէ հիմնավորում¹⁸: Տեսակապաշտության դրսևորումները հատկապես նկատելի են կենդանական սննդի սպառման վերաբերյալ բարոյագիտական քննարկումներում: Օրինակ՝ այն դեպքերում, երբ մարդիկ որպես սնունդ են օգտագործում այլ կենդանիների այն հիմնավորմամբ, որ վերջիններս պարզապես մարդկային տեսակին չեն պատկանում, և ոչ թե այն հիմնավորմամբ, որ նրանք օժտված չեն բարոյական կարգավիճակ ունենալու համար անհրաժեշտ այս կամ այն հատկությունով: Ուստի տեսակապաշտության կանխակալությունից խուսափելու համար պետք է ունակ լինենք ընդունելու, որ բոլոր այն էակները, որոնք

¹⁵ Տե՛ս **Zamir T.**, *Ethics and the Beast: A Speciesist Argument for Animal Liberation*, Princeton University Press, 2007, էջ 3-15:

ՎԱՆԵՐԻԱ ՍՈՎՈՒՂՉԻԿ – Գիտական գիտելիքի մարդկայնացման և դրա վերափոխման ավանդական կենսաէթիկական մեխանիզմները բաց գիտության դարաշրջանում – Հոգեվաճում քննարկվում են գիտական գիտելիքի մարդասիրական վերահսկողության համար կիրառվող ավանդական կենսաէթիկական մեխանիզմները: Այս հիմնարար մեխանիզմները ներառում են կենսաէթիկական սկզբունքներ և ուղեցույցներ՝ որպես հետազոտողներին տրվող առաջարկություններ, կամավոր տեղեկացված համաձայնություն, ինչպես նաև (կենսա)էթիկայի հանձնաժողովների կողմից իրականացվող էթիկական փորձաքննություն:

Ավանդական կենսաէթիկական վերահսկողության մեթոդաբանական հիմքը ձևավորվում է կենսաէթիկայի այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են՝ միջգիտակարգայնությունը, գործնական կողմնորոշվածությունը, պլյուրալիստական ունիվերսալիզմը, անձնակենտրոն մոտեցումը և կոլեգիալ որոշումների ընդունումը:

Բաց գիտության առաջացման համատեքստում վերը նշված մեխանիզմներն անխուսափելիորեն ենթարկվում են փոփոխությունների: 21-րդ դարում ձևավորված նոր գիտական հարացույցը բնորոշվում է առաջին հերթին արհեստական բանականության գործիքների համատարած կիրառմամբ, ինչպես նաև գիտելիքի թափանցիկության և հասարակության համար բաց լինելու զարգացմամբ: Մա առավել ընդգծում է մարդու և բնության պաշտպանության, ինչպես նաև հետազոտությունների հումանիստական ուղղվածության հարցերը: Բաց գիտության պայմաններում ձևավորվում են գիտելիքի վերահսկման կենսաէթիկական նոր միջոցներ, սակայն ավանդական մեխանիզմները շարունակում են գործել: Դրանք էապես արդիականացվում են ժամանակակից աշխարհում, դրանց կիրառման շրջանակն ընդլայնվում է՝ դուրս գալով կենսաբժշկության սահմաններից (ինչպես բնորոշ էր դասական կենսաէթիկային), իսկ դրանց օրինականացման և կիրառման ազգային առանձնահատկությունները դառնում են առավել նշանակալի:

Հիմնվելով միջազգային փորձի և Բելառուսի Հանրապետության փորձի ուսումնասիրության վրա՝ հոդվածում առաջարկվում են ժամանակակից ուղիներ (կենսա)էթիկայի հանձնաժողովների գործունեության փոխակերպման, կամավոր տեղեկացված համաձայնության գործելակերպերի, ինչպես նաև կենսաէթիկական խնդիրներին առնչվող միջազգային և ազգային խորհրդատվական փաստաթղթերի մշակման ու կատարելագործման համար:

Բանալի բառեր – բիոէթիկական մեխանիզմներ, գիտական հետազոտություն, բաց գիտություն, մարդկայնացում, տեղեկացված համաձայնություն, (բիո)էթիկայի հանձնաժողովներ, խորհրդատվական փաստաթղթեր

VALERYA SOKOLCHIK – *Traditional Bioethical Mechanisms for the Humanization of Scientific Knowledge and Their Transformation in the Era of Open Science.*—

The article examines traditional bioethical mechanisms implemented to oversee scientific knowledge for its humanization. These fundamental mechanisms include the incorporation of bioethical principles and guidelines into recommendations for researchers, voluntary informed consent, and ethical review conducted by (bio)ethics committees. The methodological foundation of traditional bioethical oversight of scientific knowledge is based on bioethics' emphasis on transdisciplinarity, practical orientation, pluralistic universalism, personal focus, and collegial decision-making.

In the context of the emergence of open science, the aforementioned mechanisms inevitably undergo changes. The new scientific paradigm that formed in the 21st century is characterized primarily by the pervasive use of artificial intelligence tools, as well as the development of transparency and openness of knowledge to society, which further emphasizes issues of protecting humans and nature, and the humanistic orientation of research. Alongside the formation of new bioethical means of knowledge oversight in open science, traditional mechanisms continue to be used. They are significantly modernized in the contemporary world, their scope of application expands beyond biomedicine (as was established in classical bioethics), and national specifics of their legitimization and application gain greater importance.

Based on the study of international experience and the experience of the Republic of Belarus, the research proposes modern pathways for transforming the activities of (bio)ethics committees, practices of voluntary informed consent, and the development and improvement of international and national advisory documents on bioethical issues.

Key words: *bioethical mechanisms, scientific research, open science, humanization, informed consent, (bio)ethical committees, advisory documents*

References

- ALLEA (European Federation of Academies of Sciences and Humanities) (2023) The European Code of Conduct for Research Integrity. Revised edition. Berlin. DOI: 10.26356/ECOC.
- Beauchamp T.L. (2011) 'Informed consent: its history, meaning, and present challenges', Cambridge Quarterly of Healthcare Ethics, 20(4), pp. 515–523. DOI: 10.1017/S0963180111000259.
- Beauchamp T.L. and Childress, J.F. (2013) Principles of biomedical ethics. 7th edn. Oxford: Oxford University Press.
- Bekbergenova Z., Tazhibayeva D., Akanov D. et al. (2019) 'Activities of the local bioethical committee of the Republic of Kazakhstan', European Journal of Public Health, 27(Suppl. 3). URL: https://academic.oup.com/eurpub/article/27/suppl_3/ckx186.094/4555717.
- Carroll S.R., Herczog E., Hudson M. et al. (2021) 'Operationalizing the CARE and FAIR Principles for Indigenous data futures', Scientific Data, 8(1). DOI: 10.1038/s41597-021-00892-0.
- Crowly F.P. (2024) 'Declaration of Helsinki: Full paragraph-by-paragraph comparison indicating changes in version 19 October 2024 compared with the most previous version of 19 October 2013'. Zenodo. DOI: 10.5281/zenodo.13997192
- Dobrovol'noe informirovanoe soglasie (2022) / nauch. red. A.G. Chuchalin, E.G. Grebenshchikova. M.: Veche (in Russian).
- Goloborodko, N.V., Sokolchik, V.N. i Aleksandrov, A.A. (2020) Rekomendatsii po polucheniiu informirovannogo soglasiia na uchastie v nauchnom issledovanii: ucheb.-metod. posobie. Minsk: BelMAPO (in Russian).
- Iokhansson, I. i Line, N. (2019) Meditsina i filosofiia (Vvedenie v XXI stoletie): ucheb. posobie / per. s angl. pod red. A.G. Chuchalina. M.: Atmosfera: Veche (in Russian).
- Ydin, B.G. i Tishchenko, P.D. (2007) Filosofskie aspekty biomeditsinskikh issledovanii. V: Etichnaia ekspertiza biomeditsinskikh issledovanii v gosudarstvakh-uchastnikakh SNG (sotsial'nye i kul'turnye aspekty). SPb.: IuNESKO, Forum komitetov po etike SNG. S. 50-69 (in Russian).
- UNESCO (2006). Rukovodstvo №2 Deiatel'nost' komitetov: pravila i protsedury (2006) (in Russian).

- Köhler, J. Reis A., Saxena, A. ‘Survey of national ethics and bioethics committees’ (2020). Bull. World Health Organ; Vol. 99; 2;138–147. DOI: 10.2471/BLT.19.243907.
- Letov, O.V. (2009) Bioetika i sovremennaja meditsina. M.: URSS (in Russian).
- Pahlevan-Ibrekic C., Sokolchik V., Sitorus R., Elif Ekmekci P., Razuvanu A., Kaplan Ü., Prawiroharjo P., & RDA Artificial Intelligence and Data Visitation WG. (2025). Guidance for Ethics Committees Reviewing AI and DV. Research Data Alliance. DOI: 10.15497/RDA00122.
- Potter, V.R. (2002) Bioetika. Most v budushchee. Kiev: Vadim Karpenko (in Russian).
- Riddick F.A. Jr. (2003) ‘The code of medical ethics of the American medical association’. Ochsner J. 2003 Spring;5(2):6–10.
- Sokolchik, V.N. (2023) Otkrytaia nauka kak novaia paradigma nauchnykh issledovaniy: problemy i perspektivy (na primere biomeditsinskikh issledovaniy). Trudy BGTU. Seriya 6: Istoriia, filosofii, 1 (269), s. 163-169. DOI: 10.52065/2520-6885-2024-281-27 (in Russian).
- UNESCO (2006). Guide №2. Committees at work: procedures and policies (2006). UNESCO. URL: <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000147392>

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ (MHPSS) ԿԻՐԱՌՄԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ , ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ** 
Երևանի պետական համալսարան

Ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներում հոգեկան առողջության և հոգեւոցիալական աջակցության կարիքները համալիր և փոխկապված են՝ ներառելով ճգնաժամային իրավիճակին առերեսված անձանց և համայնքների հոգեկան, հոգեբանական, սոցիալական փորձառությունները, համայնքային կապերը, մասնագիտական աջակցության ձևերը և անձնային ու համակարգային մի շարք այլ գործոններ: Միջազգային պրակտիկայում այս համալիրությանը համակարգված արձագանք տալու համար կիրառվում է հոգեկան առողջության և հոգեւոցիալական աջակցության (անգլերեն համարժեքը՝ Mental Health and Psychosocial Support, այսուհետ՝ MHPSS) համակցված մոտեցումը, որը կենտրոնանում է ոչ թե մարդկանց և համայնքների խոցելիության, այլ տոկունության և ապաքինման/վերականգնման մոտեցումների վրա, ինչպես նաև առաջարկում է աստիճանակարգված, փուլային և միջուրրտային ու միջմասնագիտական աջակցության յուրատեսակ շրջանակ: Թեև միջազգային պրակտիկայում այն լայնորեն կիրառվող մոտեցում է, սակայն Հայաստանում քննարկման օրակարգում հայտնվեց 2023 թ. սեպտեմբերին ԼՂ-ից

* **Գոհար Խաչատրյան** – ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի ասպիրանտ, դասախոս, ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի գիտության գծով խորհրդական

Գոար Խաչատրյան – аспирант кафедры социальной работы и социальных технологий ЕГУ, преподаватель, научный консультант национального института труда и социальных исследований Республики Армения

Gohar Khachatryan – PhD Student at the Chair of Social Work and Social Technologies, YSU, lecturer, Scientific Advisor for National Institute of Labour and Social Research

Էլ. հասցե՝ gohar.khachatryan@ysu.am <https://orcid.org/0009-0000-3237-2237>

** **Նարինե Խաչատրյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի վարիչ

Нарине Խачатрян – кандидат психологических наук, доцент, заведующая кафедрой психологии личности ЕГУ

Narine Khachatryan – Candidate of Psychological Sciences, Associate Professor, Head of the Chair of Personality Psychology, Faculty of Philosophy and Psychology, YSU

Էլ. հասցե՝ n_khachatryan@ysu.am <https://orcid.org/0000-0003-3590-7131>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 19.09.2025

Գրախոսվել է՝ 23.09.2025

Հաստատվել է՝ 24.10.2025

© The Author(s) 2025

հայության բռնի տեղահանման ընթացքում: Հիմնվելով միջազգային փորձի ու փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև փորձագիտական հարցումների և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների վրա՝ հողվածում մանրամասնորեն նկարագրվում է MHPSS-ը՝ լրացնելով մասնագիտական տեղեկատվության բացը, մյուս կողմից՝ ներկայացվում է Հայաստանում MHPSS-ի կիրառման փորձը խոչընդոտների և հնարավորությունների համատեքստում: Հիմնական արդյունքներն ընդգրկում են մի կողմից՝ MHPSS բուրգի ներկայացումը՝ մասնագիտական գործունեության շրջանակը ուրվանշելով և ծառայությունների ձևավորման տիպեր առաջարկելով, մյուս կողմից՝ MHPSS քննարկումների ծավալումը որպես դրական տեղաշարժ արձանագրելով: Միևնույն ժամանակ ընդգծվում է միջոլորտային համագործակցության, շահառու համայնքների խմաստալից մասնակցությամբ մշակվող քաղաքականությունների և ծառայությունների մշակման անհրաժեշտությունը: Հողվածում ներկայացվում են պետության կողմից իրականացված կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունները, մինչդեռ MHPSS-ում առանցքային են նաև երկարաժամկետ գործողությունների պլանավորումն ու իրականացումը, ինչի համար անհրաժեշտ են շարունակական հետազոտություններ:

Բանալի բառեր – *հոգեկան առողջություն, հոգեւոցիալական աջակցություն, համայնքահեն աջակցություն, ճգնաժամային իրավիճակ*

Առողջությունը եղել և մնում է տեսական ու պրակտիկ ուսումնասիրությունների առանցքային թեմա, որի մեկնաբանության համար առաջարկվել են բազմաթիվ մոդելներ: Արդի մոտեցումները շեշտադրում են առողջության համալիր և միջոլորտային բնույթը՝ միավորելով ֆիզիկականի, հոգեբանականի, հոգեկան առողջության, սոցիալականի և այլ բաղադրիչների փոխազդեցությունը: Այս համատեքստում առողջությունը այլևս չի սահմանվում միայն որպես հիվանդության բացակայություն, այլ ընկալվում է որպես ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարօրություն և «ամենօրյա կյանքի ռեսուրս» ուշադրությունը տեղափոխելով անձի ռեսուրսների, կարողությունների և դիմակայունության վրա¹:

Ընկալումների այս փոփոխությունը ուղղորդում է և՛ հանրային քաղաքականությունների ու ծառայությունների նախագծման տրամաբանությունը, և՛ մասնագիտական գործառնությունների բաշխումը, հատկապես՝ ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներում: Տարբեր երկրների (այդ թվում՝ ՀՀ) փորձը ցույց է տալիս, որ ճգնաժամերի ժամանակ ռեսուրսը կենտրոնանում է հումանիտար աջակցության վրա, ինչը կարևոր է, սակայն բավարար չէ, քանի որ առանցքային է նաև առողջության համալիր կարիքներին համակարգային արձագանքը:

¹ Sté u Galderisi, A. Heinz, M. Kastrup, J. Beezhold, N. Sartorius (2015). Toward a new definition of mental health. Journal of the World Psychiatric Association, էջ 231-233. DOI: 10.1002/wps.20231

Երբ ճգնաժամային միջավայրում անձի սոցիալական ու հոգեբանական կարիքները մնում են անարձագանք, աճում է հոգեկան առողջության փորձառություններ ունենալու (օր.՝ հետտրավմատիկ սթրես, խուճապային գրոհներ, դեպրեսիա), սոցիալական կապերի, կյանքի իմաստի կորստի հավանականությունը: Այս համակցված ազդեցությունները փաստագրված են բազմատեսակ ճգնաժամային իրավիճակներում (օր.՝ կոնֆլիկտային վիճակ, բնական աղետներ և այլն) և կապվում են սթրեսորների, առօրյա կուտակվող դժվարությունների, կյանքի սովոր պայմանների փոփոխության ու համակարգային այլ խոչընդոտների հետ²:

Հենց այս համալիրությունն է հաշվի առնում MHPSS մոտեցումը՝ առաջարկելով բազմամակարդակ, փուլային, միջոլորտային և միջմասնագիտական շրջանակ:

Հոգեկան առողջության և հոգեւոցիալական աջակցության (MHPSS) ծառայությունների շրջանակը: MHPSS-ը համակցված հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած աջակցություն կամ ծառայություն, որի նպատակն է համալիր արձագանքել և աջակցել հոգեկան առողջության և հոգեւոցիալական փորձառություններին:

MHPSS-ը՝ որպես մեկ միասնական հասկացություն, հաճախ է կիրառվում ճգնաժամային իրավիճակներում և միավորում է 2 փոխազդող հասկացություններ՝ «հոգեկան առողջություն» և «հոգեւոցիալական աջակցություն»: Վերջինս իր հերթին ընդգրկում է մարդու փորձառության՝ հոգեբանական և սոցիալական գործոնները³:

Այս մոտեցումը ներկայացվում է MHPSS միջամտության բուրգի միջոցով (այսուհետ՝ բուրգ), որը մշակվել է ՄԱԿ-ի միջգերատեսչական մշտական կոմիտեի կողմից և առաջարկում է ծառայությունների և մասնագիտական միջամտությունների 4 հիմնական մակարդակ.

- 1-ին մակարդակն ընդգրկում է բազային ծառայություններն ու անվտանգությունը, որտեղ շահառուները ճգնաժամային իրավիճակին առերեսված բոլոր մարդիկ են: Այս մակարդակում նախ կարևոր է վստահ լինել, որ բոլոր անձանց բազային կարիքները (սնունդ, կացարան, ջուր, առողջապահական կարիքներ և այլն) բավարարվում են: Զուգահեռաբար պետք է վեր հանել, թե այդ բազային կարիքներին արձագանքն ի՞նչ ազդեցություն է ունենում անձի հոգեկան առողջության վրա (օրինակ՝ արդյո՞ք տրամադրվող սնունդը հաշվի է առնում մարդու սննդային յուրահատուկ կարիքները): Ուստի առաջարկվում է, որ պետությունները բազային ծառայությունները նախագծեն և իրականացնեն

² Sté u **Charlson, F.**, New WHO prevalence estimates of mental disorders in conflict settings: a systematic review and meta-analysis, The Lancet, London, 2019, DOI: 10.1016/S0140-6736(19)30934-1

³ Sté u IASC, Guidelines on MHPSS in Emergency Settings, Geneva: IASC, 2007

անվտանգ պայմաններում, հաշվի առնեն և փաստագրեն ճգնաժամային իրավիճակների թողած սոցիալական-հոգեբանական հետևանքները (օրինակ՝ կարող են նկատվել չափից շատ սնվելու կամ հակառակը՝ սնվելու ցանկության բացակայություն, և մի շարք այլ հետևանքներ)⁴:

- 2-րդ մակարդակն ընդգրկում է համայնքային փոխօգնության աջակցությունը: Հիմնական շահառուները հոգեբանական որոշ խնդիրներ ունեցող անձինք են, որոնք ինքնուրույն կարող են իրենց հոգեւոցիալական բարօրությունն ապահովել, եթե տեղեկատվություն ու նախնական աջակցություն ստանան առկա համայնքային ծառայությունների վերաբերյալ: Նման տեղեկատվության տրամադրումը կարևոր է, քանի որ ճգնաժամային իրավիճակներում մարդիկ հիմնականում կորցնում են իրենց անձնային ու համայնքային կապերը, ինչը խաթարում է նաև աջակցության ու տեղեկատվության ստացման ոչ ֆորմալ, իրենց սովոր ձևերը: Հետևաբար, հարկ է քայլեր ձեռնարկել հոգեւոցիալական (փոխ)աջակցության մեխանիզմների զարգացման նպատակով՝ սոցիալական ցանցերի, կապերի գորեղացմամբ, համայնքի անդամների կողմից առաջարկվող ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական թեմատիկ հանդիպում-քննարկումների կազմակերպմամբ: Այս մակարդակում կարող են ընդգրկվել հոգեբանական բարեկեցության հարցերով զբաղվող խորհրդատուներ, սոցիալական աշխատողներ, բուժքույրեր, մանկավարժներ, հավասար խորհրդատուներ/աշխատակիցներ⁵ և այլք: Հիմնական միջամտությունները կարող են ներառել հոգեբանական առաջին օգնությունը, ինքնախնամքին, որոշումների կայացման, շփման և համագործակցելու հմտությունների զարգացմանն ուղղված աջակցությունը⁶:

- 3-րդ մակարդակն ընդգրկում է թիրախավորված, ոչ նեղ մասնագիտական աջակցությունը: Շահառուներն այն անձինք են, որոնք ունեն լրացուցիչ, անհատականացված աջակցության կարիք: Այն կարող են իրականացնել առողջապահական կամ սոցիալական առաջնային ծառայություններ տրամադրող անձինք, որոնք պարտադիր չէ, որ խորքային, մասնագիտացված գիտելիքներ ունենան հոգեկան առողջության ոլորտում (օրինակ՝ համայնքային աշխատողներ, առողջության առաջնային պահպանման աշխատակիցներ, հոգեբան-խորհրդատուներ, սոցիալական աշխատողներ, թերապևտներ, այլք): Կարևոր է, որ մասնագետներն անցնեն դասընթացներ և գործեն մասնագիտա-

⁴ Տե՛ս **Խաչատրյան Գ.**, Ճանաչել, հասկանալ, աջակցել կնոջ հոգեկան առողջության փորձառությունը. գործիքակազմ սոցիալական աշխատողների և սուպերվիզորների համար, Փոփոխություն, 2025, էջ 55:

⁵ Մասնագիտական գործունեություն, երբ տվյալ իրավիճակին առերեսված անձը կիրառում է իր փորձառությունը՝ աջակցելու այլ անձանց: Միջազգային պրակտիկայում այն համարվում է մասնագիտական գործունեություն, հիմնվում հստակ չափանիշների վրա, որտեղ փորձառությունը գիտելիք է և աջակցության ձև:

⁶ Տե՛ս **Խաչատրյան Գ.**, նշվ. աշխ., էջ 56:

կան սուպերվիզիայի աջակցությամբ: Մասնագիտական միջամտությունը կարող է ընդգրկել հոգեբանական ու հոգեկան առողջության առաջնային աջակցությունը, հոգեխորհրդատվությունը տարբեր խնդիրների առկայության դեպքում, հոգեկրթությունը և այլն⁷:

• 4-րդ մակարդակն արդեն ընդգրկում է մասնագիտացված ծառայությունները: Շահառուներն այն անձինք են, որոնք, ի լրումն նախորդ երեք մակարդակների կարիքների, ունեն հոգեկան առողջության՝ ինտենսիվ մասնագիտական աջակցություն ենթադրող խնդիրներ: Այսինքն՝ հոգեկան առողջության ոլորտի մասնագետների կողմից աջակցություն, այդ թվում՝ հոգեբույժների, կլինիկական հոգեբանների, հոգեթերապևտների: Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում, օրինակ՝ ԱՄՆ-ում, որտեղ առկա է կլինիկական սոցիալական աշխատանքի մասնագիտացում, սոցիալական աշխատողների միջամտության շրջանակը կարող է ընդգրկել նաև 4-րդ մակարդակը, ինչը կրթական մակարդակում դեռևս ներդրված չէ Հայաստանում⁸: Կարևոր է, որ մասնագետներն անցնեն ինտենսիվ դասընթացներ տարբեր խոցելի խմբերի հետ զգայուն աշխատանքի, միջոլորտային համագործակցության և այլ թեմաներով:

Վերոնշյալ բոլոր մակարդակներում աջակցություն տրամադրվում է համայնքահեն մոտեցմամբ՝ ակտիվորեն ներգրավելով անհատական, խմբային և համայնքային կարողությունները և ռեսուրսները⁹: Համայնքի իմաստալից ներգրավման համար անհրաժեշտ է վստահություն համայնքի ներկայացուցիչների և MHPSS ծրագրերը իրականացնող կառույցների միջև, ինչպես նաև մշակութային կոլեկտիվ գիտելիքի ու փորձի վերհանում¹⁰:

Այսպիսով, MHPSS մոտեցմամբ առաջնորդվելը ենթադրում է համայնքահեն ծառայությունների բազմազան շրջանակի առկայություն, մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում, փորձառություններ ունեցող անձանց իրական մասնակցությունը երաշխավորող ծառայությունների և քաղաքականությունների առկայություն: MHPSS-ն իրականացվում է մի շարք սկզբունքների հիմքով, ինչպիսին, օրինակ՝ համալիր և միջոլորտային արձագանքը և ծառայությունների ինտեգրումն է, երբ բազմաբաղադրիչ կարիքներին տրվում է համակարգային, ոչ թե մասնատված արձագանք¹¹: Մյուս կարևորագույն սկզբունքը՝ մարդու իրավունքների պաշտպանությունը, ոչ խտրական, մշակութային, գենդերային զգայուն մոտեցումների վրա հիմնված միջամտության իրականացումն է: Առանցքային է նաև տեղեկացված համաձայնության ու գաղտնիության ապահովումը, երբ շահառուն ողջ գործընթացի

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 57:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 58-60:

⁹ Տե՛ս Inter-Agency Standing Committee (IASC) MHPSS Reference Group, Community-Based Approaches to MHPSS Programmes: A Guidance Note, Geneva, 2019:

¹⁰ Տե՛ս International Organization for Migration (IOM), Manual on Community-Based Mental Health and Psychosocial Support in Emergencies and Displacement, Geneva, 2019:

¹¹ Տե՛ս IASC, Guidelines on MHPSS in Emergency Settings, Geneva, 2007:

իրագրել մասնակիցն է, ինչպես նաև հավաքագրվում են միայն այն տվյալները, որոնք անհրաժեշտ են աջակցություն տրամադրելու համար¹²:

MHPSS-ը փոխում է որոշումների կայացման տրամաբանությունը՝ «մասնագիտակենտրոն» քննարկումներից անցում դեպի մասնակցային մոտեցում, երբ որոշումները կայացվում են ոչ թե «մենք նրանց մասին» փակ ձևաչափով, այլ շահառուների իմաստալից մասնակցությամբ¹³:

MHPSS-ի իրականացման համար ՄԱԿ-ի կողմից գործնականում առաջարկվում է միջգերատեսչական աշխատանքային խումբ ձևավորել՝ որպես ռեսուրսները համատեղելու հարթակ: Այն հիմնականում առաջնորդում է ազգային լիազոր մարմինը (օրինակ՝ առողջապահության նախարարությունը, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը) և համատեղ առաջնորդվում է ՄԱԿ-ի գործակալություններից որևէ մեկի կամ մի քանիսի կողմից (օրինակ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ), ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (այսուհետ՝ ՄԱԿ ՓԳՀ)): Խումբը սովորաբար ներառում է պետական և ոչ պետական կառույցներ, համայնքային ներկայացուցիչներ, մասնագիտական ասոցիացիաներ, շահառու համայնքների ներկայացուցիչներ և զբաղվում է միջոլորտային համակարգմամբ ու գործառնությունների բաշխմամբ, եռամակարդակ՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակների ձևակերպմամբ (IASC, 2022; UNHCR, 2024):

ՀՀ-ում MHPSS-ի ներդրման հնարավորությունների և խոչընդոտների վերլուծությունը: Հետազոտության մեթոդաբանությունը: Իրականացվել է որակական հետազոտություն փորձագիտական հարցազրույցների (24 հարցում) և առանցքային տեղեկատուների հետ հարցման (8 հարցում), փաստաթղթերի երկրորդային վերլուծության մեթոդներով: Տվյալների աղբյուրներն ընդգրկել են ոլորտային ուղեցույցները, գործիքակազմերը, թեմատիկ զեկույցները, ինչպես նաև ձևագնդու մեթոդով՝ ճգնաժամային և հետճգնաժամային արձագանքում ներառված սոցիալական աշխատողների, հոգեբանների, պետական և ոչ պետական դերակատարների հետ հարցումները:

Հայաստանյան փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կարիքներին արձագանքելու գործընթացի համակարգումն իրականացվել է ՀՀ կառավարության առաջնորդությամբ և ՄԱԿ ՓԳՀ աջակցությամբ: Ստեղծվել է Փախստականների համակարգման ֆորում, ինչպես նաև միջգերատեսչական աշխատանքային խմբեր տարբեր ոլորտներում,

¹² St u World Health Organization, Guidance on Community Mental Health Services: Promoting Person-centred and Rights-based Approaches, Geneva, 2022:

¹³ St u UNICEF. Guidelines for Community-Based MHPSS in Humanitarian Settings: Three-tiered support for children and families. New York: UNICEF, 2019, էջ 8–10:

այդ թվում՝ առողջության, սոցիալական պաշտպանության, սննդի և անվտանգության, կացարանի, դրամական աջակցության, դիմակայունության ուղղություններով¹⁴:

Հիմք ընդունելով այն, որ միջազգային պրակտիկայում ձևավորվում է նաև MHPSS առանձին աշխատանքային խումբ կամ ենթախումբ, ինչի կարիքը զգացվել է նաև Հայաստանում (ԼՂ-ից բռնի տեղահանումից հետո իրականացված արագ կարիքների գնահատման զեկույցով փաստագրված)¹⁵՝ հարկ է նշել, որ Հայաստանում MHPSS աշխատանքային խումբ չի ստեղծվել: Փոխարենը՝ հոգեկան առողջության և հոգեւոցիալական աջակցության հարցերը քննարկվել են «Առողջություն» աշխատանքային խմբում: Այդ շրջանում իրականացված արագ կարիքների գնահատման զեկույցն արձանագրել է նաև, որ Հայաստանում առկա է եղել համապարփակ MHPSS ծրագրերի մշակման և իրականացման, երկարաժամկետ հոգեւոցիալական և վերականգնողական ծառայությունների զարգացման, մասնագիտական ռեսուրսի սակավությունը լրացնելու, կարողությունները զարգացնելու կարիք¹⁵:

Հետաքրքրական է, որ, ի տարբերություն նախորդ ճգնաժամերի, երբ կարիքների գնահատումը բազմակի դերակատարների կողմից է իրականացվել առաջացնելով հարցվող անձանց շրջանում անհարկի ճնշում, այս անգամ պետությունը մշակել է միասնական համալիր հարցաթերթ, որտեղ սոցիալական բաղադրիչների հետ ներառվել են նաև հոգեկան առողջության և հոգեբանական իրավիճակի սքրինինգային հարցեր:

Ինչ վերաբերում է հոգեկան առողջության և հոգեւոցիալական աջակցության կարիքների պրակտիկ արձագանքին, ապա հոգեբանական և սոցիալական առաջնային աջակցություն տրամադրվել է ՀՀ մուտք գործելու և սկզբնական տեղակայման փուլերում: Մասնագետներից շատերը հարցազրույցների ընթացքում նշում են, որ տվյալ ժամանակահատվածում և պայմաններում աշխատելը թեև բարդ, սակայն կարևոր է եղել՝ մարդկանց անվտանգության, առաջնային աջակցության ու տեղեկացվածության ապահովման համար: Ընդ որում, թեպետ նկատվել է համագործակցություն սոցիալական աշխատողների և հոգեբանների միջև, միևնույն է, համակարգային հիմնախնդիրները, այդ թվում՝ բազմամասնագիտական և միջոլորտային դասընթացների բացը, հոգեկան առողջության թեման համալիր չքննարկելը իրենց ազդեցություն են ունեցել միջոլորտային համագործակցության պրակտիկաների վրա:

Զուգահեռաբար՝ որոշ միջազգային և տեղական ՀԿ-ներ փորձել են ներդնել MHPSS և բազմամասնագիտական թիմերով աշխատելու մոտեցումը, սակայն

¹⁴ St' u UNHCR Armenia Refugee Response Plan: October 2023 – March 2024. Emergency and Resilience Appeal. Geneva–Yerevan: UNHCR, 2023, էջ 18:

¹⁵ St' u UN Inter-Agency Coordination Group Armenia. Armenia Rapid Needs Assessment Report, October 2023, Yerevan: UNHCR (Inter-Agency), 2023, էջ 11, էջ 16:

ըստ հետազոտության արդյունքների՝ գործընթացը պահանջել է մասնագետների վերապատրաստում և միջմասնագիտական սահմանների հստակեցում, ինչը կարևոր փորձ է եղել, սակայն այն պետական մակարդակում կիրառելու, ֆինանսական կայուն աջակցության կարիք ունի:

Բացի այդ, թեև MHPSS-ում կարևորվում է փորձառություն ունեցող անձանց միջոցով համայնքահեն աջակցության տրամադրումը, միայն վերջերս են որոշ ՔՀԿ-ներ փորձարկում հավասարակից խորհրդատուի կողմից ծառայություններ տրամադրելու մոդելը, ինչը կարևոր քայլ է՝ փորձառության վրա հիմնված գիտելիքը որպես աջակցության ռեսուրս զարգացնելու, մասնագիտական դաշտ բերելու համար: Հետևաբար, կարիք կա պետական մակարդակում այն սահմանել որպես աջակցության մոդել, մասնագիտական գործունեություն:

Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ MHPSS-ի պրակտիկ կիրառումը գրեթե անհնար է, եթե չկան համայնքահեն ծառայություններ, քանի որ, ըստ բուրգի տրամաբանության, միջամտությունները տրամադրվում են համայնքային միջավայրում: Մինչդեռ Հայաստանում առողջապահական և սոցիալական համակարգը մարդկանց հոգեկան առողջության կարիքներին մեծամասամբ շարունակում է արձագանքել խնամքի և հոգեբուժական հաստատություններում, ինչը խախտում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները՝ խաթարելով ինքնավարության, անկախ ապրելու և համայնքում ներառվելու հնարավորությունները, ուժեղացնելով խարանդ և սոցիալական մեկուսացումը¹⁶:

Թեպետ 2010-ին Հայաստանը վավերացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և ստանձնել համայնքահեն ու իրավունքահեն ծառայությունների պարտավորություններ, սակայն ապահինստիտուցիոնալացման օրակարգը դանդաղ է ընթանում՝ թողնելով ծառայությունների զգալի բացեր հատկապես ճգնաժամային և հետճգնաժամային փուլերում:

Այսպիսով, հոդվածը մի կողմից փորձ է լրացնելու մասնագիտական տեղեկատվական բացը, մյուս կողմից՝ ցույց է տալիս, որ Հայաստանում MHPSS-ի ներդրման և զարգացման գործընթացը դեռևս գտնվում է ձևավորման փուլում. այն ունի ինչպես տեսական հիմքերի, այնպես էլ գործնական կիրառության բացեր: Չնայած առկա խոչընդոտներին՝ MHPSS թեմայի քննարկումները, քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները, միջոլորտային համագործակցությամբ կարիքներին արձագանքելու պրակտիկաների զարգացումը և միջազգային փորձի ներդրումը կարող են դառնալ դրական շարժիչ գործոններ:

¹⁶ Տե՛ս **Khachatryan, G.** Deinstitutionalization in the Field of Mental Health in Armenia: Contemporary Issues. Journal of Sociology: Bulletin of Yerevan University, Vol. 13, No. 2, Yerevan: Publishing House of Yerevan State University, 2022, pp. 064–071. DOI: 10.4699 1/BYSU:F/2022.13.2.064

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ МНРSS-ի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ են պետական մակարդակում աշխատանքային խմբի ձևավորում և միջոլորտային համակարգված համագործակցություն: Առանցքային է նաև համայնքահեն և բազմազան ծառայությունների զարգացումը ապահովող տնտեսական օրակարգի շրջանակում: Կարևոր են մասնագիտական ռեսուրսի՝ միջոլորտային կարողությունների և սուպերվիզիայի հնարավորությունների զարգացումը, ինչպես նաև հավասար աշխատակցի մոդելի զարգացումն ու շահապաշտպանությունը: Բացի այդ, մասնագիտական դաշտում անհրաժեշտ է ակտիվացնել քննարկումները՝ ձևավորելու և հստակեցնելու հայերեն տերմինաբանությունը, հիմնական հասկացությունների շուրջ միասնական ըմբռնումը և դերերի ու կիրառման շրջանակների սահմանումը:

Այս քայլերի համադրված իրականացումը հնարավորություն կտա ոչ միայն լրացնելու ծառայությունների բուրգի առկա բացերը, այլև խթանելու համայնքային դիմակայունությունն ու բարօրությունը: Միևնույն ժամանակ, դրանք կարող են դառնալ ներառական սոցիալական և առողջապահական քաղաքականությունների նախագծման հենասյուներ՝ ապահովելով համաչափ արձագանք ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներում:

ГОАР ХАЧАТРЯН, НАРИНЕ ХАЧАТРЯН – *Опыт и вызовы применения подхода психического здоровья и психосоциальной поддержки (МНРSS).* – В условиях кризиса и посткризисного периода потребности в области психического здоровья и психосоциальной поддержки носят комплексный и взаимосвязанный характер: они охватывают индивидуальный и коллективный опыт психического, психологического и социального измерений у пострадавших лиц и сообществ, состояние общинных связей, институциональные возможности и формы профессиональной помощи. Для системного подхода к этой сложной проблеме в международной практике применяется комбинированный подход «Психическое здоровье и психосоциальная поддержка» (далее – МНРSS), который ориентирован не на уязвимость, а на устойчивость и восстановление/реабилитацию, предлагая многоуровневую, поэтапную, межсекторную и межпрофессиональную архитектуру поддержки.

Несмотря на широкое применение в международной практике, в Армении МНРSS вошёл в повестку в период вынужденного переселения армян из Нагорного Карабаха. Опираясь на анализ международного опыта и документов, а также на экспертные опросы и интервью с ключевыми информантами, данная статья, с одной стороны, подробно описывает подход МНРSS, восполняя пробелы профессиональной информации, а с другой — картирует опыт его применения в Армении, выявляя препятствия и возможности. К основным результатам относятся: (а) представление «пирамиды МНРSS», определяющей рамки профессиональной деятельности и предлагающей типологии проектирования услуг; (б) фиксация расширяющейся национальной дискуссии по МНРSS как позитивного сдвига при одновременном подчёркивании необходимости межсекторного взаимодействия и разработки политик и услуг с содержательным участием затронутых сообществ. Статья также формулирует новые исследовательские вопросы, требующие дальнейших углублённых исследований.

Ключевые слова: *психическое здоровье, психосоциальная поддержка, ориентированная на общину поддержка, кризисные ситуации*

GOHAR KHACHATRYAN, NARINE KHACHATRYAN – *The Experience and Challenges of Applying Mental Health and Psychosocial Support (MHPSS)*.–

In crisis and post-crisis settings, needs for mental health and psychosocial support are complex and interlinked: they encompass the individual and collective psychological, social, and mental health experiences of crisis-affected persons and communities, the state of community relationships, environmental resources, and the models of support. To respond holistically to this complexity, international practice applies the combined approach of Mental Health and Psychosocial Support (hereinafter, MHPSS), which prioritizes and concentrates on resilience and recovery instead of vulnerability, and offers a layered, stage by stage, cross-sectoral, and interprofessional framework of support.

Although widely used internationally, in Armenia MHPSS entered the agenda during the forced displacement from Nagorno-Karabakh (Artsakh). Drawing on an analysis of international experience and documents, as well as expert surveys and key-informant interviews, this article both provides a detailed description of MHPSS—addressing gaps in information—and maps the experience of applying MHPSS in Armenia, identifying obstacles and opportunities. The main results include, on the one hand, presentation of the MHPSS pyramid, the scope of professional activity and proposing service design types; and, on the other hand, documentation of the expanding national debate on MHPSS as a positive shift, while underscoring the need for intersectoral cooperation and for policies and services co-designed with the meaningful participation of affected communities. The article also highlights new research questions that require in-depth follow-up studies.

Key words: *mental health, psychosocial support, community-based support, crisis situations*

References

- Charlson, F., van Ommeren, M., Flaxman, A., Cornett, J., Whiteford, H., Saxena, S. “New WHO prevalence estimates of mental disorders in conflict settings: a systematic review and meta-analysis.” *The Lancet*, 2019, 394(10194), DOI: 10.1016/S0140-6736(19)30934-1
- Galderisi, S., Heinz, A., Kastrup, M., Beezhold, J., Sartorius, N. “Toward a new definition of mental health.” *World Psychiatry*, 2015, 14(2), DOI: 10.1002/wps.20231
- IASC, MHPSS Reference Group. *Community-Based Approaches to MHPSS Programmes: A Guidance Note*. Geneva: IASC, 2019
- IASC, MHPSS Reference Group. *MHPSS Minimum Service Package for Humanitarian Settings*. Geneva: IASC, 2022
- Inter-Agency Standing Committee (therefore IASC) *Guidelines on MHPSS Support in Emergency Settings*. Geneva: IASC, 2007
- IOM (International Organization for Migration). *Manual on Community-Based MHPSS in Emergencies and Displacement*. Geneva: IOM, 2019
- Khachatryan, G. “Deinstitutionalization in the Field of Mental Health in Armenia: Contemporary Issues.” *Journal of Sociology: Bulletin of Yerevan University*, 2022, 13(2), DOI: 10.46991/bysu:f/2022.13.2.064
- Khachatryan, G. *Chanachel, haskanal, ajaktsel knoj hogekan aroghjutyani pordzarutyuny. Gortsiqakazm sociaakan ashkhatogneri yev supervizorneri hamar*. Yerevan: “P’opokhutyun” HK, 2025 https://www.changengo.org/_files/ugd/b6cd86_b144de97e1184e68a5ae1c4afbc35fea.pdf (in Armenian)
- UN (UN Action against Sexual Violence in Conflict). *Training Pack on MHPSS*. New York/Geneva: UN 2019 <https://www.un.org/sexualviolenceinconflict/wp-content/uploads/2019/06/report/the-psychosocial-support-manual/ebook.1499425465.pdf>
- UN Inter-Agency Coordination Group Armenia. *Armenia Rapid Needs Assessment Report*, October 2023. Geneva–Yerevan: UNHCR (Inter-Agency), 2023
- UNHCR, “MHPSS” *Emergency Handbook* <https://emergency.unhcr.org/emergency-assistance/health-and-nutrition/mental-health-and-psychosocial-support-mhpss>
- UNHCR, *Armenia Refugee Response Plan: October 2023 – March 2024. Emergency and Resilience Appeal*. Geneva–Yerevan: UNHCR, 2023 <https://data.unhcr.org/en/documents/details/103868>
- UNICEF. *Guidelines for Community-Based MHPSS in Humanitarian Settings: Three-tiered support for children and families*. New York: UNICEF, 2019
- WHO (World Health Organization). *Guidance on Community Mental Health Services: Promoting Person-centred and Rights-based Approaches*. Geneva: WHO, 2021

ՄԻՍՏԻ՞Կ Է ԱՐԴՅՈՔ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ

ՀԱՅԿ ՀԱՐՈՅԱՆ՝ 

Շիրակի պետական համալսարան

ՆԵԼԼԻ ՀԱՐՈՅԱՆ՝ 

Երևանի պետական համալսարան

Հոդվածում վերաիմաստավորվում է միջնադարի հայ հանճարեղ մտածող Գր. Նարեկացու միստիկ լինելու՝ նարեկացիագիտության մեջ տիրապետող տեսակետը: Մասնավորապես փաստարկվում է, որ նրան անվերապահորեն միստիկների շարքին դասելը հակասում է «Մատենանի» ոգուն և տրամաբանությանը, քանզի, նախ՝ այնտեղ պատկերվում են մարդկային կյանքի ողբերգականությունը և վեհությունը. երկրորդ՝ այդ եզակի ստեղծագործության մեկնաբանության ժամանակ, հակառակ հեղինակի կամքի, անտեսվել է հիմնականը, այն է՝ մարդկային կեցության ողբերգականությունը իր բոլոր դրսևորումներով, և առավելապես շեշտադրվել է ձևը, այլ ոչ թե բովանդակությունը. երրորդ՝ ի տարբերություն միջնադարում տիրապետող աստվածակենտրոն ըմբռնման՝ Նարեկացին զարգացնում է մարդակենտրոն հայեցակարգ, որի կենտրոնում իրական մարդն է իր հոգսերով ու տագնապներով: Իր ամբողջության մեջ «Մատենան» բանական գոյի, «հոգևոր մահվան» սահմանագծում հայտնված մարդու ողբերգությունը ներկայացնող գործ է. ողբերգություն, որը առաջանում է աստվածայինի և մարդկայինի, բարու և չարի, մեծի ու փոքրի բախման արդյունքում՝ ներկայացված քրիստոնեական սիմվոլիկայի միջոցով՝ իբրև տուրք դարի մտայնությանը: Նարեկացին մարդկային ցեղի տառապանքի ու ցավի երգիչն է, որը և պայմանավորում է նրա ստեղծագործության համամարդկային բնույթը:

^{*} **Հայկ Հարոյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ

Айк Ароян – кандидат философских наук, доцент кафедры истории и философии Ширакского государственного университета

Hayk Haroyan – Candidate of Philosophical Sciences, Associate Professor at the Chair of History and Philosophy of Shirak State University

Էլ. փոստ՝ h.haroyan48@mail.ru <https://orcid.org/0009-0001-3770-4277>

^{**} **Նելլի Հարոյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի դոցենտ

Нелли Ароян – кандидат психологических наук, доцент кафедры социальной и клинической психологии ЕГУ

Nelli Haroyan – Candidate of Psychological Sciences, Associate Professor at the Chair of Social and Clinical Psychology, YSU

Էլ. փոստ՝ n.haroyan@mail.ru <https://orcid.org/0009-0008-6542-6594>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 15.05.2025

Գրախոսվել է՝ 29.05.2025

Հաստատվել է՝ 24.10.2025

© The Author(s) 2025

Ըստ էության Մարդ-Աստված փոխհարաբերության հիմնահարցի նարեկյան մեկնաբանությունն ամենևին չի ներդաշնակվում միատիկական ըմբռնմանը, քանզի Նարեկացու վերջնապատակը բացառապես անձնական փրկության արժանանալը և Աստծուն ձուլվելն ու նրան միանալը չէ, ինչը ներհատուկ է միատիցիզմին, այլ մարդու և մարդկության հոգևոր վերափոխման ու ինքնակատարելագործման միջոցով փրկության հասնելն է այսկողմնային աշխարհում՝ այստեղ և հիմա:

Բանալի բառեր – Մարդ, Աստված, միատիկա, ողբերգություն, ինքնակատարելագործում, հոգևոր վերափոխում, բանականություն, փրկություն, հավատ

**«...Չճանաչեցի ինքզինքս ու չեմ իմանա երբեք,
թե որի ձեռքով և ում պատկերով, ինչո՞ւ գոյացա»:**
«Մատենան ողբերգութեան», Զ, ա

Նախ՝ ստեղծագործության վերնագրի մասին: «Մատենանի» իրական բովանդակությունն ու արժեքը բացահայտելու համար նախևառաջ հարկ է գերծմնալ պատմականորեն ձևավորված կարծրատիպերից և հարազատ մնալ նրա ոգուն ու բովանդակությանը: Գրիգոր Նարեկացին «Մատենանում» շարունակ հիշեցնում է ընթերցողին, որ իր ստեղծագործությունը ողբերգություն է, հետևապես մենք պարտավոր ենք ընդունել այն որպես այդպիսին: Ինչպես իրավացիորեն գրում է նարեկացիագետ Հր. Միրզոյանը, «...Հայ հանճարի գլուխգործոց ստեղծագործությունը պետք է դիտել ոչ թե որպես միայն աղոթագիրք, այլ նախ և առաջ իբրև **իսկապես ողբերգություն, ինչպես այն անվանել է հեղինակն ինքը**: Այդ դեպքում շատ ու շատ բան կհասկացվի այլ կերպ, քան հասկացվել է մինչև այժմ...»¹ (ընդգծ. մերն է՝ Հ. Հ., Ն. Հ.): Հակված ենք կարծելու, որ նույն իրավիճակն է նաև սույն հոդվածում քննարկվող հիմնահարցի առումով: Այս առնչությամբ տեղին ենք համարում մեջ բերել նաև նշանավոր նարեկացիագետ Պ. Խաչատրյանի մի շատ կարևոր դիտարկումը, որը, մեր կարծիքով, նույնպես պետք է ելակետային լինի «Մատենանի» ժամանակակից մեկնաբանություններում: Այսպես, նա գրում է, որ սկսած 13-րդ դարից՝ ի հայտ են գալիս «Մատենանի» մի շարք լուծմունքներ, որոնց հեղինակները հիմնականում «ծանրության կենտրոն են դարձրել Նարեկացու գեղարվեստական-իմաստասիրական վաստակի աստվածաբանական շերտերի բացատրությունը... Անշուշտ, այդ հարցում նրանք խախտել են չափի զգացումը՝ Նարեկացու հանճարի ինքնաբուխ ամեն մի փայլատակում հախտոն ձգտումով ենթարկելով Հին ու Նոր Կտակարանի տառին ու բառին»²: Այո՛, «իբրև բազմագիծ ու բազմաչափ երկ՝ այն պետք է ուսումնասիրվի ու գնահատվի տարբեր տեսանկյուններից ու

¹ Միրզոյան Հ. Ղ., Նարեկացիագիտական հետազոտություններ (Հոդվածների ժողովածու), Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 161:

² Խաչատրյան Պ., Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 381:

տարբեր մոտեցումներով, որովհետև միագիծ, միաչափ ու միակողմանի մոտեցմամբ անհնար է ընկալել նրա բազմաբնույթ կամ բազմաստեղծության բովանդակությունն ու հասկանալ նրա խորհուրդն ու իմաստը: Մինչդեռ հակառակ բանաստեղծի պահանջի՝ մինչև օրս այն հիմնականում ընթերցվել, ընկալվել, հասկացվել ու մեկնաբանվել է միագիծ ու միաչափ մոտեցմամբ»³: Եվ ընդհանրապես, ելնելով «Մատենի» արտահայտչաձևից՝ այն կարող է դիտարկվել և՛ որպես աղոթագիրք, և՛ որպես պոեմ, և՛ որպես խոստովանություն, և՛ որպես ողբերգություն, և՛ նույնիսկ՝ միստիցիզմի դրսևորում: Այո՛, «Մատենում» առկա է միստիկայի տարրը, և ընդամենը: Ուստի մեղանչած կլինենք «Մատենի» էության, գաղափարական միտվածության ու նրա հեղինակի հանդեպ, եթե նրան անվերապահորեն դասենք միստիկ մտածողների շարքին⁴, քանի որ բովանդակային առումով, իր ընդգրկումով ու սահմանային ընդհանրացումներով «Մատենը» Մարդ-Աստված հակադրության համատեքստում կրոնական խորհրդանիշների գործածմամբ (Աստված, մեղք, աղոթք⁵ ևն՝ իբրև դարաշրջանի մտայնության արտացոլում) մարդկային կեցության ողբերգականությունը պատկերող, մարդու մեջ աստվածայինի (կատարյալի) հնարավորությունը բացահայտող ու հաստատող կոթողային գործ է: Այլ կերպ՝ «Մատենի» բուն ոգին՝ Մարդ-Աստված փոխհարաբերության նարեկյան նորովի մեկնաբանությունն իր երկրային ուղղվածությամբ դուրս է գալիս միստիկական հայեցողության շրջանակներից, ավելին՝ ներկայանում է որպես վերջինիս այլընտրանք և նույնիսկ՝ բացառում:

Իսկ հիմա անդրադառնանք բուն թեմային: Այսպես, ի՞նչ են *միստիկան և միստիցիզմը*. միստիկան սահմանվում է որպես «կրոնական գործունեություն, որի նպատակը էքստազի (վերապրումների) միջոցով անմիջականորեն Աստծու հետ «ձուլվելն» է», իսկ միստիցիզմը համարվում է «իռացիոնալիստական, ինտուիտիվիստական փիլիսոփայության տարատեսակ, ուսմունք, որը ընդունում է գոյություն ունեցող իրականությունը բանականությամբ ճանաչելու անհնարինությունը»⁶: Ասել է թե՛ *միստիկը նա է, ով գործնականում ձգտում է ինքնախորասուզման, վերապրումների (էքստազի), գաղտնի կապերի միջոցով անմիջականորեն միանալ Աստծուն և ժխտում է բանականությամբ իրա-*

³ Միրզոյան Հ. Ղ. ., նշվ. աշխ., էջ 145:

⁴ Գրիգոր Նարեկացու՝ որպես միստիկ մտածողի որակումները սկզբնավորվել են անցյալ դարի կեսերին (Մ. Աբելյան, Հ. Մանանդյան, Լեո, Հ. Գաբրիելյան, Վ. Զալոյան, Մ. Մկրյան, Վ. Նալբանդյան) և շարունակվում են առ այսօր (Ս. Պողոսյան, Զ. Ավետիսյան և այլք), ու ավանդույթի ուժով վերածվել են կարծրատիպի:

⁵ Ի դեպ, աղոթքին՝ իբրև Աստծու հետ հաղորդակցվելու ակնածալի եղանակի բնորոշ է լռության մեջ ցածրաձայն, հանդարտ, շշուկով ասված խոսքը, մրմնջոցը, մինչդեռ Նարեկացին իր «դառնահեծ պաղատանքները» առ Աստված առաքում է «բարձրադաղակ», «ամենահառաչ հեծության ձայնով»...

⁶ Советский энциклопедический словарь, 3-е изд.-М.: Сов. энциклопедия, 1985, с. 810.

կանությունը և Աստծուն ճանաչելու հնարավորությունը: Այս առումով մարդու գոյության իմաստին, նպատակին ու կոչմանը վերաբերող նարեկացիական հարցադրում-լուծումները անհնար է տեղավորել միասնիցվածի և միասնիկ մտածողի աշխարհայեցողության շրջանակներում: Նրա ուսմունքը իր անձիրքնդգրկումով չի տեղավորվում ոչ մի «իզմի» մեջ: Եվ ահա թե ինչու:

Առաջին՝ «Մատենանք» իր էությանը եկեղեցու արմատական բարեփոխման ծրագիր է՝ հիմնված անմիջական, բանական, գիտակցական հավատի գաղափարի քարոզչության վրա: Այսպես, սկզբից նեթ դիմելով Աստծուն՝ Նարեկացին բանաձևում է իր ապագա ասելիքը. «... Եւ մատուցեալ եղեալ ի հուր թախծութեան անձին տոչորման զպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս՝ բուրվառաւ կամացս առաքել առ քեզ: Այլ հոտոտեսցի՛ս, հայեսցի՛ս, գրած, քան ի պատարագն բոլորապտուղ, մատուցեալ ծխոյն բարդութեան: Ընկա՛լ զսակաւամասնեայ յաղուածս բանից՝ քեզ ի հաճութիւն և մի՛ ի բարկութիւն», և դիմելով Աստծուն՝ շարունակում է, որ աղերսախառն դատի մտնելը իր հետ նա չհամարի տաղտկալի և ամբարշտություն, այլ ընդունի այն՝ իբրև «բանական գոհի» կողմից մատուցվող «կամաւորական նուէր»⁷: Ավելին, կարծես կանխագալով իր հրաշակերտության թյուր, ոչ համարժեք և միակողմանի ընկալման ու մեկնաբանության հնարավորությունը՝ նա «Մատենանի» տարբեր գլուխներում բազմիցս ընդգծում է, որ այն «ողբերգության մատենան» է, «կտակամատյան ողբերգության» (Բ, ք), և գրված է այլաբանորեն, «դարձեալ այլաբանեցից» (ԻԲ, ա), այն է՝ մեղքերի խոստովանության և աղոթքների ձևով:

Երկրորդ՝ Նարեկացու կողմից գործնական ու բանական հավատի առաջադրումը ինքնին հանգեցնում է կրոնական կասկածամտության: Միասնիկն անվերապահորեն ընդունում է Աստծու մարդասիրությունն ու հզորությունը և միանգամայն գոհանում է այդքանով: Միասնիկական հավատը չի կասկածում և չի դժգոհում, այլ արդարացնում է իրերի՝ գոյություն ունեցող վիճակը և համբերատար, անմոռնչ սպասում է աստվածային կամքի դրսևորումներին: Մինչդեռ «Մատենանք» միայն աղերս ու պաղատանք չէ, այլև կասկածանք և ըմբոստություն, պոթելում ու վիճաբանություն: Հավատը՝ առհասարակ, միասնիկականը՝ մասնավորապես, չեն բողոքում և չեն դժգոհում, նրանց բնորոշ չեն աստվածային ճշմարտությունները կասկածի ենթարկելը, Աստծու խոսքի և գործի միջև հակասություններ տեսնելը, վիճաբանական հարաբերության մեջ մտնելը, առավել ևս նրան հակադրվելը, «**աղերսախառն դատի մտնելը**» ու նրան «**հանդիմանական դատավճիռ**» ներկայացնելը: Իրականում Մարդ-Աստված փոխհարաբերության նարեկյան ըմբռնման մեջ առկա է բացահայտ բողոք, նաև արժանապատիվ կյանքի պահանջ. իրողություններ, որ ակնհայտորեն անհարիր են միասնիկական ըմբռնմանը: Միասնիկային խորթ է նաև վիճաբանական հարաբերությունը Աստծո հետ: Կարճ ասած՝ ըմբոստությունն ու

⁷ **Նարեկացի Գ.**, Մատենան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., ՉՄՍՀ ԳԱ հրատ., 1985, Ա, ա: Այսուհետև՝ հղումները տեքստում:

միաստիկան անհամատեղելի են. ըմբոստը միաստիկ չի կարող լինել, իսկ միաստիկը՝ ըմբոստ: Եթե միաստիկի վերջնականատակը Աստծուն միաձուլվելն է, ապա «ապստամբ» Նարեկացին Աստծուց «պահանջում է» արդար, արժանապատիվ, երջանիկ կյանքի պայմաններ ստեղծել մարդու համար այստեղ՝ երկրի վրա: Նարեկացու մարդակենտրոն աշխարհայացքի տեսանկյունից Աստծու նկատմամբ հավատի հիմքը մարդասիրության հուսալի, որոշակի վկայություններն են, որոնք եթե ուշանում են կամ ընդհանրապես չկան, ապա ակնածանքը ուղեկցվում է լարված հարաբերությամբ ու երկխոսությամբ Աստծու հետ և ի վերջո վերածվում է ընդվզման: Արդ, ունկն չդնելով Աստծու հորդորներին, չվախենալով ու չգարհուրելով նրա սպառնալիքներից՝ Նարեկացին ծառանում է նրա դեմ. «Սպառնացար, եւ ոչ գարհուրեցայ, արգահատեցեր, եւ ոչ երբեք լուայ, որ է՝ ապստամբութեան յայտնի նշանակ» (Ի,բ): Մի թե «Մատեանի» ըմբոստ ոգու այս ակնհայտ դրսևորումները ներդաշնակվում են Մարդ-Աստված փոխհարաբերության միաստիկական հայեցակարգին: Ավելին, Նարեկացու համար Աստված ոչ միայն դատավոր է, ինչպես Հոբն ու Օգոստինոսն էին ընդունում, կամ՝ մեղադրյալ, ինչպես Դոստոևսկին է համարում, այլև պատասխանատու մարդու կյանքի համար, մարդկության առջև պարտավորություն ունեցող: Նարեկացին հանդես է գալիս ոչ միայն բանավիճողի, այլև պահանջատիրոջ դիրքերից, երբ առաջադրում է մարդու ճակատագրի, նրա կյանքի ընթացքի համար Աստծու պատասխանատվության հարցը: Այսպես, թեև խոր կսկիծով ու դառնությամբ, բայց և ակնածանքով նա հանդիմանում է Աստծուն այն բանի համար, որ իրեն է վերապահել բոլոր իրավունքներն ու արժանիքները, իսկ պարտականություններն ու պատասխանատվությունը թողել մարդուն. «Քեզ արդարութիւն հանդերձեցեր, բարերար, եւ ինձ ամաւթ եւ պատկառանս պատրաստեցեր...Քեզ բարեբանութիւն անլռելի, եւ ինձ՝ ձայնս ողբոց աղաղակի,...Քեզ՝ բարձրութիւն անճառ գովեստից, եւ ինձ՝ զաճիւն լիզելոյ պատիժ ձաղանաց» (Ի,գ): Ողջ երկրայինը իր մեջ ամփոփած «աղոթանվեր պատգամավոր» դարձած հանճարեղ սուրբը (Ս. Ավերինցն) Աստծու ատյանում ստանձնում է *մարդու* և *մարդկության* շահերի պաշտպանի դերը և պատասխանատվության հայց ներկայացնում նրան՝ երկրային կյանքում գոյություն ունեցող չարիքի ու անարդարությունների համար: Աստված՝ որպես մարդասեր, ասում է Նարեկացին, չպետք է թողնի անտեր և անուշադրության մատնի «հավիտենական մոլորյալին» մարդուն: Եվ եթե մարդը պարտական է Աստծուն իր գոյության համար, ապա Աստված էլ պարտավոր է հոգ տանել նրա փրկության համար՝ որպես իր ստեղծագործության, և սերը առ Մարդ Նա պետք է դարձնի մշտական գործընթաց, օգնի մարդուն հասնելու իրական փրկության: Այլ կերպ՝ նա Աստծուց պահանջում է այնկողմնային (տրանսցենդենտալ) իրականությունից վերածվել այսկողմնային իրականության, այն է՝ իր վերացական մարդասիրությանը հաղորդել գործնական բնույթ:

Երրորդ՝ միստիկական հայեցակարգի տեսանկյունից Աստծու էության ճանաչումը մարդկային բանականությանն անհասանելի է, և աստվածիմացության միակ ճշմարիտ ուղին համարվում է միստիկական ներհայեցողությունը⁸: Եվ եթե Աստծու հետ հարաբերվելու հոգևոր ապրումները միստիկական փորձը սահմանափակում է զգացմունքային ոլորտով, ապա Նարեկացու համար աստվածային էությունը բանական ճանաչողության առարկա է, իսկ հավատն էլ չտարորոշված ու վերացական հոգևոր վիճակ չէ (ինչը ներհատուկ է միստիկական փորձին), այլ հոգու և մարմնի ներդաշնակության, կատարելության հասնելու ընթացք, որը ձեռք է բերվում իմացության երկու անհրաժեշտ կողմերի՝ բանականության և հավատի համադրման, դրանց լծակցության միջոցով: Ավելին, միստիկային բնորոշ գծերից մեկը կրոնական վերապրումների տարածաժամանակային չափումներից դուրս լինելն է, այսինքն՝ զուտ հոգևոր երևակայական վիճակ, մինչդեռ Նարեկացու վերապրումները շաղախված ու թաթախված են երկրային կյանքի հոգսերով ու մտահոգություններով: Եվ քանի որ հավատը նրա համար կենսաձև է, ապրելակերպ, բանական էակի գոյաձև, ուստի և նա առաջադրում է ոչ թե Աստծու հետ զուտ հոգևոր-միստիկական միասնության հասնելու, այլ երկրային կյանքում՝ թե՛ մարմնապես և թե՛ հոգեպես վերակազմավորվելու պահանջ:

Չորրորդ՝ Նարեկացին մեծ մարդասեր է և ոչ թե մեծ միստիկ: Նրա ուսմունքի ելակետը որոշակի է՝ մարդը՝ իրական մարդասիրության հաստատման պահանջով և իրական փրկության հույսով: Մեծ մարդասերի «մտքից ու հոգուց» ժայթքող «գուժկան աղաղակը» երկրային կյանքի անկատար լինելու գիտակցման, տառապող մարդու հանդեպ դրսևորվող անսահման սիրո դրսևորում է: Նա մարդկային ցեղի տառապանքների ու ցավի երգիչն է. «Արդ, ես՝ ճշգրիտ պատկեր ամենայն երկրի, զիմս խառնեալ ընդ նոցին պարտիս եւ ի նոցայոցն զառ իս դառնութիւն կրկին առաւելեալ, նոքաւք հեծեծեցից» (Ծ,գ): «Մատենանը» քարոզում է իրական կյանքի ու իրական մարդու պաշտամունք: Դա առանձնապես դրսևորվում է փրկության գաղափարի նարեկյան մեկնաբանության մեջ: Համաձայն միստիցիզմի դասական ըմբռնման՝ Աստծու հետ միանալու մենաշնորհը վերապահվում է ընտրյալներին, փրկությունն էլ կատարվում է Հայտնության միջոցով: Մինչդեռ, ըստ Նարեկացու, փրկությունը ընտրյալների մենաշնորհը չէ, բոլոր մարդիկ, անկախ ազգային, սեռային, դասային, ռասայական պատկանելությունից, արժանի են փրկության: Եվ իրեն համարելով մարդկանցից ամենամեղավորը՝ նա առավել մտահոգված է Մարդու-Մարդկության փրկության խնդրով և իր անձի փրկությունն էլ տեսնում է միայն հանուրի փրկության մեջ. «Եթե գրեսցի եւ ի փրկութիւն կարգեսցի հաղորդելոցն յայս կիրս կենաց, արասցես կամաւք քո, աւրինեալ, եւ ինձ համարեալ» (Գ,գ): Ավելին, եթե միստիկական փիլիսոփայության տեսանկյունից

⁸ St' u Кимелев Ю. А. Философия религии. Систематический очерк. М., Мысль, 1989:

փրկությունը ամբողջապես կախված է Աստծու բարեգթությունից և բացառապես հնարավոր է միայն աստվածային ողորմածության շնորհիվ, ապա, ըստ Նարեկացու, մարդու փրկությունը բացարձակ կախման մեջ դնել Աստծու գթասրտությունից կնշանակի անհնարին դարձնել այն:

Նարեկացին մարդու իրական փրկության գործընթացում Աստծու ողորմածությունը համարում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար և կարևորում է մարդու բանականության ու կամքի գործադրումը, կատարյալ գիտելիքի ձեռքբերումը, ինքնաճանաչման հասնելն ու մաքրագործվելը. «Այլ առցե՛ զայս կշտամբութիւն մաքուրն՝ նիւթ պսակաց՝ առ ի չիջանել անընտրողաբար յանձեռնհասն բարձրութենէ, եւ պատժապարտն՝ առիթ ազատութեան, որով ամբարձեալ ի կործանմանէ հոգեւորական մահուն՝ ապրեցի յուսով» (ԿԶ,ա): Նա մարդկային անարդարությունների դեմ մարտնչող մտածող է և մարդու բարոյական կատարելագործման խնդիրը խարսխում է սոցիալական հիմքի վրա. անհերքելի ու անժխտելի իրողություն, որը նույնպես դժվար է տեղավորել միաստիկական հայեցակարգի շրջանակներում: Եվ ինչպես չասել, որ ի տարբերություն Դանտեի, որը հանդերձյալ աշխարհում հայում էր այլոց տառապանքներին, ակնատես լինում ոմանց մաքրագործմանն ու դրախտային կյանքին արժանալուն, Նարեկացին, իրեն վերագրելով մարդու կատարած, կատարվող ու կատարվելիք հնարավոր բոլոր մեղքերն ու արատները, դրանով իսկ անցնելով երկրային դժոխքի՝ մեղսակից աշխարհի, մարդկային տառապանքների միջով, ձգտում է ինքնաճանաչմամբ ու ինքնախոստովանությամբ մարդ արարածին տանել մաքրագործման ճանապարհով, դարձնել նրան կատարյալ ու հասցնել իրական փրկության: Եվ այս առումով, անշուշտ, «Մատենանը» նաև **ինքնաճանաչման դասագիրք է:**

Վերջին հաշվով, Նարեկացին հավատացել է մարդու՝ կատարյալ դառնալու հնարավորությանը և իբրև ապացույց վկայակոչել իր անձը. «Արտաքուստ և ներքուստ հենց իրեն Աստծուն եմ հագել», միտք, որի ահավորությունից թեև զարհուրած, այդուհանդերձ հայտարարում է, թե մարդն իր արարչագործ էությամբ կարող է «...Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ...» (ԾԲ,գ): Ոմանց համար այս միտքը կարող է համարվել միաստիկայի բարձրակետը: Մակայն սա ասողը քրիստոնյա աստվածաբանն է ու վանականը, այլ ոչ թե միաստիկը...

Վերջապես, **հինգերորդ**. չպետք է անտեսել ու շրջանցել ստեղծագործության բուն էությունը, այն է՝ **ողբերգություն** լինելու իրողությունը, որի մասին հեղինակը, ինչպես արդեն նշեցինք, բազմիցս հիշեցնում է «Մատենաի» տարբեր գլուխներում: Այո՛, «Մատենանը» **Բանական Գոյի Ողբերգությունը** պատկերող, համամարդկային հնչեղություն ունեցող, **բազմաշերտ, բազմամասնյա ու բազմատեսանկյուն** ստեղծագործություն է, որը **նախ**՝ խարսխվում է հոգևոր երկվության, այն է՝ կատարյալի ու անկատարի, աստվածայինի և մարդկայինի,

հզորի և անզորի, առաքինության և արատի հակադրության վրա: «Եւ ահաւորութիւն էին՝ ընդ փոքրկութիւն բնութեանս ընդհարեալ» (Բգ,բ), - ասում է Նարեկացին ու միաժամանակ աղերսում Աստծուն, որ նա փոքր-ինչ մեղմի այդ ընդհարումը. - «Մի՛ ընդհարկանիր խստեութեամբ մեծոք ընդ փոքուս, լոյսդ ընդ ստուերականիս, բնութեամբ բարիդ՝ ընդ ի բնէ չարիս...» (ԺԷ,բ):

Ողբերգության **մյուս երեսը** իրական կյանքի և քրիստոնեական իդեալի միջև միջնադարում ծայրահեղության հասած օտարման ու խորացող հակասության արտացոլումն է և եկեղեցական միջնորդավորված հավատը անմիջական, բանական հավատով փոխարինելու միջոցով այդ հակասության հաղթահարման հայեցակարգի առաջադրումը: Այս առումով «Մատեանը» դոգմատիզացված հավատի, խաթարված բարոյական արժեքների ողբերգական վերապրումն է: Ահա թե ինչու Նարեկացին իր ողբերգության մատյանի գերխնդիրը համարում է հավատի նոր շենքի կառուցումը. «Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց զհաւատոցն շինված կառուցից» (Ժ,բ): Ավելին, բանաստեղծի խոսքերով ասած՝ իր «բազմաստեղնեան հրաշակերտությունը» ավետարանական գաղափարների, «կենսատու խորհուրդների» «հանդիսավոր մեկնաբանությունն է»՝ հանուն եկեղեցու բարենորոգման:

Ողբերգության **երրորդ շերտը** իր մեղավորությունը գիտակցող մարդու անզիջում պայքարն է ինքն իր դեմ, հոգևոր արատների ինքնաձաղկումն ու ինքնամերկացումը, որին հետևում են ներման տանջալից աղերսն ու ակնկալվող հաշտեցման բերկրանքը: Ընդ որում, տառապանք պատճառող այդ խորը ցավն այլևս անհատի ցավը չէ, այլ անձնական ես-ի միջով բեկված ու անանձնականի վերածված մարդկային ցեղի, մարդկության ցավը:

Ողբերգության **տեսանկյուններից** մեկն էլ վերաբերում է մարդկային բանականության հակասական բնույթի ու երկփեղկվածության, այն է՝ բանականության արարող ու ավերող բնույթի, ինչպես նաև գոյի էությանը հասու լինելու դրա անզորության, սահմանափակության ու բանականության հնարավորությունների չարաշահման սպառնալիքի գիտակցմանը: Ողբերգության **մյուս շերտն** էլ զուտ անձնական է, որը վերաբերում է Նարեկացու դառը ճակատագրին և ծածկագրություններով ներկայացվում է «Մատեանում»⁹:

Ինչնէ, իրական կյանքով ապրող, մարդու ցավն ու վիշտը իր սեփականը համարող, նրա երկրպիյին կեցության **ողբերգականությունը պատկերող**, քրիստոնեական եկեղեցու բարենորոգմանը հետամուտ, ոչ թե անձնական, այլ հանուրի փրկության համար Աստծուն աղերսողն ու բոլորի փոխարեն ՄԵՂԱ ասողը պարզապես չի կարող միստիկ լինել: Ասել կուզի, թե «Մատեանը» իր բնույթով միստիկային առնչվում է այնքանով, որքանով որ կրոնի ու կյանքի առօրեական ընկալման մեջ առկա է միստիկականն առհասարակ: Ի լրումն ասվածի՝ Նարեկացին հանճարեղ արվեստագետ է, իսկ արվեստագետն ու

⁹ Ողբերգության այս շերտը հանգամանալից ներկայացված է նարեկացիագետ **Հ. Ղ. Միքայելյանի** «Նարեկացու առեղծվածը» հոդվածում, տե՛ս Նարեկացիագիտական հետազոտություններ, էջ 35-67:

միստիկը, ինչպես Ֆ. Նիցշեն է ասում, «համադրելի չեն»¹⁰, այն է՝ անհամատեղելի իրողություններ են: Հիրավի, Նարեկացու մտածողության խորությունն ու մտքի թռիչքը չեն հանդուրժում ոչ մի սահման, ոչ մի կադապարում ...

Ամփոփում: Վերը շարադրվածից հետևում է, որ ի տարբերություն միջնադարում տիրապետող Եսակենտրոն (Հին Կտակարան) և Աստվածակենտրոն (Նոր Կտակարան) ըմբռնումների՝ Նարեկացին «Մատենանում» առաջադրում և զարգացնում է Մարդ-Աստված փոխհարաբերության մարդակենտրոն հայեցակարգ, որտեղ առկա է իրական կյանքի իմաստավորում՝ իր ամբողջ դրամատիզմով հանդերձ: Ասել կուզի, թե Մարդ-Աստված փոխհարաբերության նարեկյան արժևորումներն ամեննին չեն ներդաշնակվում միստիկայի ո՛չ ավանդական-միջնադարյան և ո՛չ էլ առավել ևս ժամանակակից ըմբռնումներին, քանզի նրա աշխարհայացքը իրատեսական է, գերհագեցած է սոցիալական բովանդակությամբ ու գործնական մարդասիրությամբ և վերջին հաշվով նաև գեղարվեստական, ընդհանրացված արտացոլումն է 10-րդ դարում Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական ու գաղափարական ծայրահեղ բարդ ու լարված իրավիճակի:

АЙК АРОЯН, НЕЛЛИ АРОЯН – Мистик ли Григор Нарекаци? – В статье переосмысливается господствующая в нарекациеведении точка зрения о мистицизме гениального армянского мыслителя средневековья Григора Нарекаци. В частности, показывается, что безоговорочное причисление Гр. Нарекаци в ряд мистиков противоречит духу и логике его шедевра «Матеев вохбергугеан», т.к., во-первых, в нем представляется человеческую жизнь в ее трагичности и возвышенности; во-вторых, в интерпретации этого уникального творения, вопреки воле автора, игнорировалось главное, а именно, трагедия человеческого бытия во всех аспектах его драматизма; в-третьих, в отличие от теоцентрического миропонимания господствующего в средневековье Гр. Нарекаци развивает антропоцентрическое миропонимание, в центре которого стоит реальный человек со своими тревогами и надеждами. «Матеев вохбергугеан» является отражением трагичности разумного бытия, т.е. показывает трагедию человека, оказывающегося на краю «духовной гибели»: это всеохватывающая трагедия человеческой жизни, которая возникает от неумолимой борьбы добра и зла, от столкновения человеческого и божественного, представленная посредством христианских символов. Нарекаци – певец боли и страданий рода человеческого. В основе его творения лежит боль, которая, взрываясь и бунтуя в душе гениального мыслителя, многое превращает в безличностное, придает личной трагедии общечеловеческий характер. В сущности проблема взаимоотношения Человека и Бога в интерпретации мыслителя никак не гармонизирует с мистическим пониманием, т.к. его конечная цель не личное спасение и слияние с Богом, как это свойственно мистицизму, а достижение спасения здесь и сейчас - в посюстороннем мире, путем духовного преобразования и самосовершенствования человека и человечества.

Ключевые слова: человек, Бог, вера, разум, мистика, спасение, трагедия, самосовершенствование, духовное преобразование, существование.

¹⁰ **Ницше Ф.** Так говорил Заратустра, Азбука, Азбука-Аттикус, 2022, с. 373.

HAYK HAROYAN, NELLI HAROYAN – Is Grigor Narekatsi a Mystic? – The article comes to prove the thesis that considering Gr. Narekatsi a mystic with no restraint would contradict the essence and logic of “The Book of Lamentations” as the book’s interpretation of the Man-God relation does not harmonize with the mystic conception of reliving the presence of God only conceptually. Narekatsi’s ultimate aim is to reach earthly soul-saving now and here via Man’s and Humanity’s spiritual and moral self-perfection. Thus, by his work Narekatsi comes into contact with mysticism as much as it is present in the everyday conception of religious belief and life whatsoever.

In this regard, the tragedy portrayed in “The Book of Lamentations” is multi-layered; on the one hand, it reflects human alienation from God and overcoming these controversies on the basis of unhindered reasonable faith as the true way of human perfection and redemption, on the other hand, it reflects mental dualism: the conflict between good and evil, human and divine.

The authors shed light on the proper philosophical-religious aspects of this many-sided work for the first time, stressing its novelty, namely the attempts to improve the doctrine of the church, the reform-minded approach to the interpretation of the problem of interrelation between faith and reason, a human and God.

Key words: *human, God, Mysticism, redemption, self-perfection, spiritual transformation, common sense, faith, existence, tragedy*

References

- Khachatryan P. Grigor Narekatsi in yev hay mijnadary, girk' arrajin, S.Ejmiatsin, 1996 (in Armenian).
 Kimelev Yu.A. Filosofiya religii. Sistematischeskiy ocherk. M., Mysl', 1989 (in Armenian).
 Mirzoyan H.Gh. Narekats'iagitakan hetazotut'yunner (Hodvatsneri zhoghovatsu), Yer., YePH hratarakch'ut'yun, 2010 (in Armenian).
 Narekats'i Gr., Matean voghbergut'ean, ashkhatasirut'yamb P.M.Khach'atryani yev A.A.Ghazinyani, Yer., HSSH GA hrat., 1985 (in Armenian).
 Nitsche F. Tak govoril Zaratustra, Azbuka, Azbuka-Attikus, 2022 (in Russian).
 Sovetskiy entsiklopedicheskiy slovar', 3-ye isd.-M.:Sov.entsiklopediya, 1985 (in Russian).

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Կյանքի կազմակերպման մշակույթը ընկալման համատեքստ է, ինչը մարդուն հնարավորություն է տալիս աշխարհը տեսնելու և քննելու իր ամբողջականության մեջ և նրա մի անկյունում կառուցելու գոյաբանական անվտանգության իր «ապաստարանը»: Բայց կյանքը հնարավորությունների փնտրտուքի մի անավարտ դրամա է, որի ինչ-որ հանգույցում արմատական փոխակերպումներն ու հնարավոր ապականումները համակեցության մշակութային համատեքստում կարող են մարդուն զրկել իր էմպիրիկ որպիսությունը բնութագրող այն գործոններից, որոնք նախկինում քիչ թե շատ ճշգրտությամբ ուրվագծում էին նրա կյանքի ներկան ու հեռանկարը, ինքնավարության չափն ու սահմանը: Խնդիրն այն է, որ ընկալման յուրաքանչյուր համատեքստ ունի նաև իրեն բնորոշ մի շարք մշակութային «հիվանդություններ», որոնք ոչ միայն կարող են ներսից կազմաքանդել տվյալ դարաշրջանի գոյաբանական «ապաստարանի» սոցիալական ու մարդաբանական հիմունքները, այլև մարդուն զրկել բնագանգական ու անդրանցական էությունից: Այս իրողությունից ելնելով՝ հոդվածում արդի անհատապաշտական (ինքն իրեն կողմնորոշված) հասարակության գոյաբանական կարգը դիտարկվում է իբրև «միասին ծերանալու» ընդհանրական մշակութային համատեքստ չունեցող մի համակեցություն, որտեղ մարդու ինքնավար կեցության կորստի միտումներն այլևս մարդաբանական մասշտաբի մարտահրավերներ են և ակնհայտորեն խարխլում են կյանքը տեսանելի հորիզոնում ապրելու՝ մարդու գոյության երբեմնի հիմունքները:

***Բանալի բառեր** – ինտերնետային կախվածություն, թվային առողջություն, սոցիալական ներգրավվածություն, թվային տեխնոլոգիաներ, մեդիագրագիտություն, սոցիալական մեկուսացում*

Լուսինե Ղազարյան – ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի հայցորդ

Лусине Казарян – Соискатель кафедры общей психологии ЕГУ

Lusine Ghazaryan – Applicant at the Chair of General Psychology YSU

Էլ. փոստ՝ lusine.ghazaryan@ysu.am <http://orcid.org/0009-0008-3378-8005>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 01.09.2025

Գրախոսվել է՝ 12.09.2025

Հաստատվել է՝ 24.10.2025

© The Author(s) 2025

Խնդրի տեսական վերլուծություն: Քիմբերլի Յանգն առաջիններից էր, ով կիրառեց «կախվածություն» հասկացությունը ինտերնետի նկատմամբ՝ առաջարկելով ինտերնետային կախվածության չափանիշների մի շրջանակ: Նրա մշակած «Ինտերնետային կախվածության թեստը» («Internet Addiction Test») մինչ օրս համարվում է ինտերնետային կախվածությունն ախտորոշող կարևոր գործիքներից մեկը: Յանգը շեշտում է. «Ինտերնետը դառնում է կախվածության օբյեկտ, երբ այն դադարում է ծառայել որպես գործիք և դառնում է նպատակ»¹: Բրիտանացի ճանաչված հոգեբան Մարկ Գրիֆիթսը, ով հայտնի է կախվածությունների հոգեբանական ասպեկտների վերաբերյալ իր ուսումնասիրություններով, նկատում է, որ ինտերնետային կախվածության դեպքում առկա են ուժեղացված հաճույքի ակնկալիքներ, ինչպես նաև իրական խնդիրներից խուսափելու հոգեբանական դրդապատճառներ¹²: Վերջին տասնամյակում իրականացված բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ ինտերնետային կախվածությունը շատ բազմաձև է դրսևորվում՝ պայմանավորված մասնագիտական միջավայրով: Փորձենք անդրադառնալ մասնագիտական մի քանի ոլորտների՝ հիմք ընդունելով մասնագիտական գործունեության բնույթը, առցանց ներգրավվածության ինտենսիվություն:

1. **Առողջապահական ոլորտ:** Բժիշկներն ու բուժքույրերը հաճախ գործառնում են թվային տեխնոլոգիաներ աշխատանքի նպատակով, սակայն օրվա մեծ մասն անցկացնելով առցանց միջավայրում՝ չեն կարողանում սահմանել աշխատանքային և անձնական կյանքի միջև սահմանը: Արդյունքում դիտվում են ինտերնետային կախվածության, այրման սինդրոմի, դեպրեսիայի ու անբնության դրսևորումներ³:

2. **Կրթության ոլորտ:** Վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ուսուցիչների շրջանում նույնպես ինտերնետային կախվածության ռիսկը էապես աճել է՝ պայմանավորված կրթության մեջ տեխնոլոգիական նորարարությունների պահանջարկի բարձրացմամբ: Ինտերնետի չարաշահումը, աշխատանքի ընթացում անկանոն օգտագործումը հաճախ հանգեցնում են սոցիալական մեկուսացման, աշխատանքի հանդեպ մոտիվացիայի նվազման⁴:

3. **SS և ինժեներական ոլորտներ:** Տեխնոլոգիական ոլորտում աշխատող մասնագետների շրջանում կախվածությունը հաճախ չի դիտարկվում որպես

¹ Young, K. S. (1998). Caught in the Net: How to Recognize the Signs of Internet Addiction--and a Winning Strategy for Recovery. Wiley.

² Տե՛ս Griffiths, M. D. (2005). A "Components" Model of Addiction within a Biopsychosocial Framework. Journal of Substance Use, 10, 191-197. <http://dx.doi.org/10.1080/14659890500114359>

³ Տե՛ս Kuss, D. J., & Lopez-Fernandez, O. (2020). Internet addiction and problematic internet use: A systematic review of clinical research. World Journal of Psychiatry, 10(1), 10-21:

⁴ Տե՛ս Demirci, K., Akgönül, M., & Akpınar, A. (2019). Relationship of smartphone use severity with sleep quality, depression, and anxiety in university students. Journal of Behavioral Addictions, 7(2), 446-457. <https://doi.org/10.1556/2006.7.2018.122>

խնդիր, քանի որ թվային միջոցների օգտագործումը հիմնականում համընկնում է աշխատանքի բովանդակության հետ: Սակայն վերլուծությունները ցույց են տալիս, որ մասնագետների մի մասը ոչ աշխատանքային ժամերին նույնպես մեծ չափով օգտագործում է ինտերնետը՝ հավասարակշռելու համար սոցիալական և հուզական կարիքները⁵:

Հետազոտողներից շատերն այն կարծիքին են, որ ինտերնետային կախվածությունը պետք է դիտարկվի ոչ միայն որպես անհատական, այլև սոցիալ-մշակութային երևույթ: Թվային դարաշրջանի հասարակություններում աճում է սոցիալական մեկուսացման մակարդակը, և մարդիկ հաճախ նախընտրում են վիրտուալ հաղորդակցումն իրականի փոխարեն: Բազմաթիվ գիտական աղբյուրներում շեշտադրվում է, որ կախվածությունը կապված է նաև մրցակցության մշակույթի և ցանցային ներկայության պահանջի հետ: Ինտերնետը դառնում է ինքնության կայունացման հարթակ, որում մարդը կառուցում է իր սոցիալական կերպարը՝ ընտրելով, խմբագրելով ու ներկայացնելով միայն ցանկալի կողմերը, ինչն առաջացնում է իրական և վիրտուալ անձի միջև անհամապատասխանություն, հանգեցնում ինքնության ճգնաժամի, ինքնարժեքի կախվածության⁶: Այս իրողություններին գալիս են հակազդելու բազմաթիվ միջոցներ, որոնք նպատակաուղղված են մասնագիտական միջավայրում ինտերնետային կախվածության կանխարգելմանն ու կառավարմանը: Արդեն իսկ տարբեր կազմակերպություններ ներմուծում են թվային հիգիենայի քաղաքականություն. սահմանում են ինտերնետի օգտագործման ժամանակի կարգավորումներ, իրականացնում են մեդիագրագիտության սեմինարներ: Առաջ է քաշվում նաև աշխատավայրում հոգեբանների և սոցիալական աշխատողների ներգրավման անհրաժեշտությունը՝ կախվածության հոգեւոցիալական հիմքերը վեր հանելու և աշխատակիցներին աջակցության ծրագրերում ընդգրկելու նպատակով⁷: Մասնագիտական միջավայրերում ինտերնետային կախվածության դեմ պայքարը դիտարկվում է ոչ միայն անհատի վարքային փոփոխության մակարդակով, այլև համակարգային մոտեցումներով: Հատկապես կարևոր է կազմակերպությունների ներգրավվածությունը թվային ա-

⁵ Sté u **Wartberg, L., & Lindenberg, K.** (2022). Predictors of problematic internet use among adolescents: A longitudinal study. *Computers in Human Behavior*, 125, 106969.
<https://doi.org/10.1016/j.chb.2021.106969>

⁶ Sté u **Brand, M., Wegmann, E., Stark, R., Müller, A., Wölfling, K., Robbins, T. W., & Potenza, M. N.** (2021). The Interaction of Person-Affect-Cognition-Execution (I-PACE) model for addictive behaviors: Update, generalization to addictive behaviors beyond internet-use disorders, and specification of the process character of addictive behaviors. *Neuroscience & Biobehavioral Reviews*, 104, 1–10.
<https://doi.org/10.1016/j.neubiorev.2019.06.032>

⁷ Sté u **Montag, C., Sindermann, C., & Becker, B.** (2023). Digital detox: Concepts, benefits, and challenges for implementation. *Current Opinion in Psychology*, 51, 101603.
<https://doi.org/10.1016/j.copsyc.2023.101603>

ռողջության ապահովմանն ուղղված բազմաբաղադրիչ քաղաքականությունների մշակման և կիրառման գործընթացում: Թվային առողջությունը ժամանակակից հասարակության հոգեբանական բարեկեցության նոր կատեգորիա է, որը ներառում է ինտերնետի օգտագործման վերահսկվող, նպատակային ու առողջ ձևեր: Համաձայն Ամերիկայի հոգեբանական ասոցիացիայի՝ թվային առողջությունը պետք է դիտարկել որպես մարդկանց կարողություն՝ օգտագործելու թվային տեխնոլոգիաներն առանց հոգեկան ծանրաբեռնվածության, խանգարող սովորությունների կամ սոցիալական մեկուսացման⁸: Իսկ մեդիագրագիտությունը՝ որպես կրթական, մշակութային և հաղորդակցական հմտություն, կարևոր գործիք է ինտերնետային կախվածության կանխարգելման համար: Որպես գործնական լուծում՝ միջազգային փորձը ընդգծում է մեդիագրագիտության սեմինարների, գործնական աշխատարանների, հաղորդակցական մշակույթի դասընթացների անհրաժեշտությունը՝ ուղղված թվային ինքնագիտակցության բարձրացմանը: Մասնագիտական ոլորտներում, որտեղ ինտերնետի օգտագործումը աշխատանքի անբաժանելի մասն է, կանխարգելման ռազմավարությունները պետք է լինեն համապարփակ և շարունակական: Տեսականորեն արդյունավետ են համարվում հետևյալ մոտեցումները.

1. **Թվային հիգիենայի քաղաքականություն**, որը ներառում է աշխատանքային ժամերին սոցիալական ցանցերից օգտվելու սահմանափակում, տեխնոլոգիական դադարների կիրառում:

2. **Մշտադիտարկում և գնահատում**՝ ինտերնետային կախվածության թեստավորումների պարբերական իրականացում՝ ապահովելով կանխատեսելիություն և ռիսկերի վաղ բացահայտում:

3. **Հոգեբանական աջակցության հասանելիություն**՝ աշխատանքային միջավայրում հոգեբանի, սոցիալական աշխատողի կամ մենթորի ներկայություն, ինչը կարևոր է անհատական ինքնագնահատման, սթրեսի նվազեցման և կախվածության կառավարման հմտությունների ձևավորման գործում⁹:

Պետք է նշել, որ ինտերնետային կախվածությունը չի ձևավորվում զուտ տեխնոլոգիական հագեցվածության այն աշխատանքային գործընթացում կամ կիրառելու պայմաններում: Խնդիրը հաճախ պայմանավորված է խորքային հոգեւոցիալական կարիքներով՝ սթրեսի և իրական կյանքի խնդիրներից փախուստի միտում, հաղորդակցության կարիք: Հետևաբար, կանխարգելման և կառավարման ռազմավարությունները պետք է ուղղված լինեն ոչ միայն վարքային վերահսկմանը, այլև ներքին հուզական և սոցիալական ռեսուրսների զարգացմանը: Այսպիսով, ինտերնետային կախվածությունը բազմաբնույթ է

⁸ <https://www.apa.org/monitor/2011/03/internet>

⁹ Տե՛ս **Montag, C., Sindermann, C., & Becker, B.** (2023). Digital detox: Concepts, benefits, and challenges for implementation. *Current Opinion in Psychology*, 51, 101603. <https://doi.org/10.1016/j.copsyc.2023.101603>

համապարփակ հոգեառօրյալական խնդիր է, որի արդյունավետ հաղթահարման հիմքում պետք է դրվի անհատական ինքնագիտակցության բարձրացումը՝ որպես ներքին ռեսուրս՝ համադրված մասնագիտական միջավայրի նպատակային քաղաքական բարեփոխումների և արդիական մշակութային պատկերացումների հետ: Մասնագիտական ասպեկտների ընդգրկումը, սկսած թվային հիգիենայից մինչև հոգեբանական աջակցության համակարգերի ներդրում, ստեղծում է կայուն բազա, որտեղ տեխնոլոգիական գործիքներն օգտագործվում են մարդու կենսագործունեությունն օպտիմալացնելու և աշխատանքային գործընթացը կազմակերպելու համար: Այս մոտեցումն է, որ ապահովում է աշխատանքային միջավայրի առողջությունը, բարձրացնում անձնական և թիմային արդյունավետությունը, ինչպես նաև նպաստում թվային դարաշրջանի մարտահրավերների պայմաններում հոգեկան բարեկեցության պահպանմանը:

Կարևորվում են նաև ինտերնետային կախվածության վիճակագրական գնահատումը և մասնագիտական խմբերի շրջանում դրա ազդեցության գործոնների վերլուծությունը: Ներկայացվող գործնական հետազոտությունը նպատակ ունի լրացնելու գիտական ճանաչողության բացը՝ ուսումնասիրվող թեմայի շրջանակում տրամադրելով հստակ պատկեր և հիմք՝ հետագա կանխարգելիչ միջոցառումների մշակման համար:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ինտերնետային կախվածության մակարդակը և դրա դրսևորումները 30-50 տարեկան տարբեր մասնագիտական խմբերի ներկայացուցիչների շրջանում:

Հետազոտության մեթոդներ: Կիրառվել են քանակական հետազոտության մեթոդներ՝ տվյալների հավաքագրման համար մշակվել է երկու հիմնական գործիք.

1. Հարցաթերթիկ. նախատեսված է ինտերնետի օգտագործման կախվածության մակարդակի օբյեկտիվ գնահատման համար: Հարցաթերթիկների ձևակերպումն իրականացվել է միջազգային ստանդարտներին համապատասխան՝ տվյալների հուսալիության և վավերականության ապահովման նպատակով:

2. Քիմբերլի Յանգի թեստ. օգտագործվում է որպես ինտերնետի նկատմամբ կախվածության որոշիչ մեթոդ՝ արձանագրելով հոգեբանական և վարքային չափանիշների աստիճանը:

Հետազոտության կազմակերպում և ընտրանքը: Հետազոտության ընտրանքը կազմել է 50 մասնակից, որոնց տարիքը 30-50 է՝ ընդգրկելով մասնագիտական տարբեր խմբեր՝ ուսուցիչներ, բուժաշխատողներ, ՏՏ ոլորտի մասնագետներ: Ընտրված են անձինք, ովքեր հիմնականում ակտիվ ինտերնետ օգտագործողներ են, ինչը թույլ կտա վերլուծել մասնագիտական գործունեության համատեքստում ինտերնետային կախվածության առանձնահատկությունները: Հարցումն ու թեստավորումն անցկացվել են առցանց, որի ընթացքում հարցվողները ստացել են մանրամասն հրահանգներ՝ հարցաթերթիկները լրացնելու վերաբերյալ:

Հարցաթերթիկային հետազոտության արդյունքները տե՛ս ստորև:

Աղյուսակ 1

Ընտրանքի ընդհանուր տվյալներ

Մեռ	• 28 կին • 22 տղամարդ
Տարիք	• Միջին տարիք՝ 39
Մասնագիտություն	• Ուսուցիչ՝ 16 • Բժիշկ/բուժքույր՝ 18 • SS մասնագետ՝ 16
Աշխատանքային ստաժ (միջին՝ 11.6 տարի)	• 1–5 տարի՝ 8 • 6–15 տարի՝ 25 • 15 տարի՝ 17
Օրվա ընթացքում ինտերնետի օգտագործում	• Մինչև 2 ժամ՝ 5 • 2-4 ժամ՝ 14 • 4-6 ժամ՝ 18 • 6 ժամ և ավելի՝ 13

Ընտրվել են տարբեր ոլորտներ ներկայացնող մասնագետներ՝ ուսուցիչներ, բուժաշխատողներ և SS ոլորտի աշխատակիցներ, ինչը հնարավորություն է տալիս համադրելու մասնագիտական գործունեության առանձնահատկություններն ու դրանց հնարավոր ազդեցությունը ինտերնետի օգտագործման սովորույթների վրա: Ընտրանքի սեռային և տարիքային բաշխվածությունը հավասարակշռված է, ինչը մեծացնում է տվյալների վերլուծության վստահելիությունը: Ուշագրավ է, որ մասնակիցների գերակշիռ մասն օրական ինտերնետից օգտվում է չորս և ավելի ժամ, ինչը կարող է վկայել նաև հնարավոր կախվածության նախադրյալների մասին:

Աղյուսակ 2

Վարքային բնութագրիչներ (1–5 սանդղակ. 1՝ երբեք – 5՝ մշտապես)

Հարց / ցուցիչ	Միջին գնահատական
Զգում եմ մեղավորություն ինտերնետում շատ ժամանակ անցկացնելիս	3.9
Աշխատանքային առաջադրանքներից շեղվում եմ ինտերնետի պատճառով	3.6
Ստուգում եմ իմ էլ. փոստը / սոց. ցանցերը առանց անհրաժեշտության	4.2
Նյարդայնանում եմ, երբ ցանցը հասանելի չէ	3.8
Ինտերնետը օգտագործում եմ սթրեսից ազատվելու համար	4.1

Աղյուսակում ներկայացված վարքային ցուցիչները վկայում են ինտերնետային կախվածության բարձր ռիսկի մասին: Ամենաբարձր միջին գնահատականները կապված են անընդհատ և անհարկի օգտագործման դրսևորումների հետ, հատկապես՝ էլ. փոստի և սոցիալական ցանցերի պարբերաբար ստուգման և սթրեսի հաղթահարման նպատակով ինտերնետի օգտագործման հետ: Բավականին բարձր է նաև նյարդային արձագանքը ցանցի բացակայությանը: Այս ամենը մատնանշում է, որ ինտերնետը ոչ միայն գործնական, այլև հուզական կախվածության աղբյուր է մասնակիցների մեծ մասի համար:

Աղյուսակ 3

Ինքնագնահատման ռուբրիկ

Ինձ մոտ առկա է ինտերնետային կախվածություն.	- Այո՝ 18 - Հավանաբար՝ 22 - Ոչ՝ 10
Եղել են դեպքեր, երբ փորձել եմ սահմանափակել ինտերնետի օգտագործումը.	- Այո՝ 31 - Ոչ՝ 19

Ինքնագնահատման տվյալները վկայում են, որ մասնակիցների զգալի մասը՝ 80%, փաստում է, որ ինքը ունի ինտերնետային կախվածություն կամ կասկածում է դրա առկայության մասին: 62%-ը փորձել է սահմանափակել օգտագործումը, ինչը հաստատում է, որ խնդիրը ոչ միայն գիտակցված է, այլ նաև փորձ է արվել վերահսկելու այն: Այս հանգամանքը վկայում է կախվածության ձևավորման իրական վտանգի մասին:

Աղյուսակ 4

Վերլուծություն ըստ մասնագիտական խմբերի

Մասնագիտություն	Ցուցիչ
Ուսուցիչներ	- Օգտագործման միջին տևողություն՝ 3.8 ժամ - Բարձր ինքնագիտակցություն կախվածության վերաբերյալ (67%-ը նշել է «հավանաբար» կամ «այո»)
ՏՏ մասնագետներ	- Օգտագործման միջին տևողություն՝ 6.1 ժամ 75%-ը նշում է, որ աշխատանքից հետո ևս օգտագործում է ինտերնետը - Ինքնագնահատական կախվածության վերաբերյալ՝ 65%-ը նշել է «ոչ» - Սթրեսի հաղթահարման համար ինտերնետի օգտագործումը՝ 24%
Բժիշկներ/բուժքույրեր	- Օգտագործման միջին տևողություն՝ 4.2 ժամ - Նյարդայնություն ցանցի բացակայության դեպքում՝ 62% - Հոգնածության և մասնագիտական այրման ֆոնին 58%-ը օգտագործում է ինտերնետը՝ հանգստանալու համար

Մասնագիտական խմբերի միջև դիտվում են ինտերնետի օգտագործման և կախվածության ընկալման տարբերություններ: SS մասնագետները ամենաշատն են օգտագործում ինտերնետը (միջին՝ 6.1 ժամ), սակայն հիմնականում չեն փաստում իրենց կախվածության հանգամանքը, հնարավոր է՝ մասնագիտական գործունեության նորմալացման պատճառով: Ուսուցիչները համեմատաբար քիչ են օգտագործում, բայց ցուցաբերում են ամենաբարձր ինքնագիտակցություն կախվածության վերաբերյալ (67%): Բժիշկներն ու բուժքույրերը հիմնականում օգտագործում են ինտերնետը հոգնածությունից և սթրեսից վերականգնվելու նպատակով: Այս տվյալները վկայում են, որ մասնագիտական միջավայրը զգալի ազդեցություն ունի ինտերնետի օգտագործման պատճառների և կախվածության ինքնագնահատականի վրա: Այսպիսով, այս հետազոտական թեստը ցույց է տալիս, որ ինտերնետային կախվածության հիմնական գործոններն են.

- **Աշխատանքի բնույթի և անձնական կյանքի հավասարակշռության անհամապատասխանությունը**, հատկապես SS և առողջապահական ոլորտում:
- **Սթրեսի, հոգնածության ու անհանգստության պայմաններում** ինտերնետը վերածվում է խթանող միջոցի:
- **Ինքնագնահատականը հաճախ չի համապատասխանում իրական վարքագծին**. մասնագետներից շատերը չեն ճանաչում կախվածությունը՝ այն վերագրելով իրենց աշխատանքի պահանջներին:
- Ուսուցիչները և բուժաշխատողները ավելի հաճախ են ընդունում կախվածության առկայությունը՝ ի տարբերություն SS մասնագետների, ովքեր այն նորմալացնում են:

Քիմբերլի Յանգի «Internet Addiction Test» (IAT)

Թեստը բաղկացած է 20 հարցից, որոնք գնահատվում են 1-ից մինչև 5 (1՝ երբեք, 5՝ միշտ) սանդղակով: Ընդհանուր միավորը սահմանում է ինտերնետային կախվածության մակարդակը:

Աղյուսակ 5


Քիմբերլի Յանգի թեստավորման բնութագրիչները

20-49 միավոր	կախվածություն առկա չէ
50-79 միավոր	միջին չափի կախվածություն
80-100 միավոր	խորը ինտերնետային կախվածություն

Այս թեստի նկարագրությունը պայմանավորված է նրանով, որ դրա արդյունքները առաջին անգամ են հրապարակվում հայերեն: Նախօրոք իրականացվել է «IAT» թեստի երկկողմանի թարգմանություն փորձնական պիլոտային փորձագետների և ուսանողների մասնակցությամբ:

Նկար 1

IAT թեստի հետազոտության արդյունքները



Աղյուսակ 6

Մասնագիտական խմբերի համեմատական վերլուծություն

Ուսուցիչներ	Միջին միավոր՝ 63 70%-ն ունի միջին կամ խորը կախվածության նշաններ
SS մասնագետներ	Միջին միավոր՝ 72 60%-ն ունի միջին կամ խորը կախվածության նշաններ
Բժիշկներ և բուժքույրեր	Միջին միավոր՝ 59 55%-ը միջին կախվածության գոտում են

Քիմբերլի Յանգի թեստի արդյունքները հաստատում են, որ մասնակիցների մեծ մասը (50%) առնվազն միջին մակարդակի ինտերնետային կախվածության նշաններ ունի, ինչը համընկնում է ավելի վաղ արված հարցաթերթիկային հետազոտության արդյունքներին:

• Միջին և խորը կախվածության հիմնական պատճառներն են՝ սթրեսի հաղթահարում, սոցիալական մեկուսացում և աշխատանքային ծանրաբեռնվածություն:

• SS մասնագետները ամենաբարձր միավորներն ունեն, ինչը ընդգծում է աշխատանքի և անձնական կյանքի սահմանի անհստակությունը:

• Ուսուցիչների և առողջապահության ոլորտի մասնագետների շրջանում նկատվում է զգուշավոր վերաբերմունք կախվածության նկատմամբ, ինչը կարևոր է վաղ հայտնաբերման համար:

Այսպիսով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վաղ կանխարգելման, հոգեբանական աջակցման և թվային հիգիենայի խթանման ծրագրերին, որոնք պետք է հարմարեցվեն ըստ մասնագիտական խմբերի առանձնահատկությունների:

Եզրակացություն: Քիմբերլի Յանգի ինտերնետային կախվածության թեստի և հարցաթերթիկային հետազոտության արդյունքները փոխկապակցված են և լրացնում են իրար՝ ստեղծելով մասնագիտական խմբերի ինտերնետային վարքագծի և հնարավոր կախվածության համակողմանի պատկերը: Մասնագիտությամբ պայմանավորված՝ գործնական պահանջներն ու սթրեսի մակարդակը զգալի ազդեցություն ունեն ինտերնետային օգտագործման չափի և բնույթի վրա: Քիմբերլի Յանգի թեստի տվյալները ցույց են տալիս, որ 70% մասնակիցներ առնվազն միջին կամ խորը մակարդակի ինտերնետային կախվածության նշաններ են ունենում, իսկ հարցաշարը բացահայտում է, որ աշխատանքային և անձնական ժամային ռեսուրսը սահմանազատելու դժվարությունները, հուզական լարվածությունը մեղմելու կարիքը, ինչպես նաև թվային հաղորդակցության սոցիալական կարիքները խթանում են ինտերնետի ոչ հավասարակշռված օգտագործումը: Այս արդյունքները ընդգծում են կախվածության բազմակողմանի բնույթը՝ հոգեբանական, սոցիալական և մասնագիտական բաղադրիչներով: Համապատասխանաբար, անհրաժեշտ է նպատակային միջոցառումներ մշակել, որոնք կներառեն թվային հիգիենայի խթանումը, սթրեսի կառավարումը, հուզական աջակցությունը և աշխատանքային ժամանակի արդյունավետ բաշխումը: Այսպիսով, համակցված վերլուծությունը վկայում է ինտերնետային կախվածության բարդության մասին և ընդգծում է կանխարգելման և միջամտության անհրաժեշտությունը մասնագիտական միջավայրերում:

ЛУСИНЕ КАЗАРЯН – Сравнительный анализ профессиональных предпосылок формирования интернет-зависимости. – В данной статье мы рассмотрели влияние профессиональной деятельности на развитие интернет-зависимости на основе психологических теорий и сравнительного анализа опроса и тестирования специалистов. В эпоху цифровых технологий использование интернета стало неотъемлемой частью нашей жизни, существенно изменив нашу работу, образование и социальную среду. Однако чрезмерное использование интернета может привести к интернет-зависимости, которая в настоящее время признана серьезной проблемой психологического и социального здоровья. Эта проблема особенно актуальна в профессиональной среде, где эффективность и психическое благополучие сотрудников тесно связаны с цифровыми технологиями, постоянной онлайн-доступностью, увеличением рабочего времени и снижением границ между личной и профессиональной жизнью. Также наблюдаются изменения в структуре мышления, эмоциональной устойчивости и способности к принятию решений в условиях перегрузки информацией.

Изучение интернет-зависимости в последние годы набирает обороты, однако специфика формирования зависимости в профессиональной среде и ее влияние на мотивацию, стрессоустойчивость, а также на коммуникативные навыки и способность к концентрации еще недостаточно изучены.

Данная статья посвящена интернет-зависимости в различных профессиях и направлена на выявление ключевых факторов риска, зависящих от специфики трудовой деятельности.

Ключевые слова: интернет-зависимость, цифровое здоровье, социальная вовлеченность, цифровые технологии, медиаграмотность, социальная изоляция

LUSINE GHAZARYAN – Comparative Analysis of Professional Characteristics of Internet Addiction Formation.— In this article, we examined the influence of professional activity on the development of Internet addiction based on psychological theories and a comparative analysis of surveys and testing of specialists. In the article, we examined the influence of the features of professional activity on the formation of Internet addiction based on comparative analysis and psychological theories. In the digital age, the use of the Internet has become an integral part of life, significantly changing our work, educational and social environment. At the same time, excessive Internet use leads to Internet addiction, which is currently considered an urgent problem of psychological and social health. This problem is especially relevant in the professional environment, where the work efficiency and mental health of employees are closely linked to digital technologies. The study of Internet addiction has been gaining momentum in recent years, but the specifics of addiction formation in the professional environment and its impact have not yet been studied deeply enough. The article is devoted to Internet addiction in various professions.

Key words: Internet addiction, digital health, social engagement, digital technologies, media literacy, social isolation

References

- Brand, M., Wegmann, E., Stark, R., Müller, A., Wölfling, K., Robbins, T. W., & Potenza, M. N. (2021). The Interaction of Person-Affect-Cognition-Execution (I-PACE) model for addictive behaviors: Update, generalization to addictive behaviors beyond internet-use disorders, and specification of the process character of addictive behaviors. *Neuroscience & Biobehavioral Reviews*, 104, 1–10. <https://doi.org/10.1016/j.neubiorev.2019.06.032>
- Demirci, K., Akgönül, M., & Akpınar, A. (2019). Relationship of smartphone use severity with sleep quality, depression, and anxiety in university students. *Journal of Behavioral Addictions*, 7(2), 446–457. <https://doi.org/10.1556/2006.7.2018.122>
- Griffiths, M. D. (2005). A “Components” Model of Addiction within a Biopsychosocial Framework. *Journal of Substance Use*, 10, 191–197. <http://dx.doi.org/10.1080/14659890500114359>
- Kuss, D. J., & Lopez-Fernandez, O. (2020). Internet addiction and problematic internet use: A systematic review of clinical research. *World Journal of Psychiatry*, 10(1), 10–21. <https://doi.org/10.5498/wjp.v10.i1.10>
- Wartberg, L., & Lindenberg, K. (2022). Predictors of problematic internet use among adolescents: A longitudinal study. *Computers in Human Behavior*, 125, 106969. <https://doi.org/10.1016/j.chb.2021.106969>
- Young, K. S. (1998). *Caught in the Net: How to Recognize the Signs of Internet Addiction--and a Winning Strategy for Recovery*. Wiley.
- Montag, C., Sindermann, C., & Becker, B. (2023). Digital detox: Concepts, benefits, and challenges for implementation. *Current Opinion in Psychology*, 51, 101603. <https://doi.org/10.1016/j.copsyc.2023.101603>
- <https://www.apa.org/monitor/2011/03/internet>

Խմբագրության հասցեն՝ Երևան, Խ. Աբովյան փող., 52ա
Адрес редакции: Ереван, ул. Абовяна 52а
Address: 52a, Kh. Abovyan str., Yerevan

Գալք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հրատարակչական խմբագիր և
թողարկման պատասխանատու
Издательский редактор и ответ-
ственный выпуска
Publishing Editor and Issued by

Արմեն Հովակիմյան

Армен Овакимян

Armen Hovakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան

Гаяне Григорян

Gayane Grigoryan

Տեխնիկական խմբագիր՝
Технический редактор:
Technical Editor:

Աննա Մկրտչյան

Анна Мкртчян

Anna Mkrtchyan

Ստորագրված է տպագրության 27. 10. 2025: